ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XVI

ԵՐԵՎԱՆ

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է
«ՀԱՅՆԱՎԹԱՄԹԵՐՔ»
ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

XVI

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 1996

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST

XVI

„GITUTYUN" PUBLISHING HOUSE NAS PEPUBLIC OF ARMENIA
YEREVAN 1996

11426

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XVI

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1996

ԳՄԴ 63 . 3(0)
Մ 663

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ասատրյան Գ. Ս., Խամոյան Մ. Հ., Հովհաննիսյան Ն. Հ. (նախագահ),
Սահակյան Ռ. Դ.

Մ 663 *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ.—Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996.—Պր. XVI.—1996. 270 էջ:*

Ժողովածուում քննարկվում են մերձավորարևելյան տարածաշրջանի ժամանակակից հարցեր, այդ թվում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խնդիրներ, տարածաշրջանի երկրների միջնադարյան, նոր և նորագույն պատմության, ինչպես նաև պատմագրության քիչ լուսաբանված էջեր և այլն: Պատշաճ տեղ է գրավել նաև արևելյան բանասիրության՝ լեզվի և գրականության հարցերի ուսումնասիրությունը:

ԳՄԴ 63 . 3(0)

ԱՌԱՋԱԲԱՆ

Տասնամյակներ շարունակ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը հրատարակում է «Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարը։ Քառորդ դարի ընթացքում ինստիտուտի արաբագետների, թուրքագետների, իրանագետների և քրդագետների ջանքերով հրատարակվել է մատենաշարի տասնհինգ հատոր, որտեղ զետեղված են մենագրական ուսումնասիրություններ, հոդվածներ, հաղորդումներ և գիտական բնույթի այլ նյութեր։ Մատենաշարի հրատարակությունը, որը կրել է ոչ թե պատահական, այլ ծրագրված, պարբերական բնույթ, մի կողմից խթանել է արևելագիտական ուսումնասիրությունները մեր հանրապետությունում, իսկ մյուս կողմից՝ հարազատորեն արտացոլել, ինչպես հայելու մեջ, հայ արևելագիտության մակարդակը, նրա առջև կանգնած խնդիրները և զարգացման ուղղություններն ու հեռանկարները։ Եվ եթե մեր հանրապետությունում ստեղծվել է պրոֆեսիոնալ արևելագետների մի բույլ, որով մենք իրավամբ հպարտանում ենք, ապա դրանում նշանակելի է սույն մատենաշարի, ինչպես նաև ինստիտուտի կողմից հրատարակվող «Հին Արևելք» և «Կովկաս և Բյուզանդիա» մատենաշարերի դերը։

Նման մատենաշարի հրատարակումը բացառիկ երևույթ էր ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նախկին խորհրդային հանրապետություններում՝ Ադրբեջանում, Վրաստանում, Ուզբեկստանում, Տաջիկստանում և մյուս հանրապետություններում գործող ոչ մի արևելագիտական կենտրոն չի ունեցել նման բնույթի հրատարակություն։

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարը մեծ հեղինակություն է վայելում արևելագետների

լայն շրջանակներում. որին մեծապես նպաստել է նրանում հրատարակված նյութերի գիտական բարձր մակարդակը, ինքնատիպությունը, հեղինակների սեփական մոտեցումները քննարկվող պրոբլեմների նկատմամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ նրանում զետեղված աշխատությունները հրատարակվել են ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն, շատ հաճախ ունենալով անգլերեն, երբեմն նաև արևելյան լեզուներով ամփոփումներ։ Դա ընդլայնել է ընթերցողների լսարանը։

Այդ հեղինակության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Մոսկվայի և Լենինգրադի շատ արևելագետներ մեծ հաճույքով տպագրվել են մատենաշարի տարբեր հատորներում։

Մատենաշարի վերջին՝ 15-րդ հատորը լույս է տեսել 1989 թ., որից հետո այն ընդհատվել է։ Դա կապված էր այն արմատական փոփոխությունների հետ, որ տեղի ունեցան 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականների սկզբներին։ Մենք նկատի ունենք ԽՍՀՄ-ի փլուզումը և Հայաստանի անկախ Հանրապետության կազմավորումը, քաղաքական, սոցիալ-տնտեսական փոփոխությունները և նոր իրադրության ստեղծումը, որ հաջորդեց դրան։ Երիտասարդ հանրապետությունը հայտնվեց բացառիկ դժվար կացության մեջ, որի հետևանքով խիստ սահմանափակվեցին գիտությունը ֆինանսավորելու հնարավորությունները։ Դա արտահայտվեց նաև գիտական ուսումնասիրությունների հրատարակման հարցում։

Այժմ Արևելագիտության ինստիտուտը վերսկսում է «Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի հրատարակությունը՝ ընթերցողի դատին հանձնելով 16-րդ հատորը։ Նրա հրատարակումը հնարավոր եղավ հայրենի գիտությանը նվիրված հովանավորների օգնության շնորհիվ, որոնց հայ արևելագետները իրենց երախտագիտության խոսքն են ուղղում։

Կցանկանայինք լուսաբանել մի կարևոր հարց ևս։

ԽՍՀՄ-ի քայքայումից և Հայաստանը անկախ պետություն հռչակվելուց հետո, փոխվեց հայ արևելագիտության կարգավիճակը։ Մինչ այդ հայ արևելագիտությունը կազմում էր ընդհանուր խորհրդային արևելագիտության օրգանական մասը, որի հիմնական ուղղությունները և խնդիրները սահմանվում էին Մոսկվայում, համապատասխան կուսակցական և կառավարական մար-

միննեյրի կողմից։ Եվ հայ արևելագետները հարկադրված էին մեր ազգային խնդիրների հետ կապված պրոբլեմները «հարմարեցնել» վերուստ սահմանված դրույթներին և «խցկել» նրանց շրջանակների մեջ։

Այժմ դրան վերջ է տրված։ Հայ արևելագիտությունը դարձել է հայ ազգային գիտական ուղղություններից մեկը, որի խնդիրները լուծվում են Երևանում, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում, նրա Արևելագիտության ինստիտուտում՝ ելնելով մեր անկախ պետության, մեր ժողովրդի ազգային շահերից։

Հայ արևելագիտությունը, պահպանելով տեսական գիտության բնորոշ բոլոր գծերը, որոշ իմաստով ձեռք է բերել կիրառական գիտության հատկանիշներ։ Դա կապված է այն հանգամանքի հետ, որ Հայաստանի Հանրապետությունը, որպես անկախ պետություն, վարում է իր սեփական արտաքին քաղաքականությունը, որի մեջ սկզբունքային տեղ է գրավում Մերձավոր և Միջին արևելքը, որը, ըստ էության, Հայաստանի անմիջական քաղաքական կենսատարածքն է։ Հայաստանի համար առաջնակարգ նշանակություն ունեն հարաբերությունները Թուրքիայի, Իրանի, արաբական երկրների, Ադրբեջանի և Վրաստանի հետ։ Իսկ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողները ուսումնասիրում են այս տարածաշրջանի վերոհիշյալ երկրների պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։

Հետևաբար նրանց ուսումնասիրությունները, եզրակացությունները, հիմնավորումները, առաջարկությունները և կանխագուշակումները և այլն, գործնական նշանակություն կարող են ունենալ մեր հանրապետության արտաքին քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից։ Միջազգային փորձը վկայում է, որ մեր ժամանակներում արդյունավետ կերպով իրականացվում է յուրատեսակ դաշինք պետության (կառավարության կամ այլ համապատասխան մարմինների) և գիտության միջև։ Եվ ուժեղ է այն պետությունը, որը, բացի այլ գործոններից, իրականացնում է լայնածավալ դաշինք գիտության հետ և հենվում նրա նվաճումների վրա։

Հայ արևելագիտությունը գտնվում է այդ գործընթացի սկզբում և նրա նոր կարգավիճակը արդեն իր արտացոլումն է գտել

ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն ժողովածուի առանձին հոդվածներում։

«Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարը թևակոխում է իր գոյության երկրորդ՝ նոր փուլը։ Հավատացած ենք, որ այն նույնպես արդյունավետ կլինի, ինչպես առաջին փուլը։

Բարի երթ։

ՆԻԿՈՂԱՅՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն.
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայաստանը դարեր շարունակ մի թևով հարել է Կովկասին, իսկ մյուսով՝ առավելապես Առաջավոր Ասիային, որը մեր ժամանակներում հորջորջվում է Մերձավոր և Միջին արևելք։ Սա նրա կենսատարածքն է։ Այստեղ է կազմավորվել հայ ժողովուրդը, այստեղ է ընթացել նրա փոթորկալից պատմությունը։

Հայաստանը մշտապես կազմել է մերձավորարևելյան տարածաշրջանի ստրատեգիական, ռազմաքաղաքական և տնտեսական կառույցների էական բաղադրամասը, որոշակի գործոն, որը ազդել է տարածաշրջանի ուժերի հաշվեկշռի վրա՝ մերթ վճռականորեն, ինչպես Արտաշիսյանների, հատկապես Տիգրան Մեծի, մերթ պակաս չափով, ինչպես Արշակունիների և մերթ թույլ կերպով, ինչպես Բագրատունիների ժամանակ։ Սակայն բոլոր դեպքերում, անկախ այն բանից, թե Հայաստանը պետականություն ունեցել է, թե ոչ, հզոր է եղել, թե տկար, նրա հարևանները՝ Իրանը, Հռոմը, Բյուզանդիան, Արաբական խալիֆայությունը, իսկ ապա նաև Օսմանյան կայսրությունը, հարկադրված են եղել այս կամ այն չափով հաշվի նստել նրա հետ, հաշվի առնել հայկական գործոնը իրենց քաղաքական կոմբինացիաներում՝ Առաջավոր Ասիայում տիրապետող դիրքեր գրավելու համար պայքարում և նվաճողական քաղաքականության մեջ։

Հայկական գործոնն իր նշանակությունը պահպանեց, հասկանալի է, տարբեր աստիճաններով և ձևերով, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, Օսմանյան և Ռուսական կայսրությունների կործանումը, մի կարճ ժամանակա-

միջոց՝ 1918—1920 թթ., այսինքն՝ հայկական պետականության վերականգնումը և ապա Խորհրդային Միության կազմավորումը։ Այս ժամանակահատվածը պատմական սահմանաբաժան է հայ ժողովրդի բազմադարյան գոյության ընթացքում։

Արևմտահայերի նկատմամբ թուրք կառավարողների կիրառած ցեղասպանության քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանը բռնաթափվեց իր բնիկ ազգաբնակչությունից՝ հայերից, իսկ երկիրը մնաց Օսմանյան կայսրության փլատակների վրա հառնած Թուրքիայի տիրապետության տակ։ Այս մասի համար հայկական գործոնն ընդունեց Թուրքիայի կողմից հայկական ցեղասպանությունը ճանաչելու և հայկական պահանջատիրության ձև կամ հավաքական ձևով «Հայ դատ» անվանումը։

Հույսի մի նշույլ երևաց 1918—1920 թթ., երբ Հայաստանի մի մասում վերականգնվեց հայ պետականությունը, հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը, որը հասցրեց միայն առաջին քայլերը կատարել մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական համակարգի մաս կազմելու ուղղությամբ։ Նա հասցրեց միայն կապեր հաստատել Իրանի, և որոշ շփումների մեջ մտնել արաբական երկրների հետ։ Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նրա հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ Հայաստանի Հանրապետության բոլոր ջանքերն ապարդյուն անցան։ Թուրքիան երկու անգամ՝ 1918 և 1920 թթ. ագրեսիա սանձազերծեց Հայաստանի Հանրապետության դեմ և նորանոր հայկական տարածքներ զավթեց։

Ի վերջո, Հայաստանը 1920 թ. նոյեմբերի վերջերին խորհրդայնացվեց, իսկ 1922 թ. մտավ Խորհրդային Միության կազմի մեջ։ ԽՍՀՄ-ի հարավային սահմանները դարձան Մերձավոր և Միջին արևելքի հյուսիսային սահմանները։

Պատմության մեջ առաջին անգամ Հայաստանը դադարեց անմիջական շփումներ և կապեր ունենալ մերձավորարևելյան երկրների հետ և կարծես թե անհետացավ Մերձավոր և Միջին արևելքի ասպարեզից։ Այս իրավիճակը պահպանվեց ընդհուպ մինչև Խորհրդային Միության կազմալուծումը և Հայաստանի անկախության հռչակումը։

1991 թ. սեպտեմբերի 21-ին, Հայաստանի անկախության պաշտոնական հռչակումով, այս հինավուրց երկիրը իրական հնա-

րավորություն ստացավ կրկին հայտնվել մերձավորարևելյան տարածաշրջանում որպես անկախ և ինքնուրույն գործոն։ Նրա առջև բացվեցին մերձավորարևելյան քաղաքական, ռազմաստրատեգիական, տնտեսական և մշակութային համակարգի մաս կազմելու դռները։ Հասկանալի է, որ դա այնքան էլ դյուրին խնդիր չէ և որոշակի ժամանակ է պահանջում։ Այդ խնդիրը Հայաստանն իրականացնում է փուլ առ փուլ։

Առաջին փուլում տեղի ունեցավ Հայաստանի անկախության ճանաչումը Մերձավոր և Միջին արևելքի բոլոր երկրների՝ Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Հորդանանի, Քուվեյթի, Թուրքիայի և տարածաշրջանի այլ պետությունների կողմից։ Միմյանց անկախությունը ճանաչեցին նաև անդրկովկասյան երեք հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը։

Սա շատ կարևոր հանգամանք էր, քանի որ առանց անկախության ճանաչման հարցը լուծելու, Հայաստանը չէր կարող դիմել հաջորդ քայլերին՝ կապված միջազգային ասպարեզում նրա քաղաքական դիրքերի ամրապնդման, տնտեսական հարաբերությունների զարգացման և միջազգային համագործակցության մեջ իրեն արժանի տեղ գրավելու հետ։ Այս փուլը Հայաստանը հաղթահարեց համեմատաբար հեշտությամբ, որն ուղեկցվում էր միջազգային կառույցներին՝ ՄԱԿ-ին և նրա բոլոր ենթակա կազմակերպություններին, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանր և այլն, նրա անդամակցելու հետ։

Սակայն քաղաքական ճանաչումը, ինչքան էլ որ այն կարևոր լիներ, բավարար չէր, որպեսզի Հայաստանը դառնար մերձավորարևելյան տարածաշրջանի տարբեր համակարգերի լիիրավ անդամ, ունենար իր կշիռը և ձեռք բերեր զանազան պրոցեսների վրա ներազդելու հնարավորություն։

Դրա համար անհրաժեշտ էր կատարել հաջորդ քայլը՝ թևակոխել երկրորդ փուլը, որի էությունը դիվանագիտական ճանաչումը և դիվանագիտական ներկայացուցչությունների փոխանակումն է։ Ահա այս բնագավառում ՀՀ-ի առջև ծառացան մի շարք դըժվարություններ, որոնք երիտասարդ հանրապետությունը ցարդ չի հաղթահարել ամբողջությամբ։ Խոսքն այն մասին է, որ տարածաշրջանի ոչ բոլոր պետությունները ցանկություն հայտնեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ։

Այս հարցը խիստ կենսական է ՀՀ-ի համար թե՛ մերձավորարևելյան ընտանիքի լիարժեք անդամ դառնալու տեսանկյունից, և թե առավելապես նրա ազգային անվտանգության ապահովման դիտակետից։

Դառնալով անկախ պետություն՝ Հայաստանը զրկվեց խորհրդային պաշտպանական վահանից և հայտնվեց մի իրավիճակում, երբ ինքը պետք է հոգար իր անվտանգության մասին։ Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ ՀՀ-ն դեռևս չուներ իր ձևավորված կանոնավոր ռազմական ուժերը, ազգային բանակը, իսկ երկրապահ և ֆիդայական ջոկատները, չնայած նրանց անվեհերությանը, ի վիճակի չէին ստանձնել այդ առաքելությունը, Ուրեմն անհրաժեշտ էին այլ լուծումներ, քանի որ անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանը միակն է, որտեղից կարող է Հայաստանի համար անմիջական ռազմական սպառնալիք ծագել։

Ստեղծված պայմաններում ՀՀ-ի ղեկավարությունը, մեր կարծիքով, որդեգրեց ճիշտ քաղաքականություն՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատել Հայաստանի անխտիր բոլոր հարևան պետությունների հետ։ Այլ կերպ ասած, ազգային անվտանգության ապահովման հարցը, որի հանդեպ խիստ զգայուն է հայ ժողովուրդը և որն ունի իր պատմական պատճառները, տեղափոխվում էր քաղաքական ոլորտ, փորձ էր արվում լուծել խաղաղ ճանապարհով և քաղաքական մեթոդներով։

Եվ այս քաղաքականությունն արձանագրեց ինչպես հաջողություններ, այնպես էլ ձախողումներ։

Հայկական կողմի ցանկության արձագանքելու առաջնության դափնին պատկանում է մեր դարավոր հարևան՝ Իրանին։ Նա առաջինը, Հայաստանի անկախությունը ճանաչելուց հետո, պատրաստակամություն հայտնեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՀՀ-ի հետ։ Թեհրանում և Երևանում բացվեցին նրանց համապատասխան դեսպանությունները։ Մերձավոր և Միջին արևելքի քաղաքական կյանքում մեծ կշիռ և ազդեցիկ դիրք ունեցող Իրանի պես պետության նման քայլը խիստ հուսադրիչ էր և հեռանկարային, դա հանդիսացավ առաջին պատուհանը Հայաստանի համար դեպի արտաքին աշխարհ և, կասկածից վեր է, նպաստեց, որպեսզի Հայաստանը ոտք դնի մերձավորարևելյան

համակարգ։ Այլ կերպ ասած, նա ծառայում է ՀՀ-ի ազգային անվտանգության ապահովմանը և միջազգային դիրքերի ամրապնդմանը։

Իրանին հետևեց Եգիպտոսը, որը, առաջինն արաբական երկրների շարքում, իր դեսպանությունը բացեց Երևանում և համաձայնեց Հայաստանի դեսպանության բացմանը Կահիրեում։

Դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նաև Սիրիայի, Լիբանանի, Արաբական Միացյալ էմիրությունների, Քուվեյթի և արաբական այլ երկրների հետ։ Հայաստանն իր դիվանագիտական ներկայացուցչությունները բացեց Դամասկոսում և Բեյրութում։ Սակայն Սիրիան և Լիբանանը, ինչպես նաև արաբական այլ երկրներ, դեռևս իրենց դիվանագիտական ներկայացուցչությունները չունեն Հայաստանի մայրաքաղաքում։ Մենք հակված չենք դրա մեջ հատուկ քաղաքական միտում նկատել։ Դա հավանաբար կապված է ֆինանսական հնարավորությունների և այլ տեխնիկական հարցերի հետ։ Մի բան պարզ է, որ Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի և արաբական այլ երկրների կողմից պաշտոնական դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի հետ նույնպես, ինչպես Իրանի դեպքում, ծառայում է Հայաստանի Մերձավորարևելյան տարածքային աշխարհաքաղաքական և տնտեսական համակարգի լիիրավ անդամ դառնալուն, կանխում Հայաստանի քաղաքական մեկուսացումը և նպաստում նրա դիրքերի ամրապնդմանը։

Եվ եթե ասվածին ավելացնենք, որ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նաև Հայաստանի և Վրաստանի միջև, և տեղի ունեցավ դիվանագիտական ներկայացուցչությունների փոխանակում, որը Հայաստանին ապահովում է պատուհան դեպի հյուսիս, ապա հիմք ունենք եզրակացնելու, որ այդ ճշգրիտ քայլերի օգնությամբ Հայաստանի ղեկավարությանը զգալի չափով հաջողվեց լուծել իր առջև կանգնած խնդիրները՝ կապված Հայաստանի ազգային անվտանգության ապահովման և մերձավորարևելյան տարածաշրջանային համակարգին անդամակցելու հետ։

Դրա հետ մեկտեղ շատ մեծ դժվարություններ առաջացան Ադրբեջանի և Թուրքիայի հետ փոխհարաբերություններում։ Ադրբեջանի հետ փոխհարաբերություններում վճռական դեր խաղաց Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը, որը ծագել էր նախքան Ադրբե-

ջանի և Հայաստանի անկախության հռչակումը։ Ադրբեջանի՝ սեկը մյուսին սրընթաց կերպով փոխարինող պրեզիդենտները (Մութալիբով, Մամեդով, Էլչիբեյ, Ալիև) Հայաստանին միտումնավոր կերպով վերագրում են ագրեսիվ ձգտումներ, դիտում որպես մի պետություն, որը հավակնություններ ունի Ադրբեջանի տարածքների նկատմամբ, և հրաժարվում են ճանաչել Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի իրավունքը՝ սեփական հայեցողությամբ տնօրինելու սեփական ճակատագիրը։ Հայաստանը, հասկանալի է, չի կարող սատար չկանգնել Լեռնային Ղարաբաղի արդարացի պայքարին։ Լեռնային Ղարաբաղը հինավուրց հայկական տարածք է, պատմական Հայաստանի անբաժան մասը, և նրա դուրս գալը ադրբեջանական իրավասությունից և հռչակումը անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, բնավ չի նշանակում Ագրբեջանի տարածքային ամբողջականության խախտում և առավել ևս՝ հայկական ագրեսիա՝ ընդդեմ Ադրբեջանի։

Այդուհանդերձ, դա պատճառ դարձավ, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև չհաստատվեն դիվանագիտական հարաբերություններ։ Հարաբերությունները Բաքվի և Երևանի միջև ավելի սրվեցին, երբ Ագրբեջանը շրջափակման ենթարկեց ՀՀ-ն և ԼՂՀ-ն

Թեև Ադրբեջանը ԼՂՀ-ի ռազմական ուժերի կողմից ծանր պարտություն կրելուց հետո հարկադրված էր 1994 թ. մայիսի 12-ին կնքել զինադադարի համաձայնագիր, սակայն, այնուհանդերձ, նա չի հրաժարվել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր տիրապետությունը վերականգնելու ծրագրերից, որը շարունակում է մնալ լարվածության հիմնական աղբյուրը և հայ-ադրբեջանական հարաբերությունների նորմալացման գլխավոր խոչընդոտը։ Սա իր հերթին բացասաբար է անդրադառնում մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական ընդհանուր մթնոլորտի վրա։

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հարաբերություններին, ապա Հայաստանի նոր ղեկավարությունը մեծ կարևորություն է տալիս դրանց։ Դեռ ավելին. սկզբնական շրջանում կառավարող շրջաններում կային գործիչներ, որոնք հանդես էին գալիս Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ վերանայելու և գլխավորապես դեպի Թուրքիան կողմնորոշելու պահանջով։ Նման մոտեցումը որոշակի անհանգստություն առաջ բերեց հայ հասարակության մեջ։

Ցարբերախտաբար այդ միտումը զարգացում չստացավ։ Դա արդյունք էր մի կողմից ՀՀ-ի բարձրագույն ղեկավարության սթափ մոտեցման, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ղեկավարության ոչ բարյացակամ քաղաքականության։

Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և դիվանագիտական ներկայացուցչություններ փոխանակելու ճանապարհին խոչընդոտ հանդիսացան Թուրքիայի կողմից առաջադրված երեք նախապայման-պահանջները. ա) չհիշատակել 1915 թ. հայոց ցեղասպանությունը, բ) պաշտոնապես հրաժարվել հողային պահանջատիրությունից և գ) չաջակցել Լեռնային Ղարաբաղին, ճնշում գործադրել նրա վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի գերակայությունն ու տերիտորիալ ամբողջականությունը[1]։

Այս երեք նախապայմանները բավարարելու դեպքում Թուրքիան պատրաստ էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ և իր դեսպանությունը բացել Երևանում։

Հայաստանի ղեկավարությունը մերժեց և չէր էլ կարող չմերժել թուրքական նախապայմանները։ Դա հանգեցրեց հարաբերությունների սրմանը Հայաստանի և Թուրքիայի միջև։ Թուրքիայի դիրքորոշումը՝ նախապայմանների առաջադրումը, հակասում է միջազգային պրակտիկային և իրավունքին, որը խարսխված է իրավահավասարության և փոխադարձ հարգանքի անսասան սկզբունքների վրա։ Իրեն հարգող ոչ մի պետություն չի կարող որևէ նախապայման ընդունել, այն էլ այնպիսին, որը վիրավորում է տվյալ պետության ազգային արժանապատվությունը, տվյալ ժողովրդի պատմական հիշողությունը և վնաս հասցնում նրա միջազգային հեղինակությանը։ Հայաստանին ներկայացված թուրքական նախապայմաններն այդ բնույթի էին։

Հայ-թուրքական հարաբերություններն ավելի լարված բնույթ ընդունեցին այն բանից հետո, երբ Թուրքիայի «կրտսեր եղբայր» Ադրբեջանը պարտություն պարտության հետևից կրեց ռազմի դաշտում ԼՂՀ-ի պաշտպանական ուժերի կողմից և ունեցավ տարածքային կորուստներ։ Թուրքիան մի կողմից, ի համերաշխություն Ադրբեջանի, Հայաստանը ենթարկեց ցամաքային, ծովային և օդային շրջափակման, իսկ մյուս կողմից դիմեց բացահայտ ռազմական սպառնալիքների Հայաստանի նկատմամբ։ Այդ գործում

հատկապես կոշտ դիրք էր գրավել Թուրքիայի հանգուցյալ պրեզիդենտ Թուրգութ Օզալը։ Քելբաջարի անկումից հետո թուրքական կառավարությունը 1993 թ. դեկտեմբերի 3-ին ահազանգեց Հայաստանին՝ «դադարեցնել ագրեսիան և արագորեն հետ քաշվել Ադրբեջանի տարածքից»[2]։ Թուրգութ Օզալը սպառնում էր «օգտագործել թուրքական ռազմական ուժեր՝ կանգնեցնելու հայերին»[3]։ Ակնարկելով 1915 թ. ցեղասպանությունը, նա հայտարարեց. թե «հայերը դաս չեն քաղել Անատոլիայի փորձից և կրած պատժից»[4]։ Թուրգութ Օզալն այնքան հեռու գնաց Հայաստանին հասցեագրված իր սպառնալիքների մեջ, որ հայտարարեց, թե ժամանակն է, որ Թուրքիան «ատամներ ցույց տա Հայաստանին»[5]։

Ոգեշնչված պրեզիդենտի ռազմաշունչ հայտարարություններից, թուրքական պաշտոնական շրջանակներում քննարկվում էր Հայաստանի նկատմամբ «Կիպրոսյան մոդելը» կիրառելու տարբերակը՝ այսինքն հանկարծակի հարձակումը և Հայաստանի արագ գրավումը[6]։ ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի Արտաքին գործերի և Ազգային անվտանգության բաժնի կողմից հրապարակված մի փաստաթղթում նշված է, որ «Թուրքական զորամիավորումները սահմանամերձ (Հայաստանին—Ն. Հ.) շրջանում դրվեցին «զգոնության վիճակի մեջ» և 1993 թ. ապրիլին համալրվեցին»[7]։

Այսպիսով, շատ բան տեսած Մերձավոր արևելքը, որն իրենից ներկայացնում է կոնֆլիկտների մի բարդ հանգույց՝ հյուսված արաբա-իսրայելական կոնֆլիկտից, իրանա-իրաքյան, իրաքա-քուվեյթյան հակամարտություններից, լիբանանյան խրոնիկական ճգնաժամից, այժմ ականատես էր լինում մի նոր կոնֆլիկտի բորբոքմանը՝ ղարաբաղյան պրոբլեմի շուրջը հյուսված հայ-թուրքական, ինչպես նաև հայ-ադրբեջանական հակասությունների կծիկի առաջացմանը, որը ներհյուսվում էր մերձավորարևելյան համընդհանուր կոնֆլիկտային համակարգի մեջ։ Հարկ է նշել, որ դժվար էր մինչև վերջ կանխատեսել այս նոր կոնֆլիկտի չափերը և հետևանքները։

Ստեղծված պայմաններում ակնհայտ դարձավ, որ մերձավորարևելյան համակարգը, քաղաքական նորմալ հարաբերությունների հաստատումը մի կողմից Հայաստանի, իսկ մյուս կողմից Իրանի, արաբական երկրների և Վրաստանի հետ, բավարար չեն ապահովելու Հայաստանի ազգային անվտանգությունը, պետական

անկախ գոյությունը՝ ի տես Թուրքական սպառնալիքի արևմուտքից, և Ադրբեջանի կողմից պատերազմական գործողությունները ԼՂՀ-ի դեմ վերսկսելու մտադրության՝ արևելքից, որն անխուսափելիորեն Հայաստանը կներգրավեր պատերազմական գործողությունների մեջ։

Դա Հայաստանի ղեկավարությունից պահանջում էր նոր և համարձակ լուծումներ։ Եվ այն գտնվեց ի դեմս Ռուսաստանի հետ ռազմական համագործակցություն հաստատելու։ Այդ հնարավորությունը Հայաստանի առջև բացվեց, քանի որ անդրկովկասյան և մերձավորարևելյան քաղաքականության շատ հարցերում Հայաստանի և Ռուսաստանի ստրատեգիական շահերը համընկնում են։ Ռուսաստանի ազգային-պետական շահերին հակասում է Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի ընկնելը որևէ երկրորդ պետության՝ այդ թվում և Թուրքիայի, տիրապետության կամ ազդեցության տակ։ Ռուսաստանն ինքն է ձգտում դուրս գալ մերձավորարևելյան տարածաշրջան և ցանկանում է, որ Անդրկովկասը կամուրջի դեր կատարի և ոչ թե Ռուսաստանն անջատի Մերձավոր և Միջին արևելքից, որը հավանական է, եթե անդրկովկասյան տարածքը հայտնվի այլ պետության ազդեցության ոլորտում։ Եվ, վերջապես, Ռուսաստանի շահերը պահանջում են, որ փոթորկահույզ Հյուսիսային Կովկասի հարավային սահմանների մոտ լինեն բարեկամական պետություններ, որոնք չեն խրախուսի Հյուսիսային Կովկասի ժողովուրդների անջատողական ձգտումները և յուրահատուկ ձևով կամրապնդեն Ռուսաստանի թիկունքը[3]։

Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվեցին մի շարք ռազմական պայմանագրեր համատեղ պաշտպանության վերաբերյալ, այդ թվում և Ռուսաստանին երկու ռազմական բազաներ տրամադրելու մասին։ Երկու պետությունների միջև հաստատված ռազմական համագործակցությունը հիմնված է կողմերի լիակատար հավասարության սկզբունքի վրա։ Այն հետապնդում է զուտ պաշտպանական նպատակներ և չի ուղղված որևէ երրորդ պետության դեմ։

Շնորհիվ այս զինակցության Հայաստանի ազգային անվտանգությունը դրվեց հուսալի հիմքերի վրա։

Հայ-ռուսական զինական համագործակցությունը՝ զուգակցված մերձավորարևելյան մի շարք երկրների, մասնավորապես,

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի, Վրաստանի և այլ պետությունների քաղաքական համագործակցության հետ, անհամեմատ ավելի հուսալի ձևով են լուծում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման խնդիրը։

Հասկանալի է, որ որևէ պետություն, այդ թվում և Հայաստանը, իր ազգային անվտանգությունը լրիվ չի կարող ապահովել ապավինելով բացառապես տարածաշրջանային կառույցներին։ Այդ խնդրի լուծման մեջ մեծ է ազգային ռազմական ուժերի, ազգային բանակի ստեղծման և ամրապնդման դերը, ինչպես նաև տնտեսական, հոգեբանական և այլ գործոնների նշանակությունը։

Մենք հարցի այդ կողմի լուսաբանության վրա կանգ չառանք, քանի որ այն մեկ այլ հոդվածի նյութ է և չի մտնում սույն հոդվածի խնդիրների մեջ։

NIKOLAY HOVHANNISIAN

THE MIDDLE EASTERN REGION AND THE PROBLEM OF TRE NATIONAL SECURITY OF ARMENIA

Armenia throughout the centuries was one of the factors of the Middle Eastern geopolitical reality and played its sometimes significant role in the political life of the region and influenced on the balance of forces in the Middle East.

After the genocide of the Armenians in the Ottoman Empire in 1915 and the devastation of the Western Armenia, as well as the inclusion of the Soviet Armenia in 1922 in the USSR, Armenia had temporarily disappeared from the Middle Eastern arena as an independent factor. The situation had changed after the collapse of the Soviet Union and emergence of the independent Republic of Armenia, in 1991, when Armenia reappeared on the Middle Eastern political scene. Immediately affer that the problem of national security, which is very vital for the Armenians, had aroused before the young independent Armenian state.

The new leadership of Armenia hoped to resolve this problem by political means, through getting recognition of its

independence by the neighbor states—Turkey, Iran, the Arab countries, Azerbaijan and Georgia, and establishment of diplomatic relations with them. The first task-recognition of independence, was realized comparatively easy and quick. As for diplomatic relations, they were established with all of the neighbor states, besides Azerbaijan and Turkey. The latter put forward three preconditions before Armenia. Turkey set Armenia's explicit abandonment of territorial designs on Turkey, of alegalions of Turkey's culpability for the 1915 genocide of Armenians, and a Karabakh solution as preconditions to diplomatic ties. And as Armenia refused to satisfy these unacceptable demands Turkey threatened Armenia. The late Turkish president Turgut Ozal urged to use Turkish armed forces againts the Armenians and to „bare its teeth to Armenia".

In these dangerous circumstances Armenia had not other choice, than to conclude a Treaty on military cooperation with Russia. Armenia agreed to put under the Russian disposition two military bases.

This Treaty serves to the purpose to guarantee for the national security of Armenia, pursues defensive aims and is not directed against the third state.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] „Congressional Research Service Issue Brief. Armenia-Azelbaijan Conflict Updated August 17. 1995 by Carol Migdalovitz. Foreign Affairs and National Defense Division. CRS. The Library of Congress", p. 11.

[2] „Nagorno-Karabakh". Working Paper Submitted to the United Nations Economic and Social Council. Commission on Human Rights. Fiftieth Session. 31 January to 11 March 1994 Agenda item 12. Question of the Violation of Human Rights and Fundamental Freedoms in any Part of the World. 10 January 1994" by Hrair Balian. HRA 1994, p, 6.

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 22։

[5] Նույն տեղում։

[6] Նույն տեղում։

[7] „CRS Issue Brief. Armenia-Azerbaijan Conflict", p. 11.

[8] *Այդ մասին տե՛ս, Н. Оганесян.* Россия и Кавказ. Взгляд из Армении. - Республика Армения, Ереван, 3 мая 1996 г.

РИПСИМЕ КОРХМАЗЯН

ТЕРРИТОРИАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ СОВЕТСКО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ НА БЕРЛИНСКОЙ (ПОТСДАМСКОЙ) КОНФЕРЕНЦИИ РУКОВОДИТЕЛЕЙ ТРЕХ СОЮЗНЫХ ДЕРЖАВ—СССР, США И ВЕЛИКОБРИТАНИИ

Взаимоотношения Турции и Советского Союза, а сегодня Турции и России, занимали и занимают одно из центральных мест в турецкой внешнеполитической концепции, являясь в значительной степени определяющими в ее разработке и развитии.

Новая историческая ситуация—распад СССР, создав возможность объективного исследования советско-турецких отношений, одновременно породила четко прослеживающуюся сегодня, как представляется, опасную тенденцию—недостаточно документированную и далеко не всегда обоснованную критику всех сторон и аспектов советской внешней политики. Подобный подход автоматически и однозначно приводит к оправданию турецкой политики и позиции относительно СССР. Соответственно оправдываются и военно-политические и дипломатические усилия западных держав, поддерживавших и поддерживающих Турцию. Отмеченная тенденция заметно распространена и в определенных кругах представителей армянской политической и общественной мысли. Между тем именно армянская научная мысль должна быть глубоко заинтересована в объективном анализе всех аспектов политики Турции и ее союзников относительно Советского Союза. И хотя проблема армянских территорий пере-

стала быть объектом российско-турецких взаимоотношений, ее исследование представляет интерес не только в научном, но и в политическом отношении.

Как известно, Берлинская (Потсдамская) конференция, проходившая после капитуляции Германии и окончания войны в Европе с 17 июля по 2 августа 1945 г., имела своей целью мирное урегулирование возникших важнейших проблем, в том числе территориальных. В ходе этой конференции значительное внимание было уделено обсуждению вопроса о Турции, советско-турецких отношениях, включая территориальные претензии СССР к Турции.

Однако позиции, занятые собеседниками при обсуждении отмеченных проблем и определившие исход переговоров по этим вопросам, в известной степени проявились несколько раньше, еще на Крымской (Ялтинской) конференции руководителей союзных государств в начале февраля 1945 г. Уже на переговорах в Ялте стали заметны различия в отношении союзников к Турции. Президент США Ф. Д. Рузвельт поставил важный практический вопрос: «Следует ли приглашать на конференцию (имелась в виду конференция создававшейся Организации Объединенных Наций) наряду с воюющими против Германии странами также «присоединившиеся страны», например, Парагвай, Перу, Уругвай, Чили, Египет, Исландию, которые порвали отношения с Германией, но не объявили ей войны?»[1] Сталин же обратил внимание на то, что если на конференцию будут приглашены не только страны, объявившие войну, но и «присоединившиеся», то странам, действительно воевавшим с Германией, будет обидно сидеть рядом с теми, которые колебались и жульничали в течение войны».[2] В результате обсуждения союзники договорились, что на конференцию будут приглашены все те страны, которые объявят Германии войну до 1 марта 1945 г.

У. Черчилль, премьер-министр Великобритании, не удовлетворился, однако, принципиальным решением относительно «присоединившихся» стран и счел необходимым специаль-

но высказаться за приглашение Турции, хотя, может быть, это предложение и не встретит всеобщего одобрения. «Турция заключила с Англией союз еще до начала войны, в очень опасное время. Когда началась война, турки считали, что их армия недостаточно хорошо вооружена для современного типа войны. Тем не менее позиция Турции была дружественной и полезной во многих отношениях. Однако Турция не воспользовалась предложением, сделанным ей год назад, вступить в войну»[3]. Между тем позиция турецкого правительства в годы войны, как свидетельствуют документы, в том числе и на ее заключительном этапе, скажем в 1944 году, за несколько месяцев до конференции в Ялте, приводила его в состояние нескрываемого раздражения. Теперь же, не замечая противоречивости приводимых аргументов, Черчилль, уговаривал собеседников: «Не следует ли туркам дать возможность раскаяться на смертном одре?» и получил подтверждение, что «Турцию следует пригласить, если она объявит войну Германии до конца февраля»[4].

Протоколы Крымской конференции констатируют также, что «было достигнуто соглашение о том, что три министра иностранных дел... обсудят предложение Советского Правительства в отношении Конвенции в Монтре и сделают доклад своим правительствам. Турецкое правительство будет информировано об этом в надлежащий момент»[5].

Далее события развивались с нарастающей интенсивностью.

Западные союзники оказали на Турцию давление, фактически принудив ее 23 февраля 1945 г. объявить войну Германии и Японии. Президент Турции Исмет Инсню не счел нужным хотя бы слегка закамуфлировать вынужденность этого турецкого шага, прямо и официально заявив: «... Мы вступили в войну против немцев и японцев лишь по требованию союзников. Это должно быть имело для них какое-то значение, поэтому они и настаивали на этом»[6]. А чуть менее месяца спустя, 19 марта, Советский Союз денонсировал советско-турецкий договор от 17 декабря 1925 года о друж-

ор о нейтралитете как несоответствующий новой обстановке и нуждающийся в серьезном улучшении[7].

В связи с этим в июне 1945 года, уже после окончания войны в Европе, в Москве прошли советско-турецкие переговоры, во время которых советской стороной был поднят территориальный вопрос и вопрос о Конвенции в Монтре. Переговоры, в пересказе В. М. Молотова, наркома иностранных дел СССР, начались с предложения турецкого правительства заключить между Турцией и СССР договор о союзе. При этом турецкая сторона поинтересовалась условиями, на которых Советское правительство было бы готово это сделать[8]. В ответ правительство СССР потребовало урегулирования вопроса об отторгнутых от Грузии и Армении территориях—возвращения этих территорий Советскому Союзу, пересмотра режима Черноморских проливов и создания там советской базы[9].

«В 1921 году,—говорил Молотов,—турки воспользовались слабостью Советского государства и отняли у него часть Советской Армении. Армяне в Советском Союзе чувствуют себя обиженными. В силу этих причин Советское правительство и подняло вопрос о возвращении законно принадлежащих Советскому Союзу территорий. Что касается вопроса о проливах, то Советское правительство давно уже говорит о том, что Конвенция в Монтре его не устраивает»[10]. Так возник вопрос о территориальных требованиях СССР к Турции.

Понимая, что поднятые проблемы будут обсуждаться союзниками, встревоженное турецкое правительство обратилось к Великобритании. Турки немедленно выехали в Лондон к министру иностранных дел Идену[11], добиваясь помощи и поддержки английского правительства. И, как свидетельствуют документы конференции в Потсдаме, получили их.

Еще до начала конференции, 7 июля, президент США Г. Трумэн сообщил, что считает необходимым в первую очередь обсудить «процедуру и механизм для мирных переговоров и урегулирования территориальных вопросов»[12]. В предложениях же английской стороны 5-м пунктом значи-

лось: «Вопрос о проливах и русско-турецких отношениях вообще»[13].

В канун официального открытия Потсдамской конференции, 16 июля, Молотов и Иден среди прочего обменялись мнениями и по этому вопросу. Иден сообщил Молотову, что «турки не согласны на удовлетворение территориальных требований Советского Союза», на что Молотов заявил, что «территория, о которой идет речь, не принадлежит туркам. Они поступили несправедливо, отняв ее у Советского Союза. Поляки тоже поступили несправедливо, захватив часть советской территории в 1921 году. Однако поляки решили пересмотреть свою позицию и согласились теперь возвратить эту территорию Советскому Союзу. Он, Молотов, приводил этот пример туркам». На замечание Идена о том, что «в Турции нет линии Керзона», последовало возражение: «Тем не менее английское правительство раньше не раз выступало в защиту армянского населения, находившегося под турецким владычеством...». А на вопрос Идена: «Много ли армян проживает на турецкой территории?»,—Молотов ответил, что «их там около 400—500 тысяч. Всего в Советской Армении живет около 1 млн. армян, а вне территории Советской Армении, за границей, проживает свыше 1 млн. армян. Когда территория армян расширится, многие армяне, проживающие за границей, будут стремиться возвратиться на родину. Армяне очень способные и энергичные люди, особенно в хозяйственных вопросах. Пусть турки отдадут Советскому Союзу армян, это будет справедливо»[14].

Вопрос о Турции был включен в повестку дня шестого заседания глав государств и правительств 22 июля третьим пунктом, точнее перенесен сюда с предыдущего совещания. Его поставила английская делегация: Черчилль, заявил, что «этот вопрос становится важным ввиду признанной необходимости внести изменения в Конвенцию в Монтре». По мнению британского правительства, «этот пересмотр должен был быть осуществлен путем соглашения между участниками конвенции, за исключением, конечно, Японии». Черчилль зая-

вил, что «неоднократно выражал готовность разработать соглашение, согласно которому советский флот—военно-морской и торговый—мог свободно плавать из Черного моря в Средиземное и обратно. Поэтому мы открываем обсуждение этого вопроса на основе дружественного согласия». Далее Черчилль, как он выразился, позволил себе «обратить внимание генералиссимуса на важность того, чтобы не напугать Турцию». Английский премьер отметил, что «несомненно, Турция весьма встревожена концентрацией болгарских и советских войск в Болгарии, а также продолжающимися нападками на нее в советской печати и по радио и, конечно, тем оборотом, который приняли переговоры, состоявшиеся между турецким послом в СССР и г-ном Молотовым. Во время этих переговоров было упомянуто об изменении восточной границы Турции, а также о советской базе в проливах». Черчилль подчеркнул, что он понимает, что «это не претензии Советокого правительства к Турции; однако, ввиду того, что Турция поставила вопрос о союзе с СССР, последний выдвинул условия заключения такого союза. Мне совершенно ясно,—не без иронии заявил Черчилль,—что если Турция просит у Советского правительства заключения наступательного и оборонительного союза, то Советскому правительству представляется хороший случай заявить о том, как можно улучшить отношения между Турцией и Россией... Турцию, однако, встревожили выдвинутые условия»[15].

На вопрос Черчилля, как развивалась ситуация, Молотов сообщил, что турецкое правительство, проявив инициативу, поставило вопрос о союзном договоре сначала перед советским послом в Анкаре, а затем, в конце мая, через турецкого посла в Москве. В начале июня состоялись две беседы между Молотовым и турецким послом в СССР Сарпером. Далее Молотов пересказал уже изложенные им Идену соображения, сделав некоторые дополнения: «Заключение союзного договора означает, что мы должны совместно защищать наши границы: СССР—не только свою, но и турецкую, а Турция—не только свою, но и советскую границу. Однако

в некоторых частях,—разъяснял Молотов,—мы считаем границу между СССР и Турцией несправедливой. Действительно, в 1921 году от Советской Армении и Советской Грузии Турцией была отторгнута территория—это известная территория областей Карса, Артвина и Ардагана... поэтому мною (Молотовым) было заявлено, что для того, чтобы заключить союзный договор, следует урегулировать вопрос об отторгнутой от Грузии и Армении территории, вернуть им эту территорию обратно». Затем Молотов изложил советскую позицию относительно проливов, добавив, что Советское правительство выразило готовность, если турецкое правительство считает неприемлемым урегулирование обоих этих вопросов, (...) заключить соглашение, касающееся только проливов»[16].

Со своей стороны Черчилль заявил, что его старое предложение о готовности «повлиять на турецкое правительство, чтобы оно согласилось на пересмотр Конвенции в Монтре... остается в силе», однако, поскольку «возникают совсем другие вопросы» и «речь идет о русской базе в проливах, а также о том, что никто не может иметь отношение к вопросу о Дарданеллах и Босфоре и проходе через них, кроме Турции и Советского Союза», то он чувствует себя «совершенно свободным в отношении новых предложений». При этом Черчилль выразил убежденность, что Турция «никогда не согласится на это». В ответ последовало возражение Молотова, что существовали договора, «по которым вопрос о проходе через проливы решался только Турцией и Россией. Это договор 1805 года и Ункяр-Искелесийский договор 1833 года».

Трумэн ограничился сообщением, что «не готов высказать свое мнение по этому вопросу»[17].

На следующий день обсуждение этих вопросов было продолжено. Черчилль повторил, что не может «поддержать предложение о создании русской военной базы в проливах» и не думает, чтобы «Турция согласилась с этим предложением». Сталин же вернулся к заявлению Черчилля, о том, что «русские напугали турок», и посчитал нужным «дать

справку по этому поводу—для успокоения г-на Черчилля»: «Я не знаю, как его информировали турки, но я должен сказать, что в Болгарии у нас имеется 2 дивизии. Г-н Черчилль был напуган турками». Далее Сталин сообщил, что «у турок имеется в районе Константинополя свыше 20 дивизий, возможно, 23 или 24 дивизии. Уверяю вас, болгарские войска турок не напугали. Предложение об исправлении границы—может быть это могло напугать турок?—лукаво задавался вопросом Сталин.—Но речь шла о восстановлении границы, которая существовала до первой мировой войны. Я имею в виду район Карса, который находился до войны в составе Армении, и район Ардагана, который до войны находился в составе Грузии... И мы заявили Турции, что если она хочет заключить с нами союз, нужно исправить эту границу, если же она не хочет исправлять границу, то отпадает вопрос о союзе»[18].

Что касается требований базы в районе Проливов, то Сталин высказался следующим образом: «Конвенция в Монтре целиком направлена против России, это—враждебный России договор. Турции предоставлено право закрыть пролив для нашего судоходства не только в том случае, когда идет война, но и в том случае, когда Турции покажется, что существует угроза войны, причем вопрос о том, когда эта угроза возникает, решает сама Турция. Невозможное положение! Турции всегда может показаться, что существует какая-то угроза, и она всегда может закрыть проливы. У нас, русских, ровно столько же прав в отношении проливов, сколько у японского императора. Это смешно, но это факт. Выходит, что небольшое государство, поддерживаемое Англией, держит за горло большое государство и не дает ему прохода». «Можно себе представить,—продолжал Сталин,—какой шум поднялся бы в Англии, если такой договор существовал бы в отношении Гибралтара, или в Америке, если такой договор существовал бы в отношении Панамского канала. Таким образом, стоит вопрос о том, чтобы нашим кораблям была дана возможность свободного прохода из Черного моря и об-

ратно. Но так как Турция слаба и не может сама отстоять возможность свободного прохода в случае каких-либо осложнений, то мы должны иметь какую-то гарантию, что эта свобода прохода будет обеспечена»[19].

Сталин выразил согласие и на иное решение этого вопроса: «Вы считаете, что военно-морская база в проливах неприемлема. Хорошо, тогда дайте нам какую-либо другую базу, где русский флот мог бы ремонтироваться, экипироваться, и где он мог бы совместно со своими союзниками отстаивать права России. Вот как обстоит дело. Но оставлять положение в том виде, как оно сейчас существует, смешно»[20].

По мнению американской стороны, высказанному Трумэном, территориальный вопрос «касается только Советского Союза и Турции и должен быть решен между ними», в то время как «вопрос о Черноморских проливах касается всех нас и многих других стран».

Черчилль поддержал позицию американского президента[21].

Наконец, 24 июля на восьмом заседании вопрос о Турции обсуждался в последний раз. Трумэн продолжал настаивать, что «если свободный режим проливов будет гарантирован международным авторитетом, то никаких фортификаций в этих проливах не понадобится ни Турции, ни России». Разделяя точку зрения американского президента, Черчилль заверял Сталина, что полностью понимает и согласен, что «такая великая держава, как Советский Союз, не должна кланяться Турции всякий раз, когда ей нужно провести свои корабли через проливы только потому, что Турция заявляет, что она боится войны». Он, Черчилль, разделяет недовольство таким положением вещей. «Предложение о международном контроле означает, что проливы не будут находиться в чьих-либо одних руках»,—продолжал настаивать Трумэн и обещал приложить усилия, чтобы убедить турок в правильности такой точки зрения по этому вопросу[22].

В конце концов, признав, что Конвенция о Проливах, заключенная в Монтре, должна быть пересмотрена, три Пра-

вительства согласились, что «в качестве следующего шага» данный вопрос станет темой непосредственных переговоров между каждым из трех Правительств и Турецким Правительством»[23]. Вопрос о территориях, признанный проблемой двусторонних советско-турецких отношений, больше не поднимался.

В заключение следует отметить некоторые моменты более общего плана. Так, тексты заявлений руководителей великих держав поражают обыденностью и фарисейством рассуждений—в первую очередь при обсуждении территориальных проблем. Если убрать прилагательные—русский, советский, английский,—зачастую будет трудно определить, кому принадлежат высказывания—диктатору Сталину или главе правительства демократической Англии и одновременно премьер-министру мировой колониальной империи Черчиллю. В расчет принимались лишь государственно-политические соображения и возможности силового и политического давления, едва прикрытые фразеологией об интересах того или иного народа, что, собственно, в меру необходимости делал и Сталин при обсуждении территориальных требований Советского Союза к Турции.

Другое обстоятельство—понимая, что вряд ли удастся договориться с союзниками по всем пунктам, Сталин и Молотов как бы разделили между собой варианты компромиссов. Молотов заявлял, что можно поступиться требованиями о возврате армянских и грузинских территорий в случае достижения соглашения о военной базе в Проливах. А Сталин на следующем же заседании соглашался получить какую-либо другую базу, но повторял, что договора с Турцией не будет без решения территориальных проблем. Однако его утверждение о том, что проблема армянских и грузинских земель появилась лишь как следствие турецких предложений о заключении союзного договора с СССР,. не вызывает доверия. Во-первых, она лежала в русле одного из важнейших направлений советской политики с конца 30-х годов: возвращение утраченных территорий Российской империи—терри-

тории у Ленинграда, Прибалтика, район Кёнигсберга (Калининградская область), Западная Белоруссия, Западная Украина, Бессарабия, территории на Дальнем Востоке. Во-вторых, уже после того, как стало совершенно очевидно, что ни о каких базах в Проливах не может быть и речи, ситуация на советско-турецкой границе продолжала оставаться исключительно напряженной в течение ряда лет.

Спустя восемь лет, 30 мая 1953 года, советское правительство сделало правительству Турции заявление: «Во имя сохранения добрососедских отношений и укрепления мира и безопасности правительства Армении и Грузии сочли возможным отказаться от своих территориальных претензий к Турции. Что же касается вопроса о проливах, то Советское правительство пересмотрело свое прежнее мнение по этому вопросу и считает возможным обеспечение безопасности СССР со стороны проливов на условиях, одинаково приемлемых как для СССР, так и для Турции. Таким образом, Советское правительство заявляет, что Советский Союз не имеет никаких территориальных претензий к Турции»[24]. Однако убедить Турцию, что СССР впредь не будет возвращаться к вопросу о территориях, не удавалось более 45 лет. Конечно, территориальная проблема была далеко не единственной причиной, породившей столь длительный бездоговорный период в советско-турецких отношениях, но, несомненно, одной из главных. Лишь в самый канун краха Советского Союза, в марте 1991 года, между СССР и Турцией был подписан договор «О дружбе, добрососедстве и сотрудничестве».

Что касается истинных намерений Сталина, то документы Берлинской конференции свидетельствуют о его откровенном стремлении извлечь максимум, получить все, что только окажется возможным. Мнение же некоторых историков о том, что советское правительство интересовали лишь проливы и базы, а вопрос земель был только разменной монетой, не находит подтверждения. Такая позиция продиктована, видимо, негативным отношением к личности Сталина, психологическими причинами. Но между попыткой Стали-

на вернуть армянские земли и его отношением к армянскому народу нет никакой связи. Просто имперские устремления вождя в данном частном случае совпадали с национальными интересами армянского народа. И признание серьезности этих попыток способствует лишь установлению исторической истины.

HRIPSIME KORKHMAZIAN

THE TERRITORIAL PROBLEMS OF SOVIET-TURKISH RELATIONS IN THE BERLIN (POTSDAM) CONFERENCE OF THE THREE LEADERS—USSR, USA AND GREAT BRITAIN

The interrelations between Turkey and USSR, as well as that of the Turkey and Russia today are of utmost priority in the foreign political concept of Turkey.

The article deals with the next problems—the attempt of the USSR to return the Armenian and Georgian territories which were part of Russian Empire but later (Moscow Treaty, 1921) given to Turkey, to get a base on the straits, had a great influence on Soviet—Turkish relations.

The territorial claims of the USSR to Turkey were formulated still before the Berlin Conference, during the discussions of Turkey's proposal concerning the alliance treaty between the USSR and Turkey, in Moscow. Turkey was announced that the USSR is insisting on the regulation of the problem of Georgian and Armenian territories annexed by Turkey, that is to return these territories to the USSR, to revise the strait-regime and to create there a Soviet base.

The Turkish government realized that these problems will be discussed by the allies, so it applied to Great Britain trying to get the latter's support. According to the documents of the Conference the Turkey's application was successful. The American president declared that „the territorial problem is concerning to the USSR and Turkey, so it must be resolved between them".

ПРИМЕЧАНИЯ

[1] Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941—1945 гг., т. IV. Крымская конференция руководителей трех союзных держав—СССР. США и Великобритании (4—11 февраля 1945 г.). Сборник документов, М., 1984. Док. № 10. с. 112. Запись заседания глав правительств, 7 февраля 1945 г.

[2] Там же. док. № 13. с. 136. Запись заседания глав правительств, 8 февраля 1945 г.

[3] Речь идет об англо-франко-турецком договоре о взаимопомощи от 19 октября 1939 г.

[4] Там же, с. 137.

[5] Там же, док. № 28. с. 263. Протокол работы Крымской конференции. XIV. Конференция в Монтре и Проливы.

[6] İnönü'nün Sövlev ve Deme[illegible] [illegible] 19[illegible], s. 39

[7] Внешняя политика Советского Союза в период Отечественной войны. Документы и Материалы, т. III (1 января—3 сентября 1945 г.). ОГИЗ, 1947, с. 146.

[8] Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941—1945 гг., т. VI. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав—СССР. США и Великобритании (17 июля—2 августа 1945 г.) Сборник документов, М. Политиздат, 1984. Док. № 1, с. 37—38. Запись беседы народного комиссара иностранных дел СССР с министром иностранных дел Великобритании. Потсдам, 16 июля 1945 г.; док. № 13. с. 135—136.

[9] Там же, с. 135—136.

[10] Там же, с. 37.

[11] Там же.

[12] Берлинская конференция... док. № 30. с. 283. Письмо посла США в СССР народному комиссару иностранных дел СССР. 7 июля 1945 г.

[13] Берлинская конференция... док. № 31. с. 285. Письмо посла Великобритании народному комиссару иностранных дел СССР. 11 июля 1945 г.

[14] Берлинская конференция... док. № 1, с. 38.

[15] Берлинская конференция... док. № 13. с. 134—135. Запись шестого заседания глав правительств, 22 июля 1945 г.

[16] Там же, с. 135—136.

[17] Там же. с. 137.

[18] Берлинская конференция... док. № 16. с. 148—149. Запись седьмого заседания глав правительств. 23 июля 1945 г.

[19] Там же, с. 149.

[20] Там же, с. 150.

[21] Там же, с. 151.

[22] Берлинская конференция... док. № 18, с. 170. Запись восьмого заседания глав правительств. 24 июля 1945 г.

[23] Берлинская конференция... док. № 158, с. 444. Протокол Берлинской конференции трех великих держав. 1 августа 1945 г., XVI. Черноморские проливы.

[24] Берлинская конференция... с. 477.

ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԻՐԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ 1976 Թ.

Լիբանանյան ճգնաժամի առաջին փուլը, որն ընդգրկում է 1975—1976 թթ., կարևոր տեղ է գրավել Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ։ Դա պայմանավորված է ոչ միայն երկու երկրների միջև գոյություն ունեցող պատմաաշխարհագրական սերտ կապերով, այլև այդ ժամանակահատվածում Լիբանանում ստեղծված այն բարդ քաղաքական իրադրությամբ, որն անմիջականորեն շոշափում էր հարևան պետության՝ Սիրիայի շահերը, և սպառնալիք ստեղծում նրա անվտանգությանն ու կայունությանը։

Սիրիան շատ արագ մխրճվեց լիբանանյան հակամարտության մեջ։ Սկզբնական շրջանում, այսինքն՝ ամբողջ 1975 թ. ընթացքում, նա հանդես էր գալիս ճգնաժամը դիվանագիտական խաղաղ բանակցությունների միջոցով լուծելու առաջնությամբ միայն և հակամարտող կողմերին փոխըմբռնման հասցնելու ուղիներ էր որոնում։ Իսկ 1976 թ. Սիրիան ձեռնարկեց ռազմական միջամտություն, որը մեծ ազդեցություն թողեց դեպքերի հետագա զարգացման վրա։ Մեր կողմից ուսումնասիրվող խնդիրը գիտական քննարկման առարկա է դարձել մի շարք հեղինակների կողմից, որոնցից հարկ է նշել հատկապես Պ. Սիլի, Զ. Լենցովսկու, Ն. Վենբերդերի, Լ. Շեբրիի, Ս. Ռեզայի, Ա. Ասաադի, Ե. Դմիտրիևի, Լ. Վոլնովի, Վ. Կիսելյովի, Ա. Իվանովի, Պ. Սարաչյանի և այլոց աշխատությունները[1]։ Սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող աշխատություններից օգտագործել ենք Լիբանանի առաջադիմական-սոցիալիստական կուսակցության ղեկավար Քամալ Ջումբլաթի և Լիբանանի նախագահ Իլիաս Սարգիսի գլխավոր խորհրդական,

«Քաթաիբ» կուսակցության ազդեցիկ դեմքերից մեկի՝ հայազգի Քարիմ Բագրատունու հուշերը[2]։

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ լիբանանյան հակամարտությանը 1976 թ. սիրիական ռազմական միջամտության և դրան ուղեկից մի շարք հարցերի լուսաբանումը միաժամանակ հնարավորություն կտա ճիշտ գնահատելու հետագա տարիներին Լիբանանում Սիրիայի վարած քաղաքականությունը, ինչպես նաև լույս կսփռի մայրիների երկրի XX դարի վերջին քառորդի ողբերգական պատմությանն առնչվող ցարդ չհիմնավորված մի քանի տեսակետների վրա։

Լիբանանյան ճգնաժամը, որը, ինչպես հայտնի է, ծագեց 1975 թ. ապրիլի 13-ին Բեյրութի Այն առ-Ռումաննա թաղամասով անցնող պաղեստինցիների ավտոմեքենայի վրա աջքրիստոնեական «Քաթաիբ» կուսակցության զինված մարտիկների բացած կրակի հետևանքով և որին զոհ գնացին 27 պաղեստինցիներ, երկրում տարբեր քաղաքական դաշինքների ու խմբավորումների առաջացման պատճառ հանդիսացավ։ Չնայած այն հանգամանքին, որ այդ միջադեպը պատերազմը սկսելու լոկ առիթ էր և իր մեջ պարունակում էր խմորումների մի բարդ հանգույց[3], այնուամենայնիվ, դրանով պաղեստինյան գործոնը* դարձավ լիբանանյան հակամարտության կարևոր բաղադրատարրերից մեկը։

Ուստի լիբանանյան իրադարձությունների հանդեպ Սիրիայի վարած քաղաքականությունն անմիջականորեն առնչվում էր ինչպես զուտ ներլիբանանյան, այնպես էլ պաղեստինյան խնդրի հետ։

Ճգնաժամի առաջին օրվանից Պաղեստինի ազատագրության կազմակերպությունն (ՊԱԿ) իրենց պաշտպանությունը հայտնեցին երկրի ձախ ուժերը, որոնք միավորվել և կազմում էին «Ազգային շարժումը»՝ Ք. Ջումբլաթի գլխավորությամբ։

1975-ից սկսվեցին զինված բախումներ՝ մի կողմից «Ազգային շարժման» ու ՊԱԿ-ի, մյուս կողմից՝ «Լիբանանյան ճակատի»** միջև։ Սիրիայի բոլոր ջանքերը՝ պաղեստինցիներին հակա-

---

* Այդ ժամանակ Լիբանանում էին գտնվում մոտ 230 հազար պաղեստինցի փախստականներ։

** «Լիբանանյան ճակատի» մեջ միավորվել էին երկրի աջ ուժերը՝ Սուլեյման Ֆրանժիեի, Պիեռ Ժմայելի և Քամիլ Շամունի գլխավորությամբ։

մարտությունից հեռու պահելուն, ապարդյուն անցան։ Հարկ է նշել, որ դեռևս 1975 թ. սեպտեմբերին, երբ հատուկ առաքելությամբ Բեյրութ ժամանեց Սիրիայի արտաքին գործերի նախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամը[4], վերջինիս միջնորդությամբ ստեղծվեց «Ազգային երկխոսության կոմիտե», որի մեջ մտան Լիբանանի աջ և ձախ ուժերը։ Սակայն կոմիտեի ընդունած ծրագրերը, որոնք նպատակ ունեին հասնել կրակի դադարեցմանը, ձախողվեցին՝ «Լիբանանյան ճակատի» կողմից ձեռնարկված նոր բախումների հետևանքով[5]։

1976 թ. հունվարին սիրիական տարածքից Լիբանան մտան Պաղեստինի ազատագրության բանակի և պաղեստինցիներից կազմված «Աս-Սաիկա» սիրիամետ կազմակերպության մարտիկները։ Սիրիայի յուրաքանչյուր քայլ առաջ էր բերում ՊԱԿ-ի և «Ազգային շարժման» միջև կապերի էլ ավելի սերտացում, և ընդգծվում էր նրանց քաղաքականության հակասիրիական բնույթը։

Այն, որ Դամասկոսն ուզում էր իր ազդեցությունը հաստատել ինչպես ողջ Լիբանանում, այնպես էլ ՊԱԿ-ի վրա և իր քաղաքականությունը թելադրել, վիճարկելի հարց չէ բնավ։ Սակայն պետք է ընդունել նաև այն հանգամանքը, որ այդ ուղղությամբ Սիրիայի ջանքերը միայն մեկ նպատակ էին հետապնդում՝ համախմբել արաբական ուժերը, հատկապես պաղեստինյան, լիբանանյան և հորդանանյան՝ Իսրայելին դիմակայելու և Սիրիայի անվտանգությունն ապահովելու համար[6]։ Սիրիայի նախագահ Հաֆեզ ալ-Ասադը, այս հարցում մերժում ստանալով Քամալ Ջումբլաթից և ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթից, ստիպված եղավ դիմելու ռազմական միջամտության, որն իրականացրեց 1976 թ. մայիսի 31-ին, երբ սիրիական բանակը բռնի ներխուժեց Լիբանան և գրավեց ձախերի և ՊԱԿ-ի ազդեցության տակ գտնվող մի շարք բնակավայրեր, մասնավորապես Բեկաայի շրջանում։

Իրականում ինչո՞վ էր պայմանավորված Սիրիայի միջամտությունը, որի հետևանքով «լիբանանյան հակամարտությունը ձեռք բերեց միջազգային նշանակություն»[7]։ Բանն այն է, որ Դամասկոսը վախենում էր քրիստոնյաների հանդեպ Ք. Ջումբլաթի ու պաղեստինցիների հաղթանակից, քանի որ դա կարող էր հնարավորություն տալ Իսրայելին՝ քրիստոնյաներին փրկելու պատրվակով ներխուժել Լիբանան, ջախջախել պաղեստինցիներին ու

ձախ ուժերին և, ինչպես Պ. Սիլն է նշում, «բացառված չէր, որ կփորձեր (Իսրայելը—Ա. Հ.) ստեղծել քրիստոնեական պետություն իր հովանավորության ներքո»[8]։ Մինչդեռ, դա կնշանակեր լուրջ սպառնալիք Սիրիայի անվտանգությանը։ Ուստի Հաֆեզ ալ-Ասադը հանդես եկավ աջքրիստոնեական ուժերի «պաշտպանությամբ»՝ ռազմական բախման մեջ մտնելով «Ազգային շարժման» ու ՊԱԿ-ի հետ։ Սիրիայի ռազմական միջամտությունը չփորձեցին կանխել և նրան չպատասխանեցին ո՛չ Իսրայելը, և ո՛չ էլ Միացյալ Նահանգները, քանզի նրանք հասկացան, որ սիրիական ներխուժումը մի կողմից կօգնի իրենց դաշնակիցներին՝ «Լիբանանյան ճակատի» մեջ միավորված աջքրիստոնեական ուժերին, իսկ մյուս կողմից՝ կթուլացնի սիրիական բանակը։

Ամեն ինչ պատրաստ էր «ԱՄՆ—Սիրիա—Իսրայել գաղտնի համագործակցության համար, որը կոչվեց «կարմիր գծի» համաձայնություն, մի չգրված, չստորագրված և Սիրիայի կողմից երդում չարված համաձայնագիր, որով Իսրայելը համաձայնեց, որ Սիրիան մտնի Լիբանան»[9]։ Թեև նախքան այդ Թել Ավիվն ու Վաշինգտոնը դեմ էին լիբանանյան հակամարտությանը Դամասկոսի որևէ միջամտության։

Թերևս նման քաղաքական իրադրության արդյունքն էր այն, որ սիրիական միջամտությունը «մշտապես ընթանում էր որոշակի «շրջանակներում», որոնցից այն կողմ անցնելը Դամասկոսը վտանգավոր էր համարում»[10]։

Սակայն սիրիական բանակի մուտքը Լիբանան պայմանավորված էր նաև մեկ այլ հանգամանքով։ Խոսքը վերաբերում է Ջումբլաթի՝ իշխանության հասնելու հետապնդած նպատակին, որը նրա և Սիրիայի նախագահի միջև հարաբերությունների լարվածության գլխավոր պատճառներից մեկն էր[11] և ամենևին էլ չէր կապվում Իսրայելի և լիբանանյան աջերի հետ Սիրիայի ունեցած հարաբերություններին։

Ք. Ջումբլաթը չէր թաքցնում Սիրիայում իշխող Բաաս կուսակցության հանդեպ իր հակակրանքը և չէր ընդունում այն որպես ազգային շահերից բխող գաղափարախոսություն[12]։ Հետևաբար, իշխանության հասնելուց հետո, Ջումբլաթն ունենալու էր հակարաաաական դիրքորոշում, մի բան, որը լուրջ անհանգստություն էր պատճառում Սիրիայի ղեկավարությանը։

Սիրիայի ռազմական միջամտությունը լիբանանյան հակամարտությանը խոր դժգոհություն առաջացրեց արաբական մի շարք երկրների մոտ։ Եգիպտոսը դատապարտեց Սիրիայի՝ արաբական երկրների հետ չհամաձայնեցրած քայլը և խզեց Դամասկոսի հետ դիվանագիտական հարաբերությունները[13], Իրաքն իր զորքերը ուղարկեց սիրիական սահմանի մոտ, իսկ Սաուդյան Ծրարիան չեզոք դիրք գրավեց և այլն։

1976 թ. հոկտեմբերի 18-ին առ-Ռիյադում կայացավ արաբական պետությունների ղեկավարների հանդիպումը, որին մասնակցում էր նաև ՊԱԿ-ի նախագահ Յասիր Արաֆաթը։ Այստեղ Սաուդյան Արաբիայի միջնորդության շնորհիվ, որոշ չափով կարգավորվեցին սիրիա-եգիպտական հարաբերությունները[14]։ Առ-Ռիյադի հանդիպման ժամանակ որոշվեց նաև դադարեցնել կրակը Լիբանանում, և օրինականացվեց սիրիական զորքերի ներկայությունն այնտեղ։

Նույն թվականի հոկտեմբերի 25—26-ը Կահիրեում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների՝ լիբանանյան ճգնաժամի կարգավորմանն ուղղված երկրորդ հանդիպումը, որտեղ սահմանվեց Լիբանանում գտնվող սիրիական զորքերի քանակը (30 հզ.)։ Կազմվեցին միջարաբական խաղաղապահպան ուժեր, որի մեջ մտան Սաուդյան Արաբիայի, Լիբիայի, Սուդանի և արաբական մի շարք այլ երկրների զորամիավորումները, որոնք որոշ ժամանակ հետո ետ կանչվեցին, և Լիբանանում մնացին միայն սիրիական զորքերը։

Այսպիսով, առ-Ռիյադի և Կահիրեի հանդիպումների ժամանակ սահմանվեց Սիրիայի «հատուկ կարգավիճակը» Լիբանանում։

Սակայն այդ հանդիպումների ընթացքում ընդունված որոշումները լուրջ ներդրում չունեցան խնդրի արմատական կարգավորման հարցում[15], թեև նպաստեցին ռազմական գործողությունների ժամանակավորապես դադարեցմանը։

Այս ժամանակվանից սկսած լիբանանյան ճգնաժամը թևակոխում է մի նոր փուլ, որի հանդեպ Սիրիայի հետաքրքրություններն էլ ավելի ակտիվ բնույթ են կրում՝ մշտապես այն պահելով իր արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում։

ARTAK HOVHANNISIAN

THE MILITARY INTERVENTION OF SYRIA IN THE LEBANESE CONFLICT IN 1976

The first stage of the Lebanese crisis, which covered 1975—1976, occupied an important place in the foreign policy of Syria.

The author examines the causes of the Syrian intervention in the Lebanese confrontation in 1976. We suppose that it was undertaken to rescue the right Christian forces who appeared in dangerous situation at that time in their struggle agaInts the National Patriotic forces of Lebanon and the Palestine Liberation Organization. By this action the Syrian leadership intended to prevent the probable Israeli intervention in Lebanon, who as it was supposed could do it under the mask of helping the Christians. This brought to the worsening of the relations between Syria from one hand, and the „National Movement" of Lebanon and the Palestine Liberation Organization, from the other hand.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *P. Seale*. Asad of Syria in the Struggle for the Middle East, Berkley and Los Angeles, 1988; *G. Lenzowski*. American Presidents and the Middle East, Durham and London, 1989; *N. Wenberger*, Syrian Intervention in Lebanon, New York, 19[illegible]6; *L. Chabry*, *A. Chabry*. Politique et Minorités au Proche-Orient, Paris, 1984; عادل رضا، قراءة في فكر الأسد، القاهرة ١٩٩٣ (Ադել Ռիդա. *Ասադի մտքերի մեկնություններ, Կահիրե, 1993*), احمد الاسعد، التكامل بين مرحلتين (Ահմադ ալ-Ասադ, *Համագործակցություն երկու շրջանում*)։ *С. Иванов*. Межарабская политика Сирии, т. 2, М., 1986; *Е. Дмитриев*, Палестинская трагедия, М., 1986; *Л. Вольнов*, Ливанский дневник, М., 1980. *В. Киселев*, Палестинская проблема и ближневосточный кризис. Киев, 1983, Գ. Սարգսյան, *Արաբական Արևելքի կոմունիստական կուսակցությունների և առաջադիմական ուժերի պայքարը դեմոկրատիայի ու սոցիալ-տնտեսական վերափոխումների համար, Երևան 1986։*

[2] *Kamal Joumblatt*, Pour le Liban. Paris, 1978.

كريم بقرادوني، السلام المفقود، بيروت ١٩٨٤

[3] Լիբանանյան հակամարտության պատճառների մասին տե՛ս Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982։

[4] Աբդ ալ-Հալիմ Խադդամի հետ միասին այդ առաքելությունն իրականացնում էին նաև Սիրիայի գլխավոր շտաբի պետ Հիքմեթ Շիհաբին և ռազմական ուժերի հրամանատար Նաջի Ջամիլը։

[5] Новейшая история Арабских стран Азии, М. 1988, стр. 135.

[6] *P. Seale* նշվ. աշխ., էջ 263։

[7] *G. Lenzowski*, նշվ. աշխ., էջ 216։

[8] *P. Seale*, նշվ. աշխ., էջ 279։

[9] Նույն տեղում, էջ 279։

[10] *С. Иванов*, նշվ. աշխ., էջ 350։

[11] *K. Joumblatt*, նշվ. աշխ., էջ 167։

[12] Նույն տեղում, էջ 160։

[13] Այս մասին մանրամասն տե՛ս Քարիմ Բագրատունի, նշվ. աշխ., էջ 83—67։

[14] Арабский мир. Три десятилетия независимого развития. М. 1990. стр. 306.

[15] Շ. Կարամանուկյան, *Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում*, Երևան, 1988, էջ 165։

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՈՍՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Մոսուլի խնդրի քննարկումը Լոզանի կոնֆերանսում անցավ մի շարք փուլեր. խնդրի քննարկումը անգլո-թուրքական բանավոր բանակցությունների ընթացքում, խնդրի հետ կապված գրավոր հուշագրերի փոխանակում, ապա խնդրի քննարկումը անգլո-թուրքական փորձագետների հատուկ հանձնաժողովում և, ի վերջո, խնդրի քննարկումը կոնֆերանսի նստաշրջաններում։

Կոնֆերանսի առաջին իսկ օրերից սկսած լորդ Քերզոնի և Իսմեթ փաշայի միջև սկսվեցին բավականին աշխույժ բանակցություններ Մոսուլի խնդրի շուրջ[1]։

Արդեն 1922 թ. նոյեմբերի 27-ին Իսմեթ փաշան բացահայտորեն պահանջեց Մոսուլը՝ բերելով «էթնիկական և այլ փաստարկներ», որոնք, ինչպես Քերզոնն է ասում, «հերքելը դժվար չէր»։ Քերզոնը վճռականորեն մերժեց թուրքական կողմի պահանջները[2]։ Եվ ահա, «համոզվելով, որ անգլիական պատվիրակության վրա «ֆրոնտալ հարձակումներ» գործելով անկարող է Մոսուլը ձեռք գցել, թուրքական պատվիրակությունը դիմեց շրջանցելու խորամանկ քայլերի»[3]՝ գործարքների գայթակղիչ մանյովրին, գործարք, որն առաջարկեց թուրքական պատվիրակության անդամ Ռիզա Նուր Բեյը։ 1922 թ. դեկտեմբերի 6-ին Քերզոնը հեռագրում է Քրոուվին. «Այս առավոտյան թուրքական պատվիրակության 2-րդ պատվիրակ Ռիզա Նուր Բեյն ինձ կոչ արեց շարունակել մասնավոր զրույցները, որ նա սկսել էր երեկ։ Բարեկամական մտադրությունների երկկողմանի բազմաթիվ հավաստիացումներից հետո, նրա փաստարկը հանգեց հետևյալին. Թուրքիան կընդառաջի մեզ գոհացնող պայմանագրի մեջ մտնող բոլոր կետերում և նույնիսկ կխզի (իր կապերը—Վ. Պ.) Խորհուրդների հետ, եթե միայն

մենք իրենց հանձնենք Մոսուլի վիլայեթը»[4]։ Ռիզա Նուր Բեյն իր խնդրանքը հիմնավորեց չորս փաստարկներով. 1. էթնիկական, որը Քերզոնը կտրուկ հերքեց, 2. պատմական՝ կապը Թուրքիայի հետ, 3. տնտեսական՝ ապագայում Թուրքիայի տնտեսության համար՝ Մոսուլի, իսկ վերջինիս տնտեսության համար Թուրքիայի կենսական նշանակությունը, 4. Ազգային Ուխտի փաստարկը, որին հետևելով, Անկարան բացարձակ և հաստատուն կերպով հրաժարվում էր կնքել ցանկացած պայմանագիր, եթե այն չընդգրկի Մոսուլը[5]։ Քերզոնը հերքեց Ռիզա Նուր Բեյի բոլոր չորս փաստարկները և հասկացրեց, որ Մոսուլը չի զիջվելու։ Այդ հարցում իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ Քերզոնին քաջ հայտնի էր գաղութների նախարարության դիրքորոշումը. Մոսուլի զիջումը կհանգեցնի նրան, որ անգլիացիները հարկադրված կլինեն զիջելու նաև Բաղդադը, որի զիջումը կբերի Իրաքի կորստին և Իրաքի թագավորության փլուզմանը, իսկ վերջինիս արդյունքը կլինի ի վերջո «Արևելքում Բրիտանական քաղաքականության վերջնական պարտությունը»[6]։ Քերզոնը նաև կասկածում էր. արդյո՞ք թուրքերը Մոսուլը չեն պահանջում Խորհրդային Ռուսաստանի դրդմամբ և հաշտության պայմանագրի կնքումը վիժեցնելու նպատակով, Չէ՞ որ, Մոսուլը չստանալու դեպքում թուրքերն արդեն կարող էին ասել. «մենք առաջարկեցինք հաշտություն կնքել դաշնակիցների և հատկապես Մեծ Բրիտանիայի հետ, մենք կամենում էինք ընդառաջել նրանց ցանկացած կետում, միայն թե մենք վերստանայինք Մոսուլը. սակայն ի սեր Մոսուլի և նրա նավթի Բրիտանիան արհամարհեց մեզ և մերժեց խաղաղությունը՝ աշխարհի համար»[7]։

Այդուհանդերձ Խորհուրդների հետ կապը խզելու Թուրքիայի պատրաստակամությունը գայթակղեց Քերզոնին։ Միևնույն ժամանակ Քերզոնը ձգտում էր վերացնել խաղաղության ճանապարհին եղած Մոսուլի արգելքը։ Նույն՝ 1922 թ. դեկտեմբերի 6-ի կեսօրին Քերզոնի մոտ հղացավ փոխզիջումային մի տարբերակ, որի մասին Քերզոնը հաղորդում է նույն՝ 1922 թ. դեկտեմբերի 6-ի իր հեռագրում, խնդրելով Ֆորին օֆիսի տեսակետը։ Դիմելով Ֆորին օֆիսին՝ Քերզոնը նշում է. «գուցեև հնարավոր լինի թվացյալ ձևով և մասամբ բավարարելու թուրքական ցանկությունները, առաջարկելով նրանց Մոսուլի վիլայեթի քրդական հատվածը՝ հե-

տանելով լեռների գծին և ներառելով Քյոյ-Սանջակը, Ռեանդուզը և Սուլեյմանիեն, միևնույն ժամանակ Իրաքին թողնելով Ամադիան՝ ասորի քրիստոնյաների համար, Մոսուլ քաղաքը, Էրբիլը, Քիրքուկը և արաբներով բնակեցված ողջ դաշտային երկիրը»[8]։ Չի բացառվում, որ թուրքերին մասնաբաժին խոստացվի Մոսուլի նավթից։ Իր այս տարբերակի մասին Քերզոնը նախ հարցրել էր Իրաքյան կառավարության ներկայացուցիչ Ջաֆար փաշայի կարծիքը։ Վերջինս դեմ չէր եղել Քերզոնի այս փոխզիջումային տարբերակին, միայն կտրուկ զգուշացրել էր Քերզոնին, որ փոխզիջումային և ոչ մի տարբերակի դեպքում երկրի դաշտային մասի որևէ տարածք չզիջվի։ Եվ ահա Քերզոնը, Իրաքի տեղական իշխանությունների աջակցությունը ստանալով, այժմ արդեն ցանկանում էր իմանալ իր կողմից գլխավորվող Ֆորին օֆիսի դիրքորոշումը։ Քերզոնի փոխզիջումային տարբերակը քննարկվեց 1922 թ. դեկտեմբերի 8-ի առավոտյան՝ բրիտանական կաբինետի հատուկ հանձնաժողովի կողմից՝ Մեծ Բրիտանիայի գլխավոր շտաբի ռազմաօդային պաշտպանության և ղաղութների նախարարության ներկայացուցիչների ներկայությամբ[9]։ Ի վերջո 1922 թ. դեկտեմբերի 8-ի՝ Քերզոնին հղված գաղտնի հեռագրում բրիտանական Ֆորին օֆիսը հայտնում էր Քերզոնին, որ վերջինիս փոխզիջումային տարբերակը միաձայն մերժվել է[10]։ Մերժումը հիմնավորվում էր հետևյալ փաստարկներով. 1. Զիջումներ անելով թուրքերին և վերջիններիս փոխզիջումային առաջարկությունները կատարելով, առաջարկություններ, որոնք նույնիսկ քիչ հավանական է, որ կընդունվեն վերջիններիս կողմից, Բրիտանիան միայն կարող է թուլացնել իր դիրքերը Լոզանում ընթացող բանակցություններում։ Իսկ թուրքերի կողմից բրիտանական փոխզիջումային առաջարկության ընդունումը քիչ հավանական է, քանի որ թուրքերն ուզում են «հենց Մոսուլը և թուրքախոս քաղաքները և ոչ թե քրդական վայրի բլուրները, որոնք նրանց կարող են ավելի շատ անհանգստություն բերել, քան առավելություն»։ Բացի այդ Բրիտանիան պարտավորություն է ստանձնել Իրաքի առջև նրա տարածքի և ոչ մի մասը չզիջելու մասին։ Անիմաստ է վտանգել Իրաքում Բրիտանիայի դիրքերը երևակայական շահերի համար՝ թուրքերին այնպիսի առաջարկություն անելով, որն, ամենայն հավանականությամբ, կմերժվի վերջիններիս կողմից։ Ուստի Իրաքի ներկայիս սահմանները պետք է թողնել այնպես, ինչպես կա։

2. «Եթե նույնիսկ առաջարկվող փոխզիջումն ընդունվի «թուրքերի կողմից, քիչ հավանական է, որ այդ կարգավորումը երկար կյանք կունենա: Քրդական գոտին զիջած լինելով, բրիտանացիները չեն կարող անսահմանորեն դիմագրավել» թուրքախոս քաղաքների նկատմամբ թուրքական հավակնություններին, միևնույն է, վաղ թե ուշ վերջիններս կպահանջեն թուրքախոս բնակչություն ունեցող քաղաքները, որտեղ նրանց ազդեցությունը գնալով կմեծանա։ Այդ ժամանակ թուրքերն իրենց ձեռքում հաղթաթուղթ ունենալով, կկարողանան կտրել Մոսուլի և Բաղդադի միջև հաղորդակցական ուղիները՝ կոմունիկացիաները՝ Քիֆրի—Քիրքուկ—Ալթըն--Քյուփրյու—Էրբիլի գծով:

3. Նույնիսկ, եթե ենթադրենք, որ փոխզիջումային սահմանն ընդունվի և պահպանվի մոտավորապես 200 մղոն երկարություն ունեցող Բաղդագ—Մոսուլ բրիտանական հաղորդակցման ուղիների ողջ երկայնքով, բրիտանացիները սահմանակից կլինեն անհնազանդ մի երկրի հետ, այսինքն՝ կլինեն մշտական սպառնալիքի տակ, բրիտանական հաղորդակցման ուղիները կարող են կտրվել ցանկացած պահի և ռազմական տեսանկյունից էլ Մոսուլի պահպանումը գործնական չի լինի։

4. Քրդական շրջանների վրա թուրքերը չեն ունենա անհրաժեշտ ազդեցություն։ Քրդական շրջաններում Թուրքիայի ազդեցությունը կլինի լոկ անվանական, միևնույն ժամանակ Անգլիան էլ զրկված կլինի այդ շրջաններում ազդեցությունից, կկորցնի ազդեցության բոլոր լծակները։ Հարձակումների ու անհանգստությունների դեպքում Բրիտանիայի միակ դեղամիջոցը կլինի դիվանագիտական գործողությունը, որը, սակայն, բավարար չի լինի, ավելին, կլինի ոչ համազոր։

5. Քրդական շրջանների հանձնումը նաև վտանգի կենթարկի հաղորդակցությունը Բաղդադի և Պարսկաստանի միջև՝ Քըզըլ Ռուբաթի և Խանեօինի վրայով։

6. Հարավային Քրդստանի ցեղակիցների՝ առաջարկվող բաժանումը առաջ կբերի նաև մի շարք վարչական դժվարություններ։

7. Եթե հիշյալ իրավիճակը պահպանվի, անհրաժեշտ կլինի զգալիորեն ուժեղացնել առկա կայազորները։

Ֆորին օֆիսը եզրակացնում էր, որ Քերզոնի առաջարկն իրականում «չի պարունակում ռեալ փոխզիջման ոչ մի տարր» և թուր-

թերի կողմից ընդունվելու դեպքում, վերջիններիս կողմից այն կընկալվի լոկ որպես «հետագա զավթման ուղղությամբ կատարված առաջին քայլ», որն անխուսափելիորեն կհանգեցնի նրան, որ բրիտանացիները դուրս կմղվեն ողջ Մոսուլի վիլայեթից՝ բոլոր հնարավոր հետևանքներով։ Այսպիսով, Քերզոնի «փոխզիջումային առաջարկի» տարբերակը մերժվեց բրիտանական Ֆորին օֆիսի կողմից[11]։

Իսկ թուրքերը շարունակում էին պահանջել Մոսուլը։ 1922 թ. դեկտեմբերի 11-ին, դարձյալ պահանջելով հանձնել Մոսուլը, Իսմեթ Ինոնյուն «հայտարարեց, որ ինքը չի կարող Անկարա վերադառնալ առանց դրա (Մոսուլի—Վ. Պ.)»[12]։ Լորդ Քերզոնը նախապես կտրականապես մերժելով Ի. Ինոնյուին, միաժամանակ առաջարկեց վերջինիս մի նոտա հղել, որում մանրամասնորեն լուսաբանվեին մերժման պատճառները[13]։ Ի դեպ այդ ժամանակ, և նաև հետագայում, Քերզոնը որպես հիմնավորում բերում էր այն փաստը, որ նույնիսկ Ազգային Ուխտի առաջին հոդվածը իր մեջ չի նախատեսում Մոսուլի վերադարձը թուրքերին, Ազգային Ուխտ, որն Ի. Ինոնյուն համարում էր նոր Թուրքիայի յուրահատուկ «Ազատությունների մեծ խարտիա (1215)»։ Ջանցավ և տաս օր և թուրքական պատվիրակությունը դարձյալ պահանջեց Մոսուլը, դարձյալ մերժում ստացավ[14]։

Անգլո-թուրքական դեմ առ դեմ բանակցություններն ու առանձնազրույցները Մոսուլի խնդրի շուրջ ի վիճակի չէին լուծելու հիշյալ խնդիրը։ Կողմերի տեսակետները հակադիր բևեռներ էին. թուրքերը պահանջում էին Մոսուլը, անգլիացիները չէին ուզում տալ...

Եվ ահա, բանավոր բանակցություններին զուգահեռ, 1922 թ. դեկտեմբերի կեսերից սկսած անգլիական ու թուրքական պատվիրակությունները սկսեցին փոխանակել գրավոր հուշագրեր՝ շարադրելով իրենց տեսակետներն ու դիրքորոշումը։ 1923 թ. դեկտեմբերի 14-ի ընդարձակ հուշագրում Քերզոնն ի պաշտպանություն անգլիական տեսակետի բերում էր էթնոգրաֆիկական, պատմական, քաղաքական, տնտեսական և ստրատեգիական փաստարկներ, դրանց ավելացնելով նաև «Ազգային Ուխտի» իրավաբանական վերլուծությունը՝ «նույնիսկ Ազգային Ուխտի 1-ին հոդվածը չի նախատեսում Մոսուլի վերադարձը թուրքերին»։ Քերզոնի հու-

շագրին Իսմեթ փաշան պատասխանեց իր նույնքան ընդարձակ հուշագրով, որտեղ, բացի էթնոգրաֆիական, պատմական, քաղաքական, տնտեսական և ստրատեգիական փաստարկներից ու Ազգային Ուխտի վերլուծությունից, բերում էր նաև աշխարհագրական փաստարկը[15]։ Թուրքական հուշագրին Քերզոնը պատասխանեց մի նոր հուշագրով, որտեղ բերեց բոլոր փաստարկները, այդ թվում և աշխարհագրական փաստարկը։ Իր հերթին Իսմեթ փաշան, 1922 թ. դեկտեմբերի 29-ին, ի պատասխան բրիտանական երկրորդ հուշագրի, Քերզոնին հղեց թուրքական կողմի երկրորդ հուշագիրը[16]։ Այսպիսով ստացվեց մի զրավոր հեքիաթ՝ Մոսուլի սպիտակ ցլիկի մասին, որն իր անպտղությամբ ոչնչով չէր տարբերվում կողմերի վերջին ժամանակների բանավոր ներկայացումներից[17]։ Հուշագրերի փոխանակմամբ երկու կողմերը ձգտում էին ազդել Լոզանի կոնֆերանսի մյուս մասնակիցների վրա։ Սակայն հիշյալ «հուշագրերը ոչ մի տպավորություն չգործեցին պատվիրակությունների վրա և ոչ մի քայլ առաջ չտարան Մոսուլի համար անգլո-թուրքական վիճաբանությունը»[18]։ Մոսուլի խնդիրը գնալով դառնում էր հաշտության կնքման ճանապարհին եղած ամենախոշոր արգելքներից մեկը։ Դա անհանգստացնում էր պաշտոնական Լոնդոնին[19]։ Բրիտանիայի վարչապետը՝ Բոնար Լոուն, խորհուրդ էր տալիս արտգործնախարար Քերզոնին՝ «չհամառել, ամեն կերպ հասնել հաշտության»[20]։ 1922 թ. դեկտեմբերի 28-ին Բոնար Լոուն գրում էր Քերզոնին. «Դժվարությունները, որոնք ձեզ հաջողվում է հաղթահարել, կարծես թե ավելանում են։ Դատելով թերթերից թուրքերը կարող են կառչել Մոսուլից որպես հիմք՝ կոնֆերանսը վիժեցնելու համար։ Բոլոր առումներով դա կլիներ մեզ համար ամենադժբախտ իրողությունը, քանզի մեր ժողովրդի կեսը և ողջ աշխարհը կասեին, որ նավթի պատճառով մենք հրաժարվեցինք հաշտության կնքումից»[21]։

Այնուհետև, երբ Լոզանի կոնֆերանսում ի հայտ եկան նոր դժվարություններ, Քերզոնը, Բոնար Լոուի հետ հանդիպելու և վերջինիս հետ խորհրդակցելու նպատակով, ժամանեց Փարիզ[21]։ Հանդիպման ժամանակ Բոնար Լոուն դարձյալ զգուշացրեց Քերզոնին, որպեսզի վերջինս ձեռնպահ մնա անզգույշ քայլերից և ամեն գնով հասնի հաշտության կնքմանը։ Բրիտանիայի արտգործնախարար Քերզոնը իր կնոջը գրած նամակում այսպես է

նկարագրում Բոնար Լոուի հետ իր հանդիպումն ու վերջինիս՝ վարչապետի, դիրքորոշումն ու տրամադրությունը։ «Ես գտա Բոնարին ձգտումներով լի՝ ազատվելու Մոսուլի, նեղուցների, Կոստանդնուպոլիսի հոգսերից, պատրաստ զիջելու ամեն ինչում, միայն թե չունենա անախորժություններ, ապշած այն պատասխանատվությամբ, որ ես ստանձնել եմ Լոզանում, և պատրաստ նահանջելու ամենուր»[22]։

Ինչ վերաբերում է Բոնար Լոուին, ապա Քերզոնի հետ հանդիպումը նրան վշտացրել էր, քանի որ վերջինիս թվում էր, որ Քերզոնն իր կամակորությամբ և անհաշտ դիրք գրավելով կարող էր վտանգի տակ դնել հաշտության կնքումը[23]։ Իզուր չէ, որ 1923 թ. հունվարի 8-ին, Քերզոնին գրած իր նամակում Բոնար Լոուն կրկին համոզում է վերջինիս, հիշեցնելով. «1. Անգլիան չի կարող Մոսուլի համար պատերազմ սկսել, 2. առանց Ֆրանսիայի աջակցության Անգլիան չի կարող ստիպել Թուրքիային համաձայնելու պահպանել այն, ինչը դեռ մնացել է Սևրի հաշտությունից»[24]։

Սակայն Քերզոնը Մոսուլի հարցում անհաշտ ու հստակ դիրք էր գրավել՝ Մոսուլն անվերապահորեն պետք է մնա Բրիտանիայի մանդատի տակ գտնվող Իրաքի կազմում։ Իսկ թուրքական կողմը չէր զիջում և ձգտում էր նույնիսկ կողմնակիցներ գտնել։ Զգալով, որ ի՛ բանավոր դեմ առ դեմ բանակցություններն ու առանձնազրույցները, և՛ գրավոր հուշագրերի փոխանակումը չեն տալիս ցանկալի արդյունք, ավելին, Մոսուլի խնդրում և ոչ մի առաջխաղացում չկա, լորդ Քերզոնն առաջարկեց հարցի լուծման 3-րդ ճանապարհը՝ հարցը հանձնել բրիտանական և թուրքական փորձագետների հատուկ հանձնաժողովին։ Իսմեթ փաշան համաձայնեց, սակայն «փորձագետների հանձնաժողովից էլ ոչինչ դուրս չեկավ»[24]։ Տեսնելով բոլոր երեք հիշյալ ուղիների անարդյունավետությունը, «Բրիտանական պատվիրակությունը որոշեց (Մոսուլի շուրջ—Վ. Պ.) վիճաբանությունը տեղափոխել կոնֆերանսի նըստաշրջաններ»[25]։

Այսպես, «երբ 1923 թ. հունվարին այդ խնդրի հետ կապված բանակցությունները մտան փակուղի, Անկարան, աջակցություն ստանալու նպատակով, փորձեց մերձենալ ֆրանսիական կառավարության հետ, սակայն անհաջող»[26]։ Ինչպես Գ. Վ. Չիչերինն էր գրում. «Ֆրանսիան ու Իտալիան մի կողմ քաշվեցին և հնարավո-

րություն տվեցին Անգլիային միայնակ սակարկելու այդ խնդրում»[27]։ Ավելին, Մոսուլի խնդրի քննարկումներից մեկի ժամանակ (1923 թ. հունվարի 23-ին), երբ Քերզոնն Իսմեթ փաշային սպառնալով, ասաց, որ բրիտանական կառավարությունն ամեն կերպ ձգտում է «խուսափել խաղաղությունը խախտելուց», Քերզոնին միանշանակ պաշտպանեցին և՛ Ֆրանսիայի պատվիրակ Բոմպարը, և՛ Իտալիայի ու Ճապոնիայի պատվիրակները։ Թեև, պետք է ասել, որ թուրքական պատվիրակությունը գլխավորող Իսմեթ փաշայի վրա ո՛չ սպառնալիքները, ո՛չ ճնշումը չունեցան և ոչ մի ազդեցություն։ Իզուր չէ, որ Քերզոնը, Բրիտանիայի ԱԳՆ աշխատակից Լինդսեյին հղած 1923 թ. հունվարի 23-ի իր հեռագրում նշում է. «Նույն հաջողությամբ ես կարող էի գիմել եգիպտական սֆինքսին կամ Թութանհամոնի մումիային»[28]։

Պետք է նշել, որ Լոզանում Մոսուլի խնդրի քննարկման հարցում առանձնահատուկ տեղ է գրավում հենց 1923 թ. հունվարի 23-ը։ Այդ օրը Լոզանի կոնֆերանսի (տարածքային առաջին հանձնաժողովի) աշխատանքներն ամբողջությամբ նվիրված էին Մոսուլի և դրա հետ կապված՝ նաև քրդական խնդիրներին։ Ինչպես և հուշագրերի փոխանակման ժամանակ, այս անգամ ևս կողմերը առաջ քաշեցին իրենց փաստարկներն ու տվյալները՝ իրենց միանգամայն հակադիր պնդումները հաստատելու համար։ Քննարկումներն սկսվեցին Քերզոնի ընդարձակ ճառով, որտեղ Բրիտանիայի արտգործնախարարությունը բերում էր Մոսուլի վիլայեթի վերաբերյալ բրիտանական կողմի հետևյալ վիճակագրական տվյալները[29].

Շրջան	Քրդեր	Թուրքեր	Արաբներ	Քրիստոնյաներ	Հրեաներ	Ընդամենը
Մոսուլ	179.820 (30 հզ. եզդիներ)	14895	170663	57425	9565	432468
Էրբիլ	77000	15000	5100	4100	4800	106000
Քիրքուկ	45000	35000	10000	600	1400	92000
Սուլեյմանիե	152900	1000	—	100	1000	155000
Ընդամենը	451720	65895	185763	62225	16865	785468

Այնուհետև լորդ Քերզոնը շարադրեց նաև Մոսուլի խնդրի հետ կապված անգլիական փաստարկումները։

ա) Ռասայական

1. Վերոհիշյալ վիճակագրությունն ընդգրկում է քոչվորներին, որոնք քոչվորական կյանք են վարում Մոսուլի վիլայեթի սահմաններում։

2. Թուրքական թվերը հին են և ոչ ամբողջական։ Վիճակագրությունը թերի է, հիմնված ռազմական գերատեսչության տվյալների վրա։

3. Արաբները կազմում են Մոսուլ քաղաքի բնակչության $^{2}/_{3}$-ը։ Տիգրիսից արևմուտք ընկած տարածքները զուտ արաբական են։ Տիգրիսի և Էրբիլ-Քիրքուկ-Քիթրի շրջանում (պիրող—Վ. Պ.) բնակչության ճնշող մեծամասնությունը արաբներ են։ Միայն հյուսիսարևելյան շրջանները արաբական չեն, սակայն այստեղ էլ ապրում են քրիստոնյաներ (ասորիներ), որոնք փախել են Թուրքիայից և չեն ցանկանում վերադառնալ Թուրքիա։ Թուրքերը կազմում են բնակչության 1/12 մասը։ Նրանք պատկանում են օսմանյան ռասայի տարբեր ճյուղերի։ Քրդերն իրենց լեզվով պատկանում են իրանցիներին, խիստ տարբերվելով թուրքերից։

բ) Քաղաքական

1. Քրդերը միշտ էլ տրամադրված են եղել ընդդեմ Կոստանդնուպոլսի։ Քրդերը երբեք էլ արդյունավետ կերպով չեն վերահսկել Հարավային Քուրդիստանը։ Պատերազմի ժամանակ քրդերն ավելի շատ օգնել են անգլիացիներին, քան թուրքերին։ Քիրքուկի շրջանում քրդերը քվեարկել են Ֆեյսալի օգտին։

2. Անգլիական զորքերը տեղաբաշխված են Մոսուլում։ Բնակչությունը ցանկանում է լինել Իրաքի կազմում։ 1920 թ. ապստամբությունը թուրքական պրոպագանդայի արդյունք էր։ Ներկայումս Իրաքն ապրում է անցման շրջան։ Բնակչությունը ցանկանում է հաստատուն ադմինիստրացիա։ Արաբները թուրքերին չեն ուզում։

3. Դաշնակիցները Մոսուլը խոստացել են արաբներին։ Ազգերի լիգայի հավանությանն արժանացած մանդատների սկզբունքը չի կարող խախտվել երկրում առանց նրան ամբողջությամբ վնասելու։ Թուրքիան անվերապահորեն ճանաչել է մանդատների սիստեմը (Ֆրանկլեն-Բույոնի պայմանագիրը)։ Անգլիացիները

Ֆեյսալի հետ համաձայնագիր են կնքել, որի համաձայն երկիրը չի կարող մասնատվել։

4. Զինադադարի ստորագրման պահին դաշնակիցները Մոսուլից մի քանի մղոն հեռավորության վրա էին։ Զինադադարի հոդվածներից մեկը թույլ է տալիս տարածքներ զբաղեցնել՝ անվտանգության նկատառումներից ելնելով։ Պատերազմական գործողությունները ավարտելու պահին բանակների զբաղեցրած դիրքերն ընդհանուր ոչինչ չունեն հաշտության պայմանագրի սահմանների հետ։ Անկարան էլ հրաժարվում է ճանաչել Մուդրոսի զինադադարը։

գ) Պատմական

1. Թուրքական փաստարկները կիրառելի են Բաղդադի նկատմամբ, որը թուրքերը չեն պահանջում։ Ադմինիստրատիվ առումով Մոսուլը կարող է դառնալ առանձին վիլայեթ։ Չէ՞ որ Հունաստանի պատմական և էթնիկական կապերը Անատոլիայի հետ դեռ պատճառ չեն, որպեսզի վերջինս տրվի Հունաստանին։

դ) Աշխարհագրական և տնտեսական

1. Մոսուլն աշխարհագրականորեն և տնտեսապես անբաժանելի է Իրաքից։

2. Մոսուլն Անատոլիայի հետ թույլ է կապված։ Առևտրական ճանապարհներն անցնում են Սիրիայով և ավելի հյուսիսով։ Հարավային Քուրդիստանը ձգտում է դեպի Բաղդադ և ոչ թե դեպի Անատոլիա։

ե) Ռազմական

1. Թուրքական բանակը Մոսուլում (գտնվելու դեպքում—Վ. Պ.) կսպառնա Բաղդադին։

2. Ջեբել-Համբինը ոչ թե լեռներ են, այլ բլուրներ։ Թուրքերը հեշտությամբ կարող են գրավել Բաղդադը՝ Իրաքի շտեմարանը, և դեպի Իրան տանող առևտրական ճանապարհները։ Թուրքական սահմանը Եվրոպայում գտնվում է Կոստանդնուպոլսից 80 մղոն հեռավորության վրա։ Թուրքերն ասում են, որ իրենց անվտանգության համար այդքանը բավարար չէ։ Սակայն Բաղդադից 60 մղոն հեռավորությունը նրանք բավարար են համարում։ Կոստանդնուպոլսի անվտանգությունը երաշխավորվում է նեղուցների վերաբերյալ կոնվենցիայով[80]։

Նույն օրը՝ 1923 թ. հունվարի 23-ին Քերզոնի նախագահությամբ կայացան տարածքային և ռազմական հարցերի գծով հանձնաժողովի 21-րդ և 22-րդ նստաշրջանները, որոնցում առաջինը (թեև ի պատասխան Քերզոնի արտասանած ճառի) ելույթ ունեցավ Իսմեթ փաշան։ Վերջինս կրկին հրապարակ բերեց Մոսուլի վերաբերյալ թուրքական վիճակագրական տվյալներն ու թուրքական կողմի երիցս հիշատակած զանազան փաստարկները.

Թուրքական կողմի վիճակագրական տվյալները[31].

Շրջան	Քրդեր	Թուրքեր	Արաբներ	Ոչ մահմեդականներ	Ընդամենը
Սուլեյմանիե	62830	[illegible]	7210	—	103609
Քիրքուկ	97000	79000	8000	—	184000
Մոսուլ	122000 18 հզ. եզդիներ	35000	28000	31000	216000
Ընդամենը	281830	1[illegible]929	43210	31000	508000

Թուրքական կողմի փաստարկները.

ա) Ռասայական

1. 170 հզ քոչվորներ մտցված չեն (ցուցակի մեջ—Վ. Պ.), քանի որ քոչվորական կյանք են վարում այլ շրջաններում։

2. Թուրքերը վաղուց են իշխում երկրում և քաղաքաբնակ են բնակչության թվաքանակին։ Անգլիական թվերը պայմանավորված են արաբական շահերի պաշտպանությամբ։

3. (Տարածքի բնակչության—Վ. Պ.) 85%-ը կազմում է թուրքքրդական մեծամասնությունը։ Արաբերեն խոսողներից շատերն իրականում թուրքեր են, որոնք կորցրել են իրենց լեզուն կամ խոսում են երկու լեզուներով։ Տեղի թուրքերն ազգակից են անատոլիական թուրքերին։ Թուրքերն ու քրդերն ևս ազգակից են։ Բրիտանական հանրագիտարանը քրդերին ու թուրքերին համարում է թուրանյան և ոչ թե իրանյան ծագման։

բ) Քաղաքական

1. Քրդերը ցանկանում են վերամիավորվել Թուրքիայի հետ։ Նրանք չեն ցանկանում անջատում կամ ինքնավարություն, առա-

վել ևս՝ մտնել մի երկրի կազմի մեջ, որը եվրոպական պետություն գաղութ է։ Քրդերի համար թուրքական կառավարությունը օտարերկրյա կառավարություն չէ։ Նրանք ներկայացված են թուրքական պառլամենտում և «երջանիկ կլինեին ստանալու Թուրքիայի քաղաքացիության իրավունքները»։ Թուրքերի դեմ ապստամբությունները եղել են տեղական նշանակության և հրահրվել են օտարերկրյա տերությունների կողմից։ Քրդերը թշնամաբար են տրամադրված անգլիացիների և արաբների նկատմամբ։

2. Չկան ապացույցներ, որ Մոսուլի արաբները ցանկանում են լինել Իրաքի կազմում։ Անգլիացիները կեղեքում են երկիրը և հասարակության համակրանքը չեն վայելում (1920 թ. ապստամբությունը)։

3. Դաշնակիցները չունեն (այնպիսի—Վ. Պ.) միջազգային պարտավորություններ, որոնք խոչընդոտեին Մոսուլը Թուրքիային վերադարձնելուն։ Դաշնակիցները խոստացել են արաբներին՝ չզավթել Մոսուլը։ Սան-Ռեմոյի համաձայնագիրը, որով Մոսուլը տրըվում է Անգլիային, չի կարող ավելի հաստատուն լինել, քան ռազմական ժամանակաշրջանի համաձայնագրերը դաշնակիցների միջև, որոնք ճանաչվել են որպես ներկա իրադրությանը չհամապատասխանող։ Մանդատային սիստեմը չունի ոչ մի օրինական հիմնավորում, այդ իսկ պատճառով էլ դաշնակիցները չեն կարող պարտավորություններ ունենալ Ազգերի Լիգայի առջև։

4. Մոսուլն անգլիացիների կողմից զավթվել է Մուդրոսի զինադադարից հետո և հակառակ դրան։ Զավթման իրավունքը փաստարկ չէ, քանզի հաշվի չի նստում բնակչության կարծիքի հետ։

գ) Պատմական

11 դար է, ինչ Մոսուլը կառավարվում է Թուրքիայի կողմից։ Այն թուրքական և սելջուկյան սուլթանների իշխանության ներքո էր դեռ մինչև Օսմանյան կայսրության ծագումը և պարսկական խալիֆների ժամանակաշրջանում։ Մոսուլում գերակշռում են թուրքական էթնիկական անվանումները։

դ) Աշխարհագրական և տնտեսական

1. Աշխարհագրական և կլիմայական առումով Անատոլիան ու Իրաքը բաժանվում են Ջեբել-Համրին, Ջեբել-Ֆուհուլ-Վադի և Թա-

Թար-Ջերել-Սինջար գծով։ Այդ գծից ցեպի հյուսիս .փլունիկյան արժավենին արդեն չի անում։

2. Մոսուլը գտնվում է Անատոլիայի և Սիրիայի ու Պարսկաստանի միջև ընկած առևտրական ճանապարհների վրա։ Այն ելք է Հարավային Անատոլիայի համար։ Մոսուլը հիմնականում առևտուր է անում տարանցիկ անատոլիական ապրանքներով։ Միջերկրական ծովի հետ երկաթուղային կապի հաստատման պահին Մոսուլն ամենակարճ ճանապարհով կկապվի Եվրոպայի հետ։

ե) Ռազմական

1. Թուրքիան չունի ագրեսիվ մտադրություններ։

2. Ենթադրվող սահմանը ավելի մոտիկ չէ Բաղդադին, քան պարսկականը։ Եթե 70 մղոնը հերիք չէ, ապա ի՞նչ ասել Կոստանդնուպոլսի, Նեղուցների, Ադրիանապոլսի ու Թրակիայի մասին[32]։

Նոր էր վերջացրել իր ելույթը Իսմեթ փաշան, երբ Քերզոնը հանդես եկավ թուրքական փաստարկների քննադատությամբ։ Եվ, պետք է նշել, որ թուրքական փաստարկներն, իրոք, շատ խոցելի տեղեր ունեին։ Մի կողմից թուրքերը նշում էին, որ մանդատային համակարգը չունի որևէ օրինական հիմնավորում, որ Թուրքիան չի ճանաչում «մանդատը նախկին Օսմանյան կայսրության ցանկացած տարածքի համար»[33], մյուս կողմից քեմալականներն արդեն ճանաչել էին Սիրիայի նկատմամբ Ֆրանսիայի մանդատը՝ 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական և Անկարայի պայմանագրով։ Մի կողմից թուրքերն ասում էին, որ երկար ժամանակ երկրի տերուտնօրենը լինելով իրենք «քաջատեղյակ են բնակչության թվաքանակին», մյուս կողմից թուրքական վիճակագրական տվյալները Մոսուլի վերաբերյալ ավելի կցկտուր էին ու ոչ ամբողջական, քան անգլիական տվյալները[34]։ Մի կողմից թուրքերը հայտարարում էին, որ իրենք հրաժարվում են ճանաչել Մուդրոսի զինադադարը, իսկ մյուս կողմից, երբ իրենց ձեռնտու էր, պահանջում էին, որ Մոսուլի սահմանները գծվեն Մուդրոսի զինադադարի ստորագրման պահի դրությամբ։ Իսկ ինչ վերաբերում է քրդական հարցում թուրքական պնդումներին, ապա դրանք, մեղմ ասած, վիճելի էին։

Այո՛, արդարացի չէին ո՛չ անգլիացիները, ո՛չ թուրքերը, սակայն անգլիական փաստարկներն ավելի հիմնավոր էին։ Սակայն կողմերի երիցս կրկնված փաստարկները չէին կարող որևէ առաջխաղացում մտցնել Մոսուլի խնդրում։ Հարկավոր էին գործնական առաջարկություններ, սակայն դրանք էլ կարծես թե անհամատեղելի էին։

Այսպես, Իսմեթ փաշան իր ելույթում առաջարկեց Մոսուլում հանրաքվե անցկացնել[35]։

Դրան կտրականապես դեմ դուրս եկավ Քերզոնը, փաստարկելով այդ «զգալի թվով քոչվորների առկայությամբ, որոնք ֆիզիկապես չեն կարող քվեարկել, բնակչության անգրագիտությամբ (չգիտեն, թե ինչպես քվեարկել, քվեատուփեր երբեք չեն տեսել) և, վերջապես, հանրաքվեի ընթացքում դրական արդյունքի հասնելու պրակտիկորեն անհնարինությամբ. քրդերը կքվեարկեն անկախ Քուրդիստանի օգտին, արաբները՝ արաբական պետականության, թուրքերը՝ Թուրքիային միանալու, քրիստոնյաները՝ ցանկացածի օգտին, ով իրենց թուրքերից ավելի հեռու կպահի»[36]։ Իրականում, Քերզոնին գուցե ավելի շատ վախեցնում էր հանրաքվեի ընթացքում թուրքական պրոպագանդան տեղի բնակչության շրջանում, որտեղ ոմանք դեռ ակնածանքով կարծում էին, որ նախկին օսմանյան պետությունը (կարգերը) ետ կդառնա և դեմ լինելու դեպքում նույնիսկ կքվեարկեին հօգուտ Թուրքիայի՝ վախենալով հին պետության վերադարձի դեպքում պատժվելուց[37]։ Ինչևիցե, Քերզոնը գտավ, որ հանրաքվեով սահման չեն որոշում։ Քերզոնն առաջարկեց թուրք-իրաքյան սահմանագծի հարցը հանձնել Ազգերի Լիգայի քննարկմանը, և այդ հարցում նրան պաշտպանեցին Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի պատվիրակությունները[38]։ Սակայն նման «կոմբինացիային» դեմ դուրս եկավ արդեն Իսմեթ փաշան՝ ուշադրություն չդարձնելով և Քերզոնին պաշտպանած պատվիրակությունների հորդորումներին. Իսմեթը կտրականապես մերժեց այս ուղին ևս[39]։ Սակայն պարզվեց, որ Քերզոնն ունի ևս մեկ պահեստային տարբերակ.

«Նա (Քերզոնը—Վ. Պ.) սպառնաց Լիգա մտցնել Մոսուլի խնդիրը հակառակ Թուրքիայի համաձայնության՝ հենվելով Լիգայի կանոնադրության 11-րդ հոդվածի վրա»[40]։ Արդեն մեկ օր հետո նա «գործածության մեջ դրեց իր սպառնալիքը», իսկ հինգ

որ անց, Փարիզում նստաշրջանի հավաքված Լիգայի խորհուրդը «պատրաստակամությամբ իր համաձայնությունը հայտնեց միջամտելու դժվար խնդրին»[41]։

1923 թ. հունվարի 29-ին թուրքական պատվիրակությանը ներկայացվեց հաշտության պայմանագրի նախագիծը[42]։ Մոսուլի խնդրի հետ կապված այդ նախագծի 3-րդ հոդվածը նախատեսում էր, որ Թուրքիայի և Իրաքի միջև սահմանը պետք է գծվի համաձայն «այն որոշման, որն այդ առթիվ կկայացվի Ազգերի Լիգայի խորհրդի կողմից»[43]։ Բոլորին պարզ էր, որ նման ձևակերպումը ոչնչով չի տարբերվում Քերզոնի առաջարկից։ Ուստի 1923 թ. փետրվարի առաջին օրերին դաշնակիցների մտահոգությունը կրկին Մոսուլի խնդիրն էր։ Դաշնակիցների փորձագետները նույնիսկ նախանշեցին այն «ծայրահեղ զիջումները», որոնք կարելի էր անել թուրքերին։ Սակայն այդ «ծայրահեղ զիջումները» նույնիսկ պետք է արվեին այնպիսի խնամքով, որպեսզի չփոխվեր հաշտության պայմանագրի նախագծի 3-րդ հոդվածի իմաստը։ Ուստի 1923 թ. փետրվարի 4-ին, ի պատասխան թուրքական պատվիրակության հանձնված հաշտության պայմանագրի նախագծի, Իսմեթ փաշան մերժեց նաև Մոսուլի խնդրի կարգավորման վերոհիշյալ տարբերակները։ Սակայն հաշտության պայմանագրի կնքման մեջ շահագրգռված էին նաև թուրքերը։ Ուստի Իսմեթ փաշան առաջարկեց փակուղուց դուրս գալու հետևյալ տարբերակը. «Հանել այն (Մոսուլի խնդիրը—Վ. Պ.) կոնֆերանսի ծրագրից և կարգավորել (խնդիրը—Վ. Պ.) Թուրքիայի և Անգլիայի միջև ընդհանուր համաձայնությամբ՝ մեկ տարվա ընթացքում»[44]։ Նույն օրը՝ փետրվարի 4-ին, անգլիական և թուրքական պատվիրակությունները հավաքվելով լորդ Քերզոնի մոտ՝ հյուրանոցում՝ «ըստ ինֆորմացիոն» նստաշրջանի, հասան, այնուամենայնիվ, փոխըմբռնման։ Քերզոնը «հայտարարեց, որ ինքը չի կարող փոխել հաշտության պայմանագրի տեքստը, բայց, ինչ արած, համաձայն է չդիմել Լիգայի արբիտրաժին Իսմեթ փաշայի համար ցանկալի մեկ տարի ժամկետից շուտ»[45]։ Իր հերթին, թուրքական պատվիրակության ղեկավարը, խորհրդակցելով իր կոլեգաների հետ հարևան սենյակում, ընդունեց այդ առաջարկությունը»[46]։

1923 թ. փետրվարի 4-ին Լոզանի կոնֆերանսի աշխատանքներն ընդհատվեցին՝ Անգլիայի նախաձեռնությամբ։ Վերջինս ձըգ-

տում էր ճնշում գործադրել և՛ Ֆրանսիայի, և՛ Թուրքիայի վրա։ 1923 թ. փետրվարի 7-ին թուրքական 15 հոգիանոց պատվիրակությունը հեռացավ Լոզանից և փետրվարի 20-ի առավոտյան արդեն Անկարայում էր։ Իսկ փետրվարի 24-ից մինչև մարտի 6-ը ԹԱՄԺ-ն (Թուրքիայի ազգային մեծ ժողովը) իր փակ և գաղտնի նիստերում քննարկում էր Իսմեթ փաշայի գլխավորած պատվիրակության աշխատանքները Լոզանում[47]։ Քննադատությունների տարափի տակ ընկավ նաև Մոսուլի խնդրի հարցում Իսմեթ փաշայի կատարած զիջումը։ Մուստաֆա Քեմալը պաշտպանեց Իսմեթ փաշայի գործելակերպը բոլոր հարցերում՝ ներառյալ նաև Մոսուլի հարցում։ Դիմելով ԹԱՄԺ-ի դեպուտատներին՝ նա խորհուրդ տվեց ամեն ինչ լավ կշռադատել[48]։ Մ. Քեմալը նշեց. «Մոսուլի խնդրի կարգավորումը մեկ տարով հետաձգելը չի նշանակում, թե մենք հրաժարվում ենք նրանից»[49]։ Ավելի ուշ Քեմալը, դարձյալ դիմելով ԹԱՄԺ-ի դեպուտատներին, ասաց. «...Եթե դուք վերլուծելու լինեք, մենք Մոսուլից չենք հրաժարվում»[50]։

Եվ ահա, երբ ապրիլի 23-ին սկսվեց Լոզանի կոնֆերանսի 2-րդ փուլը, Մոսուլի խնդրում թուրքական և անգլիական պատվիրակությունների միջև վիճաբանությունը գնում էր միայն մեկ հարցի շուրջ. թե որքան ժամանակ պետք է տրվի Անգլիային և Թուրքիային Իրաքի և Թուրքիայի միջև սահմանային խնդիրը կարգավորելու համար՝ մինչ խնդիրը կդրվեր Ազգերի Լիգայի քննարկմանը[51]։ Ինչպես արդեն նշել ենք, Իսմեթ փաշան առաջարկել էր ժամկետը սահմանել մեկ տարի։ Բրիտանական պատվիրակության անդամ Հ. Ռամբոլդը առաջարկեց 9 ամիս։ Այդ ժամանակ բրիտանական կողմը դիմեց դիվանագիտական խորամանկության՝ բրիտանական կառավարությունը պաշտոնապես առաջարկեց այդ ժամկետը սահմանել 6 ամիս։ Դրանից հետո արդեն վիճաբանությունը գնում էր ոչ թե «1 տարի, թե՞ 9 ամիս» հարցի շուրջը, այլ «9 ամիս, թե՞ 6 ամիս» հարցի շուրջը։ Ի վերջո, հունիսի 23-ին, հանդիպելով Ռամբոլդի հետ, Իսմեթ փաշան համաձայնեց ժամկետը սահմանել 9 ամիս, ըստ էության ընդունելով բրիտանական տեսակետը[52]։ Իսկ արդեն 1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի հաշտության պայմանագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետում, Թուրքիայի և Իրաքի միջև սահմանի վերաբերյալ ասվում էր. «Թուրքիայի և Իրաքի միջև սահմանը պետք է որոշվի Թուրքիայի

և Մեծ Բրիտանիայի միջև փոխադարձ համաձայնությամբ՝ 9 ամիս ժամանակահատվածի ընթացքում։ Նախատեսված ժամանակահատվածում, երկու կառավարությունների միջև համաձայնության բացակայության դեպքում, վեճը կմտցվի Ազգերի Լիգայի խորհուրդ։ Թուրքական և բրիտանական կառավարությունները փոխադարձաբար պարտավորվում են, որ սպասելով այն որոշմանը, որը կընդունվի սահմանների վերաբերյալ, չեն կատարվի ռազմական կամ այլ առաջխաղացումներ, որոնք ընդունակ լինեն փոփոխություն մտցնելու տարածքների ներկայիս իրավիճակում, տարածքներ, որոնց վերջնական ճակատագիրը կախված կլինի այդ որոշումից»[53]։

Հետագայում կպարզվի, որ հիշյալ որոշումը նշանակում էր, որ Մոսուլի հարցում Թուրքիան պարտվել էր Անգլիային, ավելին, կպարզվի, որ Լոզանի կոնֆերանսը Մոսուլը խաղաղ ճանապարհով վերադարձնելու Թուրքիայի վերջին հնարավորությունն էր...

Ըստ էության Լոզանում Մոսուլի խնդրի լուծումը ոչ թե հետաձգվեց կամ մի կողմ գրվեց, այլ լուծվեց, թեև ոչ վերջնականորեն, ի օգուտ Անգլիայի, քանզի ակնհայտ էր, որ Անգլիան ժամանակ շահելու համար ձգտելու էր ամեն կերպ ձգձգել կամ ձախողել անգլո-թուրքական բանակցությունները՝ մինչև կանցներ իննամսյա ժամկետը, ապա, երբ հարցը կդրվեր Ազգերի Լիգայի քննարկմանը, Անգլիան կհասներ իր նպատակին, քանի որ մեծ ազդեցություն ուներ Ազգերի Լիգայում, իսկ Թուրքիան նույնիսկ Ազգերի Լիգայի անդամ էլ չէր[54]։ Հասկանո՞ւմ էր, արդյոք, այդ ամենը Մուստաֆա Քեմալը։ Մեր կարծիքով, այնպիսի մեծ անհատը, ինչպիսին Մ. Քեմալն էր, չէր կարող չհասկանալ այդ ամենը։ 1923 թ. փետրվարի 27-ի իր ելույթում, Մ. Քեմալը, ԹԱՄԺ-ի պատգամավորներին դիմելիս, օգտագործեց «Եթե մենք պնդենք Մոսուլը չհանձնելու մեջ, կներքաշվենք պատերազմի մեջ»[55] արտահայտությունը, իսկ դա նշանակում է, որ նա պարզ կերպով հասկանում էր, որ Մոսուլի լուծման լոզանյան տարբերակը նշանակում էր առժամանակ զիջել Մոսուլը։ Բացի այդ Քեմալը հաճախ էր օգտագործում Մոսուլի «խնդրի լուծումը մեկ տարով հետաձգել»[56], արտահայտությունը և ոչ թե «մեկ տարվա ընթացքում լուծել» արտահայտությունը[57], իսկ դրանք տարբեր իմաստ են կրում։ Դա նշանակում է, որ Մ. Քեմալը ենթադրում էր, իսկ

գուցեև համոզված էր, որ հիշյալ մեկ տարվա (առավել ևս, ինչպես վերջում ճշտվեց՝ 9 ամիսների) ընթացքում Մոսուլի խնդիրը չէր լուծվելու՝ համենայն դեպս ի օգուտ Թուրքիայի։ Ավելին, նույն 1923 թ. փետրվարի 27-ի գաղտնի նստաշրջանում ԹԱՄԺ-ի պատգամավորներին դիմելով, Մ. Քեմալն ասաց. «Ընդունեցեք նաև, որ մեկ տարի հետո վճռվելու է մեր դեմ և դրանից հետո, դրա համաձայն էլ համեմատեք և հետո ձեր վճիռը կայացրեք»[58]։ Նշանակում է հեռատես Մ. Քեմալը ենթադրում էր (գուցե վստահ էր), որ մեկ տարի (9 ամիս) հետո էլ հարցը Թուրքիայի համար դրականորեն չէր լուծվելու։ Սակայն Մ. Քեմալը հաշվի էր առնում երկու կարևոր հանգամանք.

1. Պատերազմի վերսկսվելու վտանգը։ Դեռ 1923 թ. փետրրվարի 27-ին, երբ Լոզանի կոնֆերանսի ընդհատումից հետո ԹԱՄԺ-ը քննարկում էր Իսմեթ փաշայի պատվիրակության գործունեությունը Լոզանում, Մ. Քեմալը հայտարարեց. «Այսօր մենք բոլորս հեշտությամբ կարող ենք հասկանալ, որ եթե մենք պնդենք Մոսուլը չհանձնելու վրա, կներքաշվենք պատերազմի մեջ»[59]։ Նա նաև նշեց. «Եթե մենք ասենք, որ Մոսուլի հարցն այսօրվանից կլուծենք, մեր բանակն առաջ կշարժենք, այսօր կգրավենք, դա հնարավոր է։ Մոսուլը չափազանց հեշտությամբ մենք կարող ենք գրավել[60]։ Սակայն մենք չենք կարող համոզված լինել, որ մեր կողմից Մոսուլի գրավումից հետո պատերազմն իսկույն կավարտվի։ Անկասկած, այնտեղ մենք բացած կլինենք պատերազմի մի նոր ճակատ։ Այսինքն, եթե դուք ցանկանում եք այդ բանն առանձին քննարկման թեմա դարձնել, վտանգներն իրենք իրենց հրապարակ կգան»[61]։ Հաղթաթուղթը (Մոսուլի տարածքը) Անգլիայի ձեռքում էր, և Մոսուլն էլ մեծ մասամբ անգլիական զորքերի վերահսկողության տակ էր։ Մոսուլը և՛ դե ֆակտո և՛, որոշ առումով, նաև դե յուրե Իրաքի թագավորության կազմում էր։ Այն կարելի էր փորձել ետ բերել միայն ռազմական ճանապարհով։ Թուրքական այդ «փորձը» կպսակվեր հաջողությամբ, թե ոչ, միևնույն է, դա տանելու էր անգլո-թուրքական պատերազմի, նոր պատերազմ, որից այդքան վախենում էր Մ. Քեմալը, նոր պատերազմ, որը կարող էր զրոյի հավասարեցնել նրա տարած հաղթանակները։

2. 1923 թ. հունվարի 23-ից սկսած, Լոզանում Մոսուլի խնդրի շուրջ վիճաբանությունները արդեն դարձել էին «ոչ թե նպատակ, այլ միջոց՝ ինչպես ընդհանուր համաձայնություն, այնպես էլ առանձին մասնավոր հարցերում համաձայնություններ ձեռք բերելու ուղղությամբ»[62]։ Երկու կողմերն էլ ձգտում էին ազատվել հաշտության ճանապարհին եղած այս խոշոր արգելքից, հաշտություն, որը նյութական կդարձներ իրենց հաղթանակները։ Իսկ թուրքերը նաև ձգտում էին[63] մանևրել Մոսուլի խնդրի շուրջ և, զիջելով Մոսուլի (նաև նեղուցների) խնդրում, հաղթանակներ տանել Թուրքիայի համար կենսական նշանակություն ունեցող այլ հարցերում։ Նույնիսկ եթե պարզվեր էլ, որ Մոսուլը զոհաբերվել է, դա լինելու էր արդարացված զոհաբերություն։ Այդուհանդերձ, ընդունելով Մոսուլի վերաբերյալ Լոզանում կայացված որոշումը որպես Թուրքիայի ժամանակավոր պարտություն, Մ. Քեմալը մտադիր էր ապագայում ամեն ինչ անել այդ հարցում ևս հաղթելու համար։ Այդ նպատակով նա մտադիր էր. 1. օգտագործել անգլո-ֆրանսիական հակասությունները[64]։

2. Շահարկել խորհրդային խաղաքարտը, իսկ եթե չստացվեր, ստանալ Ռուսաստանի օժանդակությունն այս խնդրում[65]։

3. Օգտագործել նաև անգլո-ամերիկյան հակասությունները և ստեղծել նոր հակասություններ[66]։

4. Հնարավոր և անհնարին բոլոր միջոցներով ապահովել Թուրքիայի հաղթանակը Մոսուլի խնդրում, նախապատրաստվելով դրան։ 1923 թ. փետրվարի 27-ին Քեմալն ասում էր. «Մոսուլի խնդրի կարգավորումը, պատերազմի մեջ չմտնելու համար մեկ տարով հետաձգելը, չի նշանակում, թե մենք հրաժարվում ենք նրանից։ Թեւցե սրա ձեռք բերման համար պետք է սպասենք մի ժամանակի, երբ մենք ավելի ուժեղ կլինենք։ Այսօր մենք հաշտություն ենք կնքում, մեկ ամիս հետո, 2 ամիս հետո Մոսուլի հարցի լուծման նկատմամբ հանցանք գործած կլինենք։ Սակայն այսօր, երբ դուք ցանկանում եք լուծել Մոսուլի հարցը, այդ հարցում ձեր դիմաց կանգնած են ոչ միայն անգլիացի, այլև ֆրանսիացի, իտալացի, ճապոնացի և ողջ աշխարհի թշնամիները։ Միայն երբ մենք դեմ առ դեմ կմնանք անգլիացիների հետ և դեմ առ դեմ կմնանք միայն անգլիացիների հետ[67], հարցը կլուծվի»։

Մ. Քեմալը նաև ասաց. «...պատերազմի անցնելու փոխարեն ավելի լավ է հաշտության անցնենք և ավելի լավ պատրաստվենք այդ նպատակին»[68]։

1925 թ. դեկտեմբերի 16-ին Ազգերի Լիգան որոշում կայացրեց թողնել Մոսուլը Մեծ Բրիտանիայի մանդատի տակ գտնվող Իրաքի կազմում։ Թուրքիան չընդունեց այդ որոշումը։ Սակայն 1926 թ. հունիսի 5-ին Թուրքիան հարկադրված էր ստորագրել անգլո-իրաքա-թուրքական պայմանագիրը։ Մոսուլը պետք է մնար Իրաքի կազմում, իսկ Թուրքիան 25 տարվա ընթացքում պետք է 10%-ի չափով մասնաբաժին ստանար «Թըրքիշ Փեթրոլիում Կոմպանիից»։

VAHRAM PETROSIAN

THE MOSUL QUESTION AT THE LAUSANNE CONFERENCE

Under the terms of the Treaty of Lausanne, signed on the 24th July 1923 the frontier between Turkey and Iraq was to be fixed by the „friendly arrangement" between Turkey and Great Britain. At the same time the parties were given nine months within which to settle the Mosul dispute by friendly arrangement between themselves.

How to apprais this decision? 1. Some historians consider that the decision was achieved by mutual concession or that the question was settled by the compromise. 2. The others think that „failure to reach a decision and the need for an early conclusion to the peace conference had necessitated its deferment". 3. The majority of historians think that Turkey yielded to Britain in Mosul question (and in the question of the Straits), but at the same time, under the „yielding" they mean the „deferment of settlement", considering that if in the other questions Turkey gained victories, the settlement of the Mosul question was only postponed. 4. And at last some historians consider (and that is right) that the parties were interested in concluding peace as soon as possible. But they think

that for the purpose of removing the obstacles and difficulties the question was puted aside.

Our point of view is the following: of course, the two parties were interested in concluding peace as soon as possible, and were willing to remove the difficulties on the way to peace. But neither Britain nor Turkey were willing to compromise. The paradox consists just in the following: under the name of the compromise (or mutual concession, or the deferment, postponement) or puting aside in fact the question was solved, in favour of Britain. Turkey was defeated the Mosul struggle at the Lausanne conference, and it would not be serious to call the defeat a compromise.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. Издание Литиздата НКИД, М., 1927, т. XXXIX.

[2] *М. С. Лазарев.* Империализм и курдский вопрос (1917—1923), М., 1989, с. 258.

[3] *М. С. Лазарев,* Указ. соч., с. 259.

[4] Documents on British Foreign Policy 1919—1939. Edited by W. M. Medlicott, First Series, volume XVIII. London, 1972. pp. 370–371, doc № 257. The Marquess Curzon of Kedleston (Lausanne) to Sir E. Crowe Secret, Lausanne December 6, 1922.

[5] Ibid., p. 371.

[6] Ibid., См. также: *М. С. Лазарев.* Указ. соч. с. 259:

[7] Ibid.

[8] DBFP, vol. XVIII, p. 371.

[9] DBFP, First Series, vol. XVIII, p. 380; *М. С. Лазарев.* Указ. соч., с. 259.

[10] Ibid., p. p. 380, *М. С. Лазарев.* Указ. соч., с. 259.

[11] DBFP, vol. XVIII, pp. 380—381.

[12] DBFP. vol. XVIII, p. 386, doc. № 26, The Marques Curzon of Kedleston (Lausanne) to Sir E. Crowe, Lausanne, December 12, 1922.

[13] Ibid, p 386: *Ավելի ուշ, 1922 թ. դեկտեմբերի 11-ի թվակիր հիշյալ նոտան հղվեց թուրքական կողմին։*

[14] *М. С. Лазарев.* Империализм и курдский вопрос (1917—1923), М., 1989, с. 260.

15 Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. XXXIX.

16 Там же, с. XXXIX—XL.

17 Там же, с. XIL.

18 Цит. по: *М. С. Лазарев.* Указ. соч., с. 260.

19 *Միաժամանակ նաև որոշ թերթեր, այդ թվում և «Դեյլի էքսպրեսը» կամպանիա սկսեցին Քերզոնի դեմ։ Տե՛ս* *И. М. Лемин.* Внешняя политика Великобритании от Версаля до Локарно (1919—1925). М., 1947, с. 340.

20 Там же, с. 340.

21 Цит. по: *И. М. Лемин.* Указ. соч., с. 340.

22 *Բոնար Լոուն Փարիզ էր ժամանել Պուանկարեի հետ հանդիպելու նպատակով։ Բրիտանիայի վարչապետը մտադիր էր համոզելու Պուանկարեին, որպեսզի վերջինս հրաժարվի Ռուրի շրջանը ներխուժելու մտքից։*

23 Цит. по: *И. М. Лемин*) Указ. с. 341.

24 Там же,, с. 341. *Ի դեպ, արդեն հունվարի 11-ին ֆրանսիացիները օկուպացրին Ռուրը, որի արդյունքում ծայրահեղորեն սրվեցին անգլո-ֆրանսիական հակասությունները։*

25 Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. XL.

26 *Р. Г. Саакян.* Франко-турецкие отношения и Киликия в 1918—1923 гг. Ереван, 1986, с. 184.

27 *Г. В. Чичерин.* Статьи и речи по вопросам международной политики. М., 1961, с. 247.

28 Цит. по: *М. С. Лазарев.* Указ. соч., с. 306· DBFP. First Series, volume XVIII, p. 461—465, doc. № 34.

29 Цит. по: *М. С. Лазарев.* Указ. соч., с. 306. See al o Loder Y. de V., The Truth ab ut Mesopotomia, Palestine and Syria, L., 1923, p. 214.

30 Цит. по: *М. С. Лазарев.* Империализм и курдский вопрос (1917—1923), М., 1989, с. 307—308, See also Loder Y. de V., The Truth about Mesopotomia, Palestine aud Syria, L., 1923, pp. 215—218.

31 Цит. по: *М. С. Лазарев.* Указ. соч., с. 307—308. Loder Y. de V., Ibid., p. 214.

32 Цит. по: *М. С. Лазарев.* Указ. соч., с. 30—308, See also Loder Y., de V., pp. 215—218.

33 Там же, с. 262.

34 *Թեև անգլիական տվյալները ևս ճշգրիտ չէին։*

35 Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. XL.

36 *М. С. Лазарев.* Указ. соч., с. 262.

37 *C. J. Edmonds.* Kurds, Turks, and Arabs. Politics, Travel and Research in North-Eastern Iraq 1919—1925. London, 1957.

[38] Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. XL.

[39] *М. С. Лазарев.* Указ. соч., с. 262.

[40] Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, стр. XL.

[41] Там же.

[42] *Ю. Л. Бигиров.* Борьба турецкого народа против империалистической интервенции и султаната, за республику (1917—1924). Автореферат... Баку, 1968, с. 86.

[43] Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. XL.

[44] Там же, с. XI.

[45] *Այդ ժամկետը սակայն ենթակա էր քննարկման։*

[46] Цит. по: Севрский мирный договор и акты, подписанные в Лозание. М., 1927, с. XL.

[47] *Şevket Süreyya Aydemir.* Ikinci Adam. Istanbul, 1966. ss. 247—248.

[48] *Արանով Մ. Քեմալն իրեն ապահովագրում էր. իրականում նա Մոսուլի խնդրի կարգավորումը մեկ տարով հետաձգելու կողմնակից էր և ցանկության դեպքում միայն իր հեղինակությամբ կարող էր իր կամքը թելադրել ԹԱՄԺ-ին։*

[49] *Kâzım Oztürk.* Atatürk'ün TBMM Açık ve Gizli Oturumlarındaki Konusmaları. Cilt 2, Ankara, 1990, s. 2. p. 724.

[50] *Kazım Öztürk.* Atatülk'ün..., Cill 2, Ankara, 1990, s. 727.

[51] *М. С. Лазарев.* Указ. соч., с. 266:

[52] DBFP. vol. XVII. doc. № 632. Sir H. Rumbold (Lausanne) to the Marquess Curzon of Kelleston. Lausanne, June 23, 1923.

[53] Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. 145.

[54] *Թուրքիան Ազգերի Լիգայի անդամ դարձավ 1932-ին։*

[55] *Այդ ժամանակ դեռ ուժի մեջ էր հարցը անգլո-թուրքական բանակցությունների ճանապարհով մեկ տարվա ընթացքում լուծելու տարբերակը։*

[56] *Kâzım Öztürk.* Atatürk'ün TBMM Açık ve Gizlı Oturumlarındaki Konusmaları. Cilt 2. Ankara, s. 724.

[57] *Միայն մեկ անգամ Քեմալն ասաց. «Առկա խնդիրներից երկրորդը, Մոսուլի խնդրի լուծումը, մեկ տարվա ընթացքում անգլիացիների և Թուրքիայի միջև երես առ երես հանդիպելով ավարտը հետաձգվել է։ Այն էլ դարձյալ օգտագործեց «հետաձգել» բառը։*

[58] *Kâzım Oztürk.* Atatürk'ün TBMM Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Cilt 2. Ankara, 1990, s. 728.

[59] *Kâzım Öztürk,* Atatürk'ün.... 724.

[60] *Իհարկե, թերահավատությամբ պետք է մոտենալ Քեմալի հիշյալ անհիմն ինքնավստահությանն ու համոզվածությանը։*

[61] *Kâzım Öztürk.* Atatürk'ün TBMM Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Cilt II. Ankara, 1990, s. 725.

[62] *М. С. Лазарев,* Указ. соч., с. 263.

63 Եվ դրանում թուրքական կողմը հասավ իր նպատակին։

64 Անգլո-ֆրանսիական հակասությունների մասին տե՛ս *Р. Г. Саакян,* ук. соч., стр. 180—200.

65 Բարեկամության և չեզոքության վերաբերյալ խորհրդա-թուրքական պայմանագիրը կնքվեց 1925 թ. դեկտեմբերի 17-ին՝ Փարիզում, ԽՍՀՄ արտաքին գործոց ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի և Թուրքիայի արտաքին գործոց նախարար Թեֆիկ Ռյուշտու Բեյի (Արասի) միջև։ Այս պայմանագրի կնքմամբ Խ. Միությունը լուրջ օժանդակություն ցույց տվեց Թուրքիային Մոսուլի կոնֆլիկտի պատճառով անգլո-թուրքական կոնֆլիկտի սրման ժամանակաշրջանում։ См.: *Мустафа Кемаль.* Избранные речи, Москва, 1966, с. 431.

66 Թեև Լոզանից առաջ անգլո-ամերիկյան հակասությունները կարգավորվել էին, այնուամենայնիվ, որոշ հակասությունների պահպանման մասին է խոսում Չեսթերի կոնցեսիան. «1923 թ. ապրիլի 9-ին Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը որոշում ընդունեց երկու անդրօվկիանոսյան բիզնեսմեններին՝ ամերիկացի Արթուր Չեսթերին և կանադացի գնդապետ Քլեյթոն Քեննեդիին շնորհել երկաթգծերի, նավահանգիստների կառուցման և ընդերքի շահագործման կոնցեսիան։ Այդ քայլը բացահայտորեն հարվածում էր Ֆրանսիայի շահերին (տե՛ս *Р. Г. Саакян.* Франция и Турция в Лозанне.— Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 12, Երևան 1965, էջ 16—17, տե՛ս նաև *Р. Г. Саакян.* Франко-турецкие отношения и Киликия в 1918—1923 гг. Ереван, 1986, с. 193): Սակայն Չեսթերի կոնցեսիան հարվածում էր նաև Բրիտանիայի շահերին, քանի որ Արթուր Չեսթերին էին շնորհվում ողջ երկաթգծով մեկ, երկաթգծի լայնությամբ 24 մղոն նեղ հողաշերտի օգտակար հանածոների (շահագործման—Վ. Գ.) իրավունքները, երկաթգիծ, որը պետք է կառուցվեր Ottoman American-ի կողմից մտնելով Հյուսիսային Իրաքի սիրտը։ Միամտություն կլինէր կարծել, թե Չեսթերի կոնցեսիան նրա անձնական նախաձեռնությունն էր։ Ո՛չ, Չեսթերը օժանդակություն էր ստանում ամերիկյան կառավարությունից (*S. H. Longrigg.* Oil in the Middle East: Its Discovery and Development. London, 1961, p. 46), իսկ ամերիկյան կառավարությունն էլ հարկ եղած դեպքում կարողանում էր զսպել այն մասնավոր նախաձեռնությունները, որոնք իրեն դեմ էր. այսպես 1919 թ.-ին Standard Oil-ը (Նյու Ջերսի) առաջարկեց երկրաբաններ ուղարկել Իրաք, սակայն մտադրությունից ետ կանգնեցվեց իր կառավարության կողմից (*S. H. Longrigg.* op. cit., p. 46): Ուստի Չեսթերի կոնցեսիան ձեռք բերվեց ԱՄՆ-ի կառավարության գիտությամբ, ավելին՝ օժանդակությամբ։ Սակայն ի՞նչ նպատակով 1922 թ., անգլո-ամերիկյան նավթային նախնական պայմանագրից հետո, ԱՄՆ-ը անցավ մանևրելու տակտիկային։ Չենք կարծում, թե ԱՄՆ-ը ձգտում էր ապահովագրել իրեն այն տարբերակի համար, եթե հանկարծ Մոսուլը հանձնվի թուրքերին, քանի որ 1923 թ. ապրիլի դրությամբ Լոզանի կոնֆերանսում միանգամայն պարզ էր դարձել, որ Բրիտանիան Մոսուլը չի զիջելու թուրքերին։ Ուստի Չեսթերի կոնցեսիայով Միացյալ Նահանգները միայն ձգտում էր սպառնալ Բրիտանիային և ճնշում գործադրել վերջինիս վրա, որպեսզի ստորագրվի, արագացվի 1922 թ. նախնական, ժամանա-

կավոր պայմանագիրը (որով ամերիկյան նավթային ընկերությունները ստանում էին 25%-ը) հիմնական պայմանագրով փոխարինելու գործընթացը, իսկ հնարավորության դեպքում նաև հասնել ամերիկյան տոկոսաբաժնի մեծացմանը։ Էլ ավելի լուրջ նպատակներ էին հետապնդում թուրքերը։ Նրանք ձգտում էին.

1 Պառակտում մտցնել Անգլիայի և ԱՄՆ-ի միջև։

2 Շահագրգռելով ԱՄՆ-ին, վերջինիս Մոսուլի խնդրում հանել անգլիացիների դեմ՝ դարձնելով ամերիկացիներին իրենց կողմնակիցը։

3 Սպառնալ Անգլիային, վերջինիս վրա ճնշում գործադրել, Մոսուլի խնդիրն իր (Թուրքիայի) օգտին լուծելու համար։ Հասկանալի է՝ Թուրքիան Լոզանում վերջին, հուսահատ ճիգերն էր կատարում Մոսուլը վերադարձնելու համար։ Սակայն թուրքական կողմն իրատես չէր։ Նախ ԱՄՆ-ի հարցում.

ա) ԱՄՆ-ը հասկանում էր, որ Մոսուլը երբեք չի տրվի Թուրքիային, իսկ Թուրքիայի համար նա երբեք կոնֆլիկտի մեջ չէր մտնի Անգլիայի հետ։

բ) ԱՄՆ-ին չէր հետաքրքրում, թե ում կպատկանի Մոսուլը, նրան միայն հետաքրքրում էր Մոսուլի նավթը և նավթի շահագործմանը ամերիկյան նավթային ընկերությունների մասնակցության խնդիրը, մասնակցություն, որն արդեն իսկ ապահովվել էր 1922 թ. անգլո-ամերիկյան նախնական պայմանագրով։ Եվ ԱՄՆ-ի համար ավելի ձեռնտու էր գործ ունենալ Բրիտանիայի հետ, որի ձեռքում էր արդեն Մոսուլը, քան թե Թուրքիայի, որը նոր էր ուզում վերադարձնել Մոսուլը։

Ինչ վերաբերում է Անգլիային, ապա այստեղ ևս Թուրքիայի հույսերը չարդարացան։ Անգլիան այնքան էլ լուրջ չընդունեց Չեսթերի կոնցեսիան։ Չեսթերի կոնցեսիան անսպասելի չէր Անգլիայի համար։ Լոնդոնում Թուրքիայի և ամերիկա-կանադական ընկերության միջև ընթացող նախնական բանակցությունների մասին Քերզոնը տեղյակ էր դեռ 1923 թ. հունվարին, սակայն լուրջ չընդունելով այն, նույնիսկ չփորձեց խանգարել դրանց ընթացքին։ Բավական է նշել, թե ինչ ասաց Քերզոնը հումորով 1923 թ. հունվարի 23-ի իր առաջին նլույթում. «Թուրքերը հիմա Լոնդոնում նավթային կոնցեսիաներ են առաջարկում (նկատի ունի անգլո-կանադական խմբի հետ բանակցությունը)։ Ես այդ մասին ոչինչ չգիտեմ։ Եթե նրանք հաջորդ անգամ էլ գան, ես նրանց կտանեմ Բրիտանական թանգարան» (*М. С. Лазарев.* Империализм и курдский вопрос, 1917—1923). М., 1989, с. 261.

Եվ իրոք տարավ. 1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի հաշտության պայմանագրով «Թուրքիան արդեն իրավասու չէր շնորհումներ կատարելու Մոսուլի շրջանում»։

Չեսթերի կոնցեսիան չիրագործվեց։

67 *Kâzım Öztürk*, Atatürkü'n TBMM Açik ve Gizli Oturamlarindaki Konusmalari. Cilt II, Ankara 1990, sayfa 725.

68 Aynı eser, 727—728 sayfalar.

5—23

ԿԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ԻՐԱՆԱ–ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԻՐԱՔԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1980—1984 ԹԹ.)

Իրանա-իրաքյան պատերազմի գիտական տեսադաշտը ընդգրկուն թեմա է, որի շրջանակում է նաև պատերազմող երկրների տնտեսական կյանքը, պատերազմի անդրադարձը բնակչության սոցիալական վիճակի վրա, աշխատավորության հիմնական կազմի և կառուցվածքի կրած փոփոխությունների նկարագիրը, հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների երևակումը։ Այս տեսանկյունից Իրաքի նշված ժամանակահատվածին գիտական անդրադարձը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում։

Ակնբախ է, որ իրանա-իրաքյան պատերազմը ուներ նաև տնտեսական գործոն, քանի որ պատերազմող երկու երկրներն էլ նավթ արտահանողներ են։ Այս առումով հետաքրքիր է «Թայմս» թերթի հրապարակումներից հետևյալ դիտողությունը՝ «Իրադրությունը վատթարացնում է այն հանգամանքը, որ իրաքյան նավթի արտահանումը նվազեցված է՝ հասցնելով մինչև Իրանի նավթի մեկ երրորդին, և երևում են իրաքյան զինվորների բարոյական-հոգեբանական ընկճված վիճակի երևույթներ, իսկ նրանք պաշտպանությունը իրականացնում են անապատի դաժան պայմաններում»[1]։

Իրաքյան կառավարության ներկայացուցիչը հայտարարել էր, որ «սա նաև տնտեսական պատերազմ է։ Իրանը կրճատել է մեր նավթի արտահանումը, այդ պատճառով էլ մենք կկրճատենք նրա արտահանումը»[2]։

Այս իրավիճակը 1983 թվականին էր և արդեն երեք տարի շարունակվող պատերազմը մոտ չէր իր ավարտին, 1983 թ. հուլիսի

վերջին, երբ Իրանը իրագործեց իր հերթական խոշոր հարձակումը, Իրաքի արտգործնախարարը հայտարարեց, թե այս պատերազմը առնվազն երկուսից երեք կամ ավելի տարիներ հեռու է իր ավարտին մոտենալուց[3]։

Իրանի ռազմաքաղաքական ստրատեգները ելնում էին իրենց երկրի բնակչության թվական առավելությունից, որը Իրաքի բնակչության համեմատությամբ եռակի ավելի էր, ուներ 2,5 անգամ իր թվակազմով մեծ բանակ[4]։

Պատերազմում արդեն զոհվել էր 200 հազ. մարդ, 300 հազ. մարդ վիրավորվել կամ գերի էր ընկել[5]։

1983 թ. սեպտեմբեր ամսվա տվյալների համաձայն, Իրաքի նավթի արտահանումից ստացված եկամուտները նվազել էին մեկ քառորդով, իսկ արտասահմանյան արժույթի չափը պատերազմի սկզբի 30 մլրդ դոլարից մնացել էր ընդամենը 4 մլրդ դոլար։ Իրաքի կապիտալ ներդրումների բոլոր ծրագրերը սառեցված էին։

Աշխատավարձերի չափը խիստ նվազեցված էր, որը չէր բացառում նաև կառավարական աստիճանավորների և ռազմական բնագավառի զինծառայողների աշխատավարձերի զգալի նվազումը։ Այսպես, կառավարական պաշտոնյաների և զինվորական սպաների աշխատավարձը 20 տոկոսով կրճատված էր, իսկ վճարումները արտասահմանյան կապալառուներին չէին իրականացվում։

Արժեզրկումը կազմում էր 50 տոկոս։ Հայտնի է նաև, որ Իրաքը իրականում պատերազմ էր վարում ապառիկ միջոցներով, փոխառություններ ստանալով Պարսկական ծոցի տարածաշրջանի արաբական երկրներից, ընդ որում այդ ընդհանուր գումարը կազմում էր 46 մլրդ դոլար, սրան գումարած նաև արտասահմանյան առավել խոշոր ապառիկ վարկերը։ Այս առումով հատկապես գերազանցում էր Վարկերի արտասահմանյան արտահանման ապահովման ֆրանսիական վարչությունը, որը Իրաքին տրամադրել էր 4,5 մլրդ դոլար[6]։

Իրաքի տնտեսությունը պատերազմի տարիներին փրկելու նպատակով կառավարությունը դիմում էր ամենատարբեր միջոցների, այդ թվում արտահանվող ապրանքի ծավալի ավելացման, ներմուծման կրճատման, ծախսերի կրճատման, ինչպես նաև եր-

կարաժամկետ վարկերի վճարման պայմանները երկարաձգելու հնարանքների։

Դինարի արժեքի պահպանման փորձերը արդյունքի չէին հասցնում։ 1983 թ. տվյալներով դինարի պաշտոնական կուրսը կազմում էր 3,38 դոլար։ Ինչպես սովորաբար նման դեպքերում տեղի է ունենում՝ բարգավաճում էր «սև շուկան», բարձրանում դոլարի կուրսը Իրաքում՝ եռակի և ավելի գերազանցելով պաշտոնական կուրսին։ Միաժամանակ սահմանափակումներ էին մտցված արտասահմանյան երկրներ Իրաքից դրամական փոխանցումների, ինչպես նաև նոր պայմանագրերի կնքման հարցում, որի հետևանքով դիտվում էր Իրաքում աշխատող օտարերկրյա բանվորների մասսայական արտահոսք։ Այդ բանվորների թիվը հազարների էր հասնում։ Օտարերկրյա բանվորների ամենամեծ տոկոսը կազմում էին եգիպտացի բանվորները[7]։ Պաշտոնական տվյալներով նրանց թիվը 1983 թ. նվազեց 30 տոկոսով՝ կազմելով ընդամենը 1 մլն. մարդ։

Իսկ Ասիայի երկրներից այստեղ ժամանած և տնտեսության տարբեր ճյուղերում ընդգրկված բանվորներից մնաց աշխատելու մոտ կեսը։

Չնայած իրաքյան աղբյուրները իրանա-իրաքյան պատերազմի տարիներին հասկանալի պատճառներով բավական զուսպ գույներով էին ներկայացնում իրադրությունը, գերադասելով լռել երկրի ներքին տնտեսական ցուցանիշների մասին, սակայն ակնհայտ էր երկրի բնակչության տնտեսական վիճակի օրեցօր վատթարացումը և ծայրաստիճան կարիքը շատ ընտանիքներում։ Այս առումով շվեյցարական «Նոյե ցյուրիխեր ցայթունգ» թերթը «Իրաքը պատերազմից երեք տարիներ անց» հոդվածում հետաքրքիր տվյալներ է բերում։ Հոդվածում նշված է, որ Սադամ Հուսեյնը չկարողացավ իրականացնել իր այն խոստումը, թե Իրաքի տնտեսությունը պատերազմի պատճառով չի տուժի։ Նշված է, որ եթե մինչ պատերազմի սկսվելը Իրաքն օրական արտահանում էր 3,4 մլն. բարել նավթ, ապա 1983 թվականին միայն 700 հազ. բարել[8]։

Իրաքի նման մի երկիր, որն ուներ նավթային մեծ պաշարներ՝ մոտ 59 մլրդ. բարել, ստիպված էր նավթամթերքներ ներմուծել։ Նավթազտիչ գործարանները անգործության էին մատնված։

Ըստ պաշտոնական տվյալների, իրանա-իրաքյան պատերազմը միայն Իրաքի վրա նստում էր օրական մեկ միլիարդ ամերիկյան դոլար[9]։

Երկրի նախատեսված կառույցների իրականացման համար չէին բավարարում ոչ միայն ֆինանսական միջոցներ, այլ նաև բանվորական ուժը։ Մոտ 1 մլն. իրաքցիներ գտնվում էին զինվորական ծառայության մեջ։ Այնինչ անհրաժեշտ էին 2 մլն. բանվորներ արտասահմանյան երկրներից, որպեսզի հնարավոր լինի 14 մլն. ազգաբնակչություն ունեցող Իրաքի տնտեսության նորմալ զործելը։ Կային ձեռնարկություններ, որոնք ամբողջապես սպասարկում էին արտասահմանցիները։ Բաղդադի միջազգային օդանավակայանը սպասարկում էին անգլիացիները, իսկ հոսպիտալներում աշխատում էին Անգլիայից և Իռլանդիայից ժամանած բուժանձնակազմեր[10]։

Հետաքրքիր է նաև հետևյալ տեղեկությունը ոսկու հանձնման մասին, որպես անհրաժեշտ միջոց՝ ուղղված քայքայվող տնտեսության վերականգնմանը։ Սադամ Հուսեյնի ցուցումով Իրաքում կազմակերպված էր ոսկու հանձնում։ Մի քանի ամիս շարունակ, հեռուստատեսությամբ ամեն երեկո նույն տեսարանն էին ներկայացնում, իսկ առավոտյան թերթերը լի էին տեղեկություններով այն մասին, թե որքան լայն մասսայականություն է կրում ոսկու հավաքը բնակչությունից Իրաքում։ Այդ միտքը տվյալ ռեժիմին պարզևել էր Բաբելոնից մի խոշոր հողատեր, որը կտակել էր Իրաքի պրեզիդենտին իր ողջ կարողությունը և ոսկին։ Այդ ժամանակվանից սկսած դիմում էին բոլոր սոցիալական խավերին պատկանող կանանց ու մայրերին՝ կոչ անելով պրեզիդենտին ու հայրենիքին զոհաբերել իրենց ոսկյա զարդերը, հաճախ՝ ողջ սեփական օժիտը։ Ըստ մամուլի տվյալների, հավաքվել էր 30 տոննա ոսկի։

Այս նույն միջոցառումը սկսել էր տարածվել նաև արտասահմանյան ֆիրմաների վրա, որոնց հասկացնում էին, թե նախկինում Իրաքից ստացած հարուստ եկամուտների փոխարեն, այսօր անհրաժեշտ է սատար կանգնել երկրի քայքայվող տնտեսությանը[11]։

Երկրի ազգաբնակչության ընդհանուր վիճակից անմասն չէր կարող մնալ նաև ազգային բանակը. «Բանակն իր վրա է կրում պատերազմի բոլոր զրկանքները»։

Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնը ժողովրդին և բանակին ոգևորելու համար հայտարարեց, թե «Դժվար ժամանակները ամենաառաջին ուսուցիչն են մարդու համար, ժողովուրդների համար, ինչպես նաև հեղափոխական շարժումների համար»[12]։

1982 թ. հունիսի 27-ին Բաղդադում տեղի ունեցավ բաաս կուսակցության 9-րդ կոնֆերանսը, որն ընթացավ գաղտնի պայմաններում, ելնելով իրանա-իրաքյան պատերազմի ստեղծած մթնոլորտից և քաղաքական խնդիրներն ու իրադրությունը հակառակորդին հայտնի չդարձնելու մտավախությունից։

Այդ կոնֆերանսը հիմնականում քննության ենթարկեց իրանա-իրաքյան պատերազմի անցած շրջանն իր հետևանքներով ու հետագա ընթացքով։ Ինքնափառաբանման արտահայտությունները անպակաս են այս և այդ նույն տարիների այլ քաղաքական ելույթներից. «Այդ թշնամիներն են ապրում երևակայական հույսերով։ Նրանք չգիտեն, թե ինչ է իրենից ներկայացնում Իրաքը, թե ովքեր են իրաքցիները, և թե ինչ է իրենցից ներկայացնում Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցությունը և Հուլիսյան հզոր հեղափոխությունը»[13]։

Նշենք մեկ այլ փաստաթուղթ՝ նախագահ Սադամ Հուսեյնի ինտերվյուն ֆրանսիական լրագրողներին, 1982 թ. ապրիլի 1-ին[14]։

Երկրի նախագահին ուղղված հարցերի ոլորտում էին նաև ներքին կյանքի նկատմամբ հետաքրքրությունը. «Արդյոք դուք այն կարծիքին ե՞ք, որ պատերազմը, որը մղվում է Իրաքի և Իրանի միջև, պատերազմ է երկու կուսակցությունների միջև, որոնցից մեկը գիտական է, մյուսը՝ կրոնական։ Ինչպիսի՞ թիվ են կազմում արաբ կամավորները։ Ինչպիսի՞ն է կամավորների մասնակցությունը վերջին մարտերում»։

Պատերազմի մեջ գտնվող երկրի նախագահը բավական դիվանագիտական պատասխաններ է տալիս. «...Դուք գիտեք, որ Իրաքը մի երկիր է, որի ազգաբնակչության թիվը կազմում է 14 միլիոն մարդ։ Նրա տարածքը և աշխարհագրական հնարավորությունները հայտնի են ձեզ։ Ամենագլխավորը նրա նոր կարգերում են կենտրոնացված։ Դա այն է, թե մարդն ինչպես է ապրում և թե ինչպես է իրեն զգում։ Դուք հավանաբար պատկերացնում եք Իրաքում տիրող դրությունը մինչև 1968 թվականի հեղափոխությունը»[15]։

Ընդգծելով, որ այդ հեղափոխությունից առաջ ամեն ինչ վատ վիճակում էր, երկրի ղեկավարը ներկայացնում է Իրաքի առաջընթացը Բաաս կուսակցության իշխանության ներքո, 1968 թ. սկսած։ «Հուսով ենք, որ դուք կծանոթանաք Իրաքին ավելի հանգամանորեն, ինչպիսին այն դարձել է այժմ գիտական և տեխնիկական, սոցիալական ու մշակութային առաջընթացի բնագավառում, նկատի ունենալով տղամարդկանց և կանանց վիճակը գործարաններում, դաշտերում, մնացած վայրերում, մշակույթի, երաժշտության, խղճի, երեխաների վարքագծի և այլն։ Այդ ամենը մեր ստեղծածն է և ոչ թե արտասահմանի։

Այս ողջ առաջընթացը Հուլիսյան հեղափոխության արգասիքըն է»[16]։

Իրաքը, այնուամենայնիվ, ուներ իր ներքին քաղաքականության լայն ծրագիրը, որի հիմնական լծակը տնտեսական քաղաքականությունն էր։ Արդեն 1984 թ. Իրաքի ներքին քաղաքական ու տնտեսական ծրագրերում մեծ տեղ էր հատկացվում նավթի պաշարների նպատակային օգտագործմանը՝ բարելավելու համար պատերազմի տարիների ընթացքում ջլատված տնտեսությունը։ Նախատեսվում էր նոր նավթամուղերի շինարարությունն ու գործարկումը որոնց արտադրանքը, ըստ նախնական տվյալների, պետք է կազմեր օրական ավելի քան 6 մլն բարել նավթ[17]։

Իրաքի բնակչության մեջ ավելի ու ավելի էին հասունանում պատերազմը շուտափույթ ավարտելու տրամադրությունները։

Հակապատերազմական տրամադրություններն Իրաքում լայն թափ ստացան հատկապես պատերազմի չորրորդ տարում, քանի որ արդեն ակնառու էին իրանա-իրաքյան պատերազմի թողած ծանր հետևանքները։

Ուշագրավ է 1984 թ. հուլիսի 12-ին Բաղդադում կայացած միջազգային կոնֆերանսը՝ «Միջազգային խաղաղության և անվտանգության համար վտանգավոր իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները» թեմայով։ Ովքե՞ր էին այս կոնֆերանսի մասնակիցները և կազմակերպիչները։ Դրանք աշխարհի տարբեր երկրներից Իրաք ժամանած մասսայական, հասարակական և արհմիութենական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների հասարակական-քաղաքական գործիչներ էին։

Պահանջը մեկն էր՝ վերջ տալ այս անհեռանկար պատերազմին, խաղաղ ճանապարհով լուծելով կոնֆլիկտը՝ հաշվի առնելով երկու երկրների շահերը և ելնելով տարածաշրջանում ստեղծված բարդ ու վտանգավոր իրադրությունից։

Քաղաքական կուսակցություններից՝ Եգիպտոսի Ազգային առաջադիմական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Մոհի ադ-Դինը կոչ արեց՝ դադարեցնել բոլոր կապերը և համագործակցությունը Իրանի հետ, դրանով նրան ստիպել՝ վերջ տալու պատերազմին։ «Արաբական ժողովուրդները երբեք չեն հաշտվի արաբական հողի օկուպացման հետ»,—հայտարարեց նա։

Խաղաղության կոչերով հանդես եկան Պաղեստինի ազատագրության կազմակերպության ներկայացուցիչները։ Եգիպտոսի Ազգային-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Ալ-Զայաթին առաջարկեց ստեղծել մշտական գործող կոորդինացիոն կոմիտե, որի գործունեությունը կոչված է նպաստելու իրանա-իրաքյան պատերազմի ավարտին։

Հետաքրքիր է ընդգծել պատերազմող մյուս երկրի՝ Իրանի ընդդիմադիր շարժման մասնակցությունը այս կոնֆերանսին։

Այդ շարժման գաղափարախոսներից Հ. Մասլին, որը ներկայացնում էր «Իրանի աշխատավորության դեմոկրատական շարժումը», դատապարտեց իր երկրի վարչակարգը՝ պատերազմը շարունակելու մեղադրանքով, այդ քաղաքականությունը որակելով որպես սեփական ժողովրդի դեմ մասսայական սպանդ։ Միաժամանակ հիմնական մեղքը Իրանի ներկայացուցիչը բարդեց Իրանի «Մուսուլման եղբայրներ» խմբավորման վրա, վկայելով թե այդ ժամանակ երկրում գործում էին այդպիսի խմբավորումներ։

Ինչպես հայտնի է, իրանա-իրաքյան պատերազմն ավարտվեց 1988 թ., կողմերից և ոչ մեկն էլ չհասավ հաղթանակի։ Սակայն այն շատ խոր հետք թողեց երկու երկրների հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի վրա։

KARINE SAMVELIAN

THE IMPACT OF THE IRAN-IRAQI WAR ON THE SOCIO-ECONOMIC LIFE OF IRAQ DURING THE FIRST YEARS OF THE WAR (1980–1984)

The Iran-Iraqi war had certain impact on the socio-economic life of Iraq. The article deals with the analysys of the economic conditions of the Iraqi people, economic situation in Iraq as well as the internal policy of the Iraqi government.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 „The Times", 1983, 6, 9.
2 *Նույն տեղում։*
3 „The Hindustan Times", D. 22, 9.
4 *Նույն տեղում։*
5 *Նույն տեղում* „The Times", L., 1984, 1—15, 2.
6 *Նույն տեղում։*
7 *Տե՛ս* „Neue Züricher Zeitung", 1981, 20, XII.
8 *Նույն տեղում, 1983, 21, 9։*
9 *Նույն տեղում։*
10 *Նույն տեղում։*
11 *Նույն տեղում։*
12 خطاب السيد الرئيس صدام حسين فى الذكرة الرابعة عشرة. الثورة السابع عشرة تموز المجيدة ١٩٨٢، بغداد، ١٩٨٢، ص ٣٣—٣٤.
13 *Նույն տեղում, էջ 19։*
14 حديث السيد الرئيس صدام حسيد الى رجال الصحافة الفرنسيين فى ١٩٨٢.٤.١، بغداد، ١٩٨٢
15 *Նույն տեղում, էջ 16։*
16 *Նույն տեղում, էջ 18։*
17 *Նույն տեղում։*

ԴԱԳԻԿ ՇԱԼՋՅԱՆ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՔ ՁԵՎԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1990—1993 ԹԹ.)

Իրանա-թուրքական հարաբերությունները իրենց զարգացման ընթացքում աչքի են ընկել հակասական բնույթով և արտաքուստ բարիդրացիության ժամանակաշրջանները հաճախ փոխվում էին իրար նկատմամբ բացահայտ թշնամանքի ժամանակաշրջաններով։

Իրանի և Թուրքիայի հարաբերություններում լարվածության աստիճանը պայմանավորված էր լինում նախ այդ երկուսի ներքին քաղաքատնտեսական կացությամբ և ապա Մերձավոր և Միջին արևելքի տարածաշրջանում տիրող իրավիճակով, աշխարհի այդ մասում ազդեցության ոլորտների համար բախվող ուժերի հարաբերակցությամբ և դրա արդյունքում՝ ազդեցության ոլորտների ակնկալվող հերթական վերաբաժանումով։

Իրանա-թուրքական հարաբերություններում հերթական լարվածության շրջանը սկիզբ առավ և ժամանակին ու նոր պայմաններին համապատասխանող առանձնահատկություններ ստացավ նախ Ծոցի պատերազմից և ապա միջազգային հարաբերությունների համար մեկ այլ կարևոր իրադարձությունից, այն է՝ ԽՍՀՄ-ի լուծարումից հետո։

Ահա այս կարևորագույն իրադարձությունների ներքո, որոնք մի քանի տարով կանխորոշելու էին միջազգային հարաբերությունների զարգացման ընթացքը ողջ աշխարհում, ձևավորվում էին նաև իրանա-թուրքական հարաբերությունները։

Բացի նշված գործոններից, միմյանց նկատմամբ երկու երկրների դիրքորոշումը ձևավորող համաշխարհային հնչեղություն ունեցող գործոններից էին Իրանի և Թուրքիայի դիրքորոշումը ԱՄՆ-ի և Իսրայելի նկատմամբ, Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելը և Իրանի՝ ոչ այդքան ցցուն հարաբերությունները Ռուսաստանի հետ[1], որոնք, սակայն, ունեին իրենց ծանրակշիռ ազդեցությունը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության վրա, և որոնք, Իրանի տեսակետից, կոչված էին ծառայելու որպես հակակշիռ թուրք-ամերիկյան համահունչ տարածաշրջանային քաղաքականությանը, որը, վերջիններիս մտադրությամբ, նաև պետք է ուղղված լիներ Իրանի աճող ազդեցության սահմանափակմանը և մուսուլմանական աշխարհում առաջացող տարբեր ուժգնության ծայրահեղական կրոնական ալիքների խաղաղեցմանը։

Իրանա-թուրքական հարաբերությունների սկզբունքային դրսևորումները հնարավորին չափ ամբողջական բնութագրելու համար անհրաժեշտ է համառոտ անդրադառնալ նաև նշված ժամանակահատվածում ռուս-իրանական հարաբերություններին, որոնց ձևավորումը նաև պայմանավորված էր տարածաշրջանում ԱՄՆ-ի և Թուրքիայի քաղաքական և տնտեսական շահերի ընդհանրությունով։

Ներկայիս ռուս-իրանական հարաբերությունները սկսեցին ձևավորվել ԽՍՀՄ-ի ԱԳ նախարար Շևարդնաձեի Թեհրան (1989 թ. փետրվար) և Իրանի նախագահ Ռաֆսանջանիի Մոսկվա (1989 թ. հունիս) կատարած այցելություններից հետո։

Այդ շրջանից, սկզբում խորհրդա-իրանական, իսկ այնուհետև՝ ԽՍՀՄ-ի լուծարումից հետո, ռուս-իրանական հարաբերություններում սկսեցին դրսևորվել ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցության միտումներ։

Այս միտումներին ավելի արագ ընթացք հաղորդեցին Պարսից ծոցի պատերազմը և ԽՍՀՄ-ի լուծարումը, որը նպաստեց տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական առկայության ընդլայնմանը, ինչը բացասաբար ընդունվեց Իրանի կողմից։

Կապերի արագ զարգացմանը նպաստեց նաև Ռուսաստանի հայտարարությունն այն մասին, որ նա երաշխավորում է ԽՍՀՄ-ի և Իրանի միջև կնքված բոլոր պայմանագրերի իրագործումը։

Իրանի ԱԳ նախարարի տեղակալ Ալի Մուհամմեդ Բեշարաթիի բնութագրմամբ, հարաբերությունները Ռուսաստանի հետ մնում են Իրանի արտաքին քաղաքականության ստրատեգիայի հիմքում[2]։

Նշված հանգամանքները Իրանի տեսանկյունից բավարար հիմք հանդիսացան Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացման խնդրում համապատասխան քաղաքականության մշակման համար։

Նախքան ԽՍՀՄ-ի լուծարումը խորհրդա-իրանական հարաբերություններում արդեն նկատելի էր որոշակի սերտացում, ուր հիմնական շեշտը դրվում էր հատկապես ռազմական ոլորտում հարաբերությունների զարգացմանը[3]։

ԽՍՀՄ-ի լուծարումով, Ռուսաստանը ժառանգեց այդ պետական կառույցի քաղաքական և ռազմական դերը և, իրականացնելով խոշորածավալ ներքետական փոփոխություններ, փորձեց պահպանել իր դիրքերը միջազգային ասպարեզում։

Այս տեսանկյունից հասկանալի էր դառնում Իրանի և Ռուսաստանի փոխադարձ շահագրգռությունը կայուն և արդյունավետ հարաբերություններ հաստատելու գործում, քանի որ մի կողմից Իրանին (մեկուսացման պայմաններում) իր քաղաքատնտեսական դերը բարձրացնելու և ԱՄՆ-ի ուղղակի միջամտությամբ Թուրքիայի ազդեցության տարածմանն ուղղված քաղաքականությանը դիմակայելու համար անհրաժեշտ էր խոշոր պետության ծանրակշիռ աջակցությունը, լինի դա քաղաքական կամ ռազմական ոլորտում։ Մյուս կողմից Ռուսաստանը ես՝ իր տարածաշրջանային քաղաքականությունը ավելի արդյունավետ դարձնելու համար, շահագրգռված էր Իրանի հետ իր հարաբերությունների ամրապնդման խնդրում՝ նոր պայմաններում ձևավորվող ռուս-ամերիկյան հարաբերություններում ազդեցիկ լծակ ձեռք բերելու, ինչպես նաև սպառազինությունների շուկան չկորցնելու նպատակով։

Այս հանգամանքներով էին պայմանավորված Ռուսաստանին ուղղված Իրանի հետևողական կոչերը՝ ակտիվորեն միջամտել Աֆղանստանի[4], Պաղեստինի, Ղարաբաղի և այլ տարածաշրջանային կարևորագույն խնդիրների լուծմանը։

Սկզբնական շրջանում ընտրելով համագործակցության ռազմական ոլորտը, այդ երկու երկրները բավականին զգուշավոր քայլերի շնորհիվ փորձում էին պարզել երկու կողմերի համագործակ-

ցնլու պատրաստակամության աստիճանը և դրա՝ ռազմաքաղաքական լուրջ հարաբերությունների վերաճելու հնարավորությունները։

Այժմ կարելի է ասել, որ ռազմական համագործակցությունը խթանեց հետագա ռուս-իրանական լայնածավալ հարաբերությունների զարգացմանը, որոնք ներկա պահին զգալիորեն պայմանավորում են միջպետական հարաբերությունները և նրանց զարգացման միտումները ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային ասպարեզներում։

* * *

Իրանա-թուրքական հարաբերությունների համար չափազանց կարևոր են նաև Իրանի կողմից տվյալ ժամանակահատվածում մի շարք առաջատար երկրների՝ մասնավորապես Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի և այլն, ինչպես նաև ԱՄՆ-ի և Ճապոնիայի հետ հարաբերությունների վերանայման և վերագնահատման ծրագրերը[5]։

Այդ ծրագրերի իրականացումը երկրի տնտեսությունը վերականգնելու և իշխանությունը հոգևորականների ձեռքում պահելու կարևորագույն երաշխիքներից էր։ Այդ նպատակով Իրանը ստիպված էր էապես հրաժարվել առճակատման քաղաքականությունից և ընտրել Արևմուտքի հետ հաշտվելու ճանապարհը։

Այդ են վկայում Արևմուտքի կողմից որպես ահաբեկչական կազմակերպություններ որակվող զանազան իսլամական կազմակերպություններին Իրանի կողմից ցուցաբերվող աջակցության կտրուկ սահմանափակումը, ինչպես նաև արևմտյան պատանդների ազատման գործում Իրանի ակտիվ միջնորդությունը[6]։

Իրանի այս նախաձեռնությունը դրական արձագանք գտավ մի շարք եվրոպական պետություններում, ինչպես նաև Ճապոնիայում և սկզբնական շրջանում, որոշ չափով, նաև ԱՄՆ-ում։

Ընդունելով Իրանի հանգուցային դերը տարածաշրջանային հարաբերությունների համակարգում՝ Եվրոպական Ընկերակցության երկրները լրջորեն մտահոգված էին Իրանի նկատմամբ կոորդինացված քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությամբ։ Դա իր արտահայտությունը գտավ այդ շրջանում եվրոպական մի շարք պետությունների (Իսպանիա, Իռլանդիա, Հու-

նաստան, Պորտուգալիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն) պատվիրակությունների Իրան կատարած այցելություններում, որոնց ժամանակ այդ երկրների բարձրաստիճան պաշտոնյաները շեշտում էին Իրանի ու ԵՀ երկրների միջև սերտ կապեր հաստատելու անհրաժեշտությունը։ Անկասկած, եվրոպական զարգացած պետությունների հետ Իրանի համագործակցությունը պայմանավորված էր երկու կողմերի համար փոխշահավետ հեռանկարներով։

Հատկապես արագ էին վերականգնվում հարաբերությունները Գերմանիայի և Ֆրանսիայի հետ։

Գերմանիայի հետ կապերը զուգահեռաբար զարգանում էին թե՛ քաղաքականության և թե՛ տնտեսությա ու առևտրի բնագավառներում[7]։ Հաճախակի բնույթ էին կրում պաշտոնական շփումները, իսկ Գերմանիայի խոշոր ֆինանսական կազմակերպությունները և արդյունաբերական ընկերությունները Իրանում ակտիվ գործունեություն էին ծավալում։ Հարկ է նշել, որ իրանա-գերմանական հարաբերությունների բարելավումն ընթանում էր Գերմանիայի և Թուրքիայի հարաբերությունների համեմատական վատթարացման ենթատեքստում[8], ինչը որոշ չափով արտացոլում էր Ծոցի պատերազմից հետո եվրոպական երկրների և ԱՄՆ-ի միջև հետզհետե աճող տարաձայնությունները։ Այս հանգամանքը ԱՄՆ-ին ստիպում էր դիմելու ակտիվ գործողությունների՝ Իրանի հետ ուղղակի բանակցություններ սկսելու համար։

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը, արտաքուստ պահպանելով Իրանի նկատմամբ իր անզիջում դիրքորոշումը, իրականում բազմաթիվ փորձեր էր անում այս հարցերում վիճակի շտկման ուղղությամբ նախապայման ստեղծելու համար։

ԱՄՆ-ի դիրքորոշման որոշ մեղմացման մասին են վկայում Հաագայի միջնորդ դատարանի մի շարք որոշումները, որոնք առաջին հերթին պարտադրում էին ԱՄՆ-ին՝ վճարել դեռ շահի ժամանակից Իրանին ԱՄՆ-ի պարտքի մի մասը, իսկ մյուս դեպքում պարտադրում էին երկու ամերիկյան նավթային ընկերություններին՝ Իրանին հատուցելու նյութական կորուստները։

Նույն կոնտեքստում կարելի է դիտարկել նաև ՄԱԿ-ի որոշումը, որով իրանա-իրաքյան պատերազմում Իրաքը ճանաչվել էր ագրեսոր, և նրա վրա պարտավորություն էր դրվել Իրանին հատուցել պատերազմի ժամանակ կրած կորուստների համար։

Այս վերջին որոշումը չափազանց կարևոր նշանակություն ուներ Իրանի համար, քանի որ դրանով մի հսկայական խոչընդոտ էր վերացվում Իրանի և արաբական աշխարհի (հատկապես Ծոցի արաբական պետությունների) միջև բարիդրացիության մթնոլորտ ստեղծելու ճանապարհին։

Մինչ այդ արաբական երկրները, չնչին բացառությամբ, մեղադրում էին Իրանին՝ Իրաքի վրա նախահարձակ լինելու մեջ։

Ֆրանսիական մեկ միլիարդ դոլար պարտքի ու Ֆրանսիայում Իրանի նախկին վարչապետ Բախտիարի սպանության հետ կապված բարդությունները ևս աստիճանաբար վերացվում էին, և Ֆրանսիան, հետևելով Գերմանիային, ընդլայնում էր կապերն Իրանի հետ՝ մասնակցելով Իրանի տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը[9]։

Կարևոր է նշել նաև Ճապոնիայի մասնակցությունը Իրանի նավթահանման ու նավթավերամշակման արդյունաբերության վերականգնմանն ու զարգացմանը։

Իրանական կառավարությունն իր հերթին գիտակցում էր, որ Իրանի հետ կայուն կապեր ստեղծելու կարևորությունն Արևմուտքի համար ուղղակիորեն կապված է այն բանի հետ, թե Իրանը քաղաքական և տնտեսական ինչ կշիռ կունենա նոր պայմաններում՝ տարածաշրջանում և աշխարհում ուժերի նոր վերադասավորությունից հետո։

Իրանա-թուրքական հարաբերությունների ձևավորման վրա ազդեցություն ունեցան նաև մի շարք կարևորագույն տարածաշրջանային գործոններ, որոնցից առաջին հերթին կարելի է առանձնացնել իրանա-սիրիական հարաբերությունների ստրատեգիական բնույթը՝ պայմանավորված հիմնականում Լիբանանի, Պաղեստինի հիմնահարցի, Թուրքիայի, Իսրայելի և ԱՄՆ-ի, ինչպես նաև քրդերի և մի շարք այլ հարցերում համընկնող շահերով[10]։

Իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում, Սիրիան գրեթե միակ արաբական երկիրն էր, որ սերտ հարաբերություններ պահպանեց Իրանի հետ։

Սակայն ներկայացվող շրջանում իրանա-սիրիական հարաբերությունները կարելի է բնութագրել որպես պասիվ կայուն։ Բնական է, որ Իրանը շահագրգռված էր պահպանելու բարիդրացիական հարաբերությունները այդ երկրի հետ։ Այդ իմաստով նշված

պասիվությունը հիմնականում պայմանավորված էր Իրանի ներքին և արտաքին քաղաքականության մեջ իրականացվող նոր պրոցեսներով։

Երկու երկրների փոխհարաբերությունների համար կարևոր էր նաև նրանց դիրքորոշումը Ծոցի երկրների և Իրաքի հետագա ճակատագրի նկատմամբ։

Սակայն նշելով, որ Իրանի և Սիրիայի հարաբերությունները նշված արտաքին, ներքին և մի շարք այլ գործոնների հետևանքով մտնում էին նոր փուլ, և դրանց որոշակիացումն առավելապես կախված էր տարածաշրջանային կարևորագույն խնդիրների նկատմամբ այդ երկուսի դիրքորոշումից, այդուհանդերձ, Իրանի և Սիրիայի միջև սերտ կապերի պահպանումը և հետագա զարգացումը հիմնականում պիտի պայմանավորվեր Թուրքիայի տարածաշրջանային հավակնությունների դեմ ուղղված և Լիբանանի ու Պաղեստինի նկատմամբ Իրանի և Սիրիայի համաձայնեցված քաղաքական կուրսով։

ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Իրանա-թուրքական մրցակցության կարևորագույն ասպարեզներից են մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնցում այդ երկուսը առանցքային դեր են կատարում։

Նման կազմակերպություններից ամենանշանավորը ԷԿՕ (Տնտեսական Համագործակցության Կազմակերպություն) կազմակերպությունն է, որը հիմնվել է Իրանի, Թուրքիայի և Պակիստանի մասնակցությամբ։ Այդ կազմակերպությունը կոչված էր զգալի դեր կատարել նշված պետությունների տնտեսական և արդյունաբերական զարգացման գործում[11]։

Սակայն կազմակերպության հիմնադրումից որոշ ժամանակ անց, չնայած այն հանգամանքին, որ ԷԿՕ-ն հռչակվել էր որպես զուտ տնտեսական կազմակերպություն, նրա երեք անդամներից յուրաքանչյուրը փորձեց գերիշխող դեր ստանձնել նրանում՝ քաղաքականացնելով այն և ձախողելով նախապես ընդունված տնտեսական ծրագրերի իրականացումը։

Արդյունավետ համագործակցությանը խանգարում էին նաև այդ երկրների՝ իրար չհամապատասխանող (հայտնի չափով) տնտեսական համակարգերը։

Սակայն ԽՍՀՄ-ի լուծարումից և համաշխարհային ասպարեզում ուժերի վերադասավորման հետ և ազդեցության ոլորտների համար պայքարի մի նոր փուլ սկսելուց հետո, ԷԿՕ-ի անդամ երկրների միջև սկսվեց նոր մրցավազք, որը այս անգամ ուղեկցվում էր նոր գործոնների ի հայտ գալով։

ԷԿՕ-ի շրջանակներում Իրանի, Թուրքիայի և Պակիստանի միջև ծավալվող ներկառուցվածքային պայքարին նոր երանգ հաղորդեցին անկախացած միջինասիական հանրապետությունների, Ադրբեջանի, ինչպես նաև Աֆղանստանի անդամակցությունը այդ կազմակերպությանը[12]։

Վերը նշված հանրապետությունները և Աֆղանստանը գրեթե միաժամանակ ԷԿՕ-ին անդամակցելու հայտ ներկայացրին և դարձան այդ կազմակերպության լիիրավ անդամներ[13]։

Բնական է, որ այս նոր պայմաններում Իրանը պետք է վերանայեր իր նախկին մոտեցումները ԷԿՕ-ի շրջանակներում՝ Թուրքիայի և Պակիստանի նկատմամբ։

Ստեղծված պայմանների թելադրանքով, իրանա-պակիստանյան հարաբերություններում Իրանի նախաձեռնությամբ սկսվեց զգալի բարելավման շրջան, որը գործնական տեսք ստացավ Ռաֆսանջանիի՝ Պակիստան կատարած պաշտոնական այցելության ժամանակ[14]։

Հարաբերությունների այս էական բարելավումը ենթադրում էր երկու երկրների քաղաքական սկզբունքային նմանատիպ մոտեցումներ Աֆղանստանի, միջինասիական հանրապետությունների, Քաշմիրի, այլ կարևոր տարածաշրջանային խնդիրների, ինչպես նաև ԷԿՕ-ի քաղաքատնտեսական հեռանկարների հանդեպ։

Իրանա-պակիստանյան հարաբերությունների սերտացումը իրանա-թուրքական հարաբերություններում գերիշխող անբարենպաստ մթնոլորտի պայմաններում, Իրանի տեսակետի համաձայն, պիտի պարունակեր ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ԷԿՕ-ի շրջանակներում թուրքական հնարավորությունների և քաղաքական ազդեցության սահմանափակման պոտենցիալ։

Միմյանց հակադրվելու միտումը, որոշ վերապահումներով, ակներևաբար առկա է նաև Իրանի և Թուրքիայի եռանդուն գործունեության մեջ, որն ուղղված էր տարածաշրջանային մի շարք քաղաքատնտեսական կազմակերպությունների ստեղծմանը։

Այսպես, հիմնականում Թուրքիայի նախաձեռնությամբ Սևծովյան տնտեսական կազմակերպության հիմնադրմանը, որպես հակակշիռ, հետևեց Իրանի և Ռուսաստանի նախաձեռնությամբ Կասպից ծովի ավազանի երկրների տնտեսական կազմակերպության ստեղծումը, որի անդամներ դարձան, Իրանից և Ռուսաստանից բացի, նաև Ադրբեջանը, Թուրքմենստանը և Ղազախստանը[15]։

Նույն նպատակն էին հետապնդում Իրանի ջանքերը «Պարսկալեզու երկրների կազմակերպության» ստեղծման ուղղությամբ[16]։

ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆԱՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Միջինասիական հանրապետությունների անկախացումից անմիջապես հետո, իրանա-թուրքական մրցակցությանը Արևմուտքում իրականից ավելի մեծ նշանակություն տրվեց, քանի որ ենթադրվում էր, որ Ռուսաստանը իր ներքին վերափոխումների հետևանքով այլևս չի կարողանա պահպանել իր ազդեցությունը այդ հանրապետություններում, և թափուր գոտին անմիջապես պետք է գրավվեր այլ ուժերի կողմից, որոնք նման քայլերի համար կունենային անհրաժեշտ հնարավորություններ։

Առաջին հերթին նման հնարավորություններ ունեցող երկրներից առանձնացվեցին Իրանը և Թուրքիան[17]։

Հետագայում, միջինասիական հանրապետությունների նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության աստիճանական որոշակիացումը զգալիորեն հանդարտեցրեց Իրանի և մանավանդ Թուրքիայի ղեկավար շրջաններում ի հայտ եկած հավակնությունները Միջին Ասիայի նկատմամբ։

Ասվածը առաջին հերթին վերաբերում է թուրքական քաղաքականությանը, քանի որ իրանական դիրքորոշումը իր դրսևորումների մեջ անհամեմատ ավելի զուսպ և հավասարակշռված էր,

մի հանգամանք, որը բխում էր Իրանի՝ արդեն ավանդական զգուշավոր և շրջահայաց քաղաքականությունից՝ Ռուսաստանի և նրա քաղաքատնտեսական շահերի ոլորտ հանդիսացող շրջանների նկատմամբ։

Միջին Ասիայում Թուրքիայի տնտեսական և քաղաքական հավակնությունները զգալիորեն կապված են ԱՄՆ-ի գործոնի հետ, ինչի շնորհիվ ավելի ակնհայտ են դառնում Իրանի անհանգստության պատճառները, քանի որ ԱՄՆ-ը Թուրքիայի միջոցով թափանցելով Իրանի հյուսիսում գտնվող երկրները, մասնավորապես Ադրբեջան և միջինասիական հանրապետություններ, հնարավորություն կստանար շրջապատել Իրանը ամերիկյան կողմնորոշում ունեցող պետություններով և ուժեղացնել ճնշումը այդ երկրի վրա։ Դեպքերի նման զարգացումը ինքնին վտանգ էր պարունակում նաև Ռուսաստանի համար։

Այստեղից բխում էր Իրանի շահագրգռությունը այդ հանրապետություններում Ռուսաստանի դերի պահպանման և նրա հետ հարաբերությունների ամրապնդման մեջ, ինչը ամերիկյան ազդեցության հակակշիռ կհանդիսանար։

Ուշագրավ է և այն, որ Թուրքիան Արևմուտքի կողմից հետևողականորեն հորջորջվում էր որպես մոդել Ադրբեջանի և միջինասիական հանրապետությունների համար։

Սակայն Արևմուտքի նմանօրինակ դիրքորոշումը, որով Թուրքիային փաստորեն թելադրվում էր արկածախնդրային քաղաքականություն Ռուսաստանի մուսուլմանաբնակ շրջաններում, միջինասիական հանրապետություններում և Ադրբեջանում, բացասական անդրադարձ ունեցավ հենց Թուրքիայի վրա։

Բնական է, որ այս քաղաքականությունը պետք է բախվեր Միջին Ասիայում և Ադրբեջանում նախ Ռուսաստանի գերիշխող և ապա՝ Իրանի շահերին։

Հասկանալի է, որ ինքը՝ Թուրքիան, գնահատելով ստեղծված իրավիճակը և հաշվի առնելով ԵՀ-ին անդամակցելու իր հեռանկարների խիստ հարցական լինելը, չափազանց շահագրգռված էր տարածաշրջանային նոր դեր ստանձնելու գործում՝ արդարացնելու համար Արևմուտքի բարեհաճ վերաբերմունքը և ապացուցելու Մերձավոր և Միջին արևելքում Արևմուտքի համար իր նոր դերի կարևորությունը։

Ադրբեջանի դեպքում, փորձելով օգտագործել ԽՍՀՄ-ի լուծարումը, Թուրքիան ձգտում էր որպես ազդեցիկ լծակ շահարկել նաև այդ հանրապետությունում գերիշխող թուրքամետ քաղաքական ուղղվածությունը՝ այդ հանրապետության նավթային հարուստ ռեսուրսներին տիրանալու նպատակով։ Նրա նպատակն էր նաև այս հանգամանքը զուգահեռաբար դարձնել Իրանի ներքին իրավիճակը ապակայունացնելու միջոց, քանի որ այդ հանրապետությունում ազգայնական ծայրահեղական հավակնությունները տեսականորեն կարող էին նմանատիպ տրամադրություններ առաջացնել իրանական Ադրբեջանում։

Իրադարձությունների զարգացման նման ընթացքից խուսափելու համար Իրանը իրականացրեց մի շարք վարչատարածքային փոփոխություններ, որոնց շարքում կարելի է առանձնացնել Արևելյան Ադրբեջանի վարչատարածքային վերաբաժանումը։

Ադրբեջանի շուրջ ծավալվող իրանա-թուրքական հարաբերությունների խնդրին սերտորեն կապված էր նաև Ղարաբաղի խնդիրը, որում երկու երկրներն էլ փորձում էին ակտիվ մասնակցություն ունենալ, ընտրելով սակայն տարբեր գործելակերպ[18]։

Հարկ է նշել, որ Ղարաբաղի խնդիրը Թուրքիայի և Իրանի ներքին քաղաքական իրավիճակի վրա ուներ ոչ ադեկվատ ազդեցություն։

Չնայած այն բանին, որ ինչպես Իրանը, այնպես էլ Թուրքիան մեծ շահագրգռություն էին ցուցաբերում ղարաբաղյան հակամարտության նկատմամբ և երկուսն էլ այդ կոնֆլիկտը դիտարկում էին որպես սեփական անվտանգության հետ սերտորեն կապված խնդիր, այդուհանդերձ, եթե Իրանի դեպքում ղարաբաղյան իրադարձությունները գրեթե չէին անդրադառնում այդ երկրի ներքին քաղաքական վիճակի վրա, ապա Թուրքիայի դեպքում դրանք ուղղակիորեն շիկացնում էին երկրի ներքաղաքական մթնոլորտը և թուրքական հասարակության նկատելի բևեռացման պատճառ էին դառնում։

Ղարաբաղյան հարցում Թուրքիայի բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշումը, որը, սակայն, չազդեց Ղարաբաղում հայկական ուժերի հաջողությունների վրա, հարված հասցրեց Թուրքիայի

հեղինակությանը Ադրբեջանի և միջինասիական հանրապետությունների աչքում։

Նույն հարցում Իրանի արտաքուստ չեզոք դիրքորոշումը հնարավորություն տվեց նրան, նույնիսկ անհաջող միջնորդությունից հետո, չկորցնել իր հեղինակությունը և պահպանել իր դեմքը։

Իրանը, ավելի քան հավանական է, որ, պաշտոնապես պաշտպանելով պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը, ի վերջո կհամակերպվեր Ղարաբաղի հայերի օգաին և Ռուսաստանի դիրքորոշմանը չհակասող որևէ նոր կարգավիճակի։

Այս դիրքորոշմանը կարելի է տալ առավել հավանական երկու բացատրություն.

1. Իրանը ընդհանուր առմամբ նախկին ԽՍՀՄ տարածքում իրականացվող սահմանային որևէ փոփոխություն ընկալում է որպես յուրահատուկ և նոր պայմաններին համապատասխանեցված, սակայն ներքին խնդիր։

2. Ռեգիոնում յուրաքանչյուր աշխարհաքաղաքական փոփոխություն, որն իր որևէ դրսևորումով ունի հակաթուրքական երանգ, ինքնաբերաբար գնահատվում է որպես Իրանին ձեռնտու երևույթ։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ՝ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Իրանա-թուրքական հարաբերությունների նկարագիրը ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ տարածաշրջանում հարակից երկրների շարքից առաջնային դաշնակիցներ ընտրելու Իրանի որոշակի սկզբունքին։

Նշված ժամանակահատվածում ավելի ու ավելի հետևողական և նպատակաուղղված են դառնում Իրանի ջանքերը՝ բարելավելու իր հարաբերությունները այն երկրների հետ, որոնք իրենց պատմական զարգացման ընթացքում տարբեր չափերի բարդություններ են ունեցել Թուրքիայի հետ, կամ ներկա պահին, որոշակի հանգամանքների բերումով, Իրանի կողմից դիտվում են որպես հնարավոր դաշնակիցներ՝ որոշակիորեն հակաթուրքական պոտենցիալով։

Ասվածը, բացի Ռուսաստանից և Սիրիայից, վերաբերում է նաև Հայաստանին, Հունաստանին, Կիպրոսին և որոշ չափով նաև Բուլղարիային։

Հատկանշական է, որ 1992 թ. Իրանի հետ պայմանագրեր կնքած 17 արտասահմանյան ընկերություններից 6-ը կիպրական էին[19]։

Նոր թափ ստացան նաև իրանա-հունական հարաբերությունները։ Հունաստանը աստիճանաբար դառնում է իրանական նավթի ամենախոշոր գնորդներից մեկը։

Բացի այդ Հունաստանը, Եվրոպական Ընկերակցության մյուս անդամների համաձայնությամբ, նախաձեռնող է հանդիսանում ԵԸ-ի և Իրանի միջև ակտիվ համագործակցության հետագա ընդլայնման գործում և միաժամանակ ցանկություն է հայտնում համագործակցել Իրանի հետ՝ ռեգիոնալ անվտանգության ապահովման հարցերում։

Ուշագրավ է նաև այն, որ Հունաստանը բազմիցս գոհունակություն է հայտնել Բալկանների խնդրի շուրջ Իրանի պաշտոնական տեսակետների վերաբերյալ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Եվրոպայի միավորումից հետո Թուրքիայի առջև դժվարություններ ծառացան ԵԸ-ի անդամ դառնալու խնդրում։

Սահմանափակ են նաև նրա հնարավորությունները արաբական աշխարհ թափանցելու և արաբական երկրներում իր ազդեցությունը գոնե չնչին չափով մեծացնելու հարցում։ Այդ խնդիրը բարդանում է մանավանդ Իսրայելի հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելու, ինչպես նաև Տիգրիս ու Եփրատ գետերի ջրերի օգտագործման հարցում իր անզիջում դիրքորոշման պատճառով, ինչը բացասական ռեակցիա է առաջացնում գրեթե բոլոր արաբական երկրներում։

Թուրքիայի վիճակը բարդանում է հետզհետե ծավալվող քուրդ-թուրքական պատերազմի հետևանքով, որի նկատմամբ զգայունություն են ցուցաբերում ինչպես Ռուսաստանը, Իրանը, Սիրիան, այնպես էլ ԱՄՆ-ը և արևմտաեվրոպական մի շարք երկրներ։

Այս ամենը ընթանում է Թուրքիայի ներսում քաղաքական և տնտեսական պրոբլեմների սրման հետ մեկտեղ աշխուժացող կրոնական գործոնի պայմաններում, որն իր բնույթով ապակայունացնող պոտենցիալ ունի։

Այս բոլորի հետևանքով, տարածաշրջանային դաշնակիցներ ձեռք բերելու տեսակետից, Թուրքիան հայտնվել է բավականին անբարենպաստ վիճակում։

[6] *Cemal Kutay.* Enver Paşa Lenine Karşı. Istanbul, 1956

[7] *Paul Dumont.* La fascination du bolchevisme. Enver Pacha et le parti des Soviets populaires. „Cahiers du monde russe et sovietique". Paris, april-juin 1975, p. 144—157.

[8] *Jacques Dérogy.* Operation Nemesis. Les vengeurs armeniens, Paris, 1986.

[9] См., например *Е. К. Саркисян, Р. Г. Саакян.* Фальсификация новой истории армянского народа в турецкой историографии. Ереван, 1963 (на арм. яз.). То же на анг. яз.). *E. K. Sarkissian* and *R. G. Sahnklan.* Vital Issues in Modern Armenian History. Watertown, Mass, 1965. *Дж. С. Киракосян.* Западная Армения в годы первой мировой войны. Ереван, 1965 (на арм. яз.); Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. проф. М. Г. Нерсисяна. Составители: *М. Г. Нерсисян, Р. Г. Саакян.* Ереван, 1966 (Второе изд. 1982) и др.

[10] *Y. H. Bayur.* Türk Inkilâbı Tarihi, kisim 3. Ankara, 1962, *E. Z. Karal.* The Armenian Question. Ankara, 1975; *T. Atabv.* A brief glance at the Armenian Question. Ankara, 198 . *S. R. Sonyel.* Ermeni Tehcirt ve belgeler. Ankara, 1978; *Idem.* The Ottoman Armenians. Victims of Great Power Diplomacy. London, 198 ; *B. Simsir.* The Genesis of the Armenian Question. Ankara, 1984; *K. Gürün.* Le Dossier armenien. Paris, 1984; *M. Hocaoglu.* Arsiv vesikarlyla tarihte ermeni mezalimi ve Ermeniler. Istanbul, 1976; *I. C. Ozkaya.* Le peuple armenien et les tentatives de reduire le peuple turc en servitude. Istanbul, 1971; *Alin Kemal Oke.* The Armenian Question 1914—1923. Nicosia, 1988, etc.

[11] *A. Mandelstam.* Le sort de l'Empire Ottoman. Lausanne—Paris, 1917, p. 248, 277, 278.

[12] *J. Lepsius.* Le rapport secret sur les massacres d'Armenie. Publication avec une preface par Rene Pinon. Paris, 1918, p. 45—46, 128—129.

[13] Ambassador Morgenthau's story. Garden-City—New York, 1918, p. 301—304.

[14] *Rene Pinon.* La suppression des Armeniens. Methode allemande—travail turc. Paris, 1916, p. 28, 30.

[15] *A. Toynbee.* The Armenian Atrocities. A Murder of a Nation. London, 1915, p. 6.

[16] The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—1916. London, 1916, p. 656.

[17] *Г. А. Гиббонс.* Последние избиения в Армении, Факты и ответственности. Пер. с анг., СПб., 1916.

[18] *J. de Morgan.* Contre les barbares de l'Orient, Etudes sur la Turquie, Paris—Nancy, 1918.

[19] *J. Markuart.* L'origine et la reconstitution de la nation armenienne. Paris, 1919.

[20] *Е. К. Саркисян.* Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы 1 мировой войны. Ереван, 1962; *Дж. С. Киракосян.* Младотурки перед судом истории. Ереван, 1983; *Р. Г. Саакян.* Из истории геноцида. Ереван, 1990; *А. Д. Новичев.* Турция. Краткая история. М., 1965 и др. *Jean Marie Carzou.* Un génocide exemplaire Paris, 1975; *Ives Ternon.* Armenie. Histoire d'un genocide. Paris, 1977; *Idem.* L'enquete sur la négation d'un genocide. Marseille, 1989; *Leo Kuper.* Genocide. New York, 1980; *Roger W. Smith, Jamms W. Reid, Clive Foss, Annete Hos* and other in; The Armenian genocide. Histoiry, Politics, Ethics. Edited by *Richard G. Hovhannissian.* New York, 1992; *Vahakn N. Dadrian.* The history of the Armenian Genocide. Providence—Oxford, 1995; *Chr. J. Waker.* Armenia. The survival of at Nation, London, 1980; *А. Дж. Тойнби.* Цивилизация перед судом истории. СПб., 1995, с. 357 368.

[21] См: Les Temps Modernes. Paris, juillet—septembre, 1983, p. 59—60.

[22] См. там же, с. 74.

[23] *Taner Akçam.* Türk Ulusal Kimligi ve Ermeni sorunu. Istanbul, 1993, s. 113—114.

См. газ «Երկիր» („Еркир") от 15. 10. 1994 г.

[25] См. *Г. Г. Махмурян.* Тема геноцида армян в американской историографии (1985—1994).—Историко-филологический журнал НАН РА, 1995, № 1, 2; Р. *Г. Саакян, Р. А. Сафрастян.* Международная конференция, посвященная 80-летию геноцида армян.—Там же. № 2 (на арм. яз)

[26] См: *Leslie A. Dovis.* La province de la mort. Bruxelle, 1994, p. 9.

[27] *Yves Ternon.* L'Etat criminel. Les genocides au XX siécle. Paris, 1995. p. 179–198.

[28] См., например, *B. Simsir.* The deportees of Malta and the Armenian Question. Ankara, 1981; *S. Orel, S. Yuca.* Les telégrammes de Talaat Pacha. Paris, 1986.

[29] *Vahakn N. Dadrian.* The Naim-Andonian Documents on the World War I destruction of Ottoman Armeniens: The Anatomy of a genocide. International Journal of Middle East Studies, vol. 18, № 3 (1986), p. 311–359. *Idem.* The History of the Armenian Genocide. Providence—Oxford, 1995.

[30] Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов. Тифлис, 1926, с. 19.

[31] *Lesley A. Davis.* The Slaughterhouse Province. Edited with an Introduction and Notes by Susan K. Blair. New Rochelle, New York, 1989, p. 33.

[32] См.: Новая история Армении в трудах современных зарубежных авторов. Ереван, 1993.

[33] См.: *Инджикян Оганес.* Социальная психология геноцида. М., 1995.

[34] *Bernard Lewis.* The Emergence of Modern Turkey. London, 1961, p. 350.

[35] См.: „L'Histoire", revue mensuelle. Paris, 1995. № 187, Avril, pp. 22–45.

ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆ

ՄԱՐՎԱՆՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՆ ԵՎ ՄԵԾ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԸ

Դիյար Բաքրում՝ Վերին Միջագետքում, ինչպես նաև Հայաստանի հարավարևմտյան գավառներում սելջուկ-թյուրքերի ի հայտ գալը ճակատագրական եղավ նաև վերը նշված տարածքում X—XI դդ. հաստատված Մայյաֆարիկին (պատմական Նփրկերտ) կենտրոնով քրդական Մարվանյան դինաստիայի համար։

Քրդական այս դինաստիայի ավելի քան հիսնամյա պատմությունը սերտորեն կապված է սելջուկյան աշխարհակալության՝ Մեծ սելջուկների (1040—1092 թթ.) պատմության հետ։ Դա այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում հիմնականում ավարտվեց Մերձավոր և Միջին արևելքի՝ Իրանի, Իրաքի, Ասորիքի, Ատրպատականի, Հայաստանի, Փոքր Ասիայի կենտրոնական և հարավային և այլ շրջանների նվաճումը սելջուկների կողմից։

Մարվանյան դինաստիայի և սելջուկների փոխհարաբերությունները ցարդ առանձին ուսումնասիրությունների առարկա չեն դարձել արևելագետների կողմից։

Մարվանյան դինաստիայի և սելջուկների փոխհարաբերությունների մասին ուշագրավ նյութեր են հաղորդում միջնադարյան սկզբնաղբյուրները։ Դրանց մեջ առավել աչքի են ընկնում արաբալեզու հեղինակների հաղորդումները, որոնք, միմյանց լրացնելով, տալիս են Մարվանյանների և Մեծ սելջուկների հարաբերությունների ընդհանուր պատկերը։ Այդ տեսակետից հատկապես կարևոր են XII դարի հեղինակ Իբն ալ-Ազրակի տվյալները, որի «Թարիխ Մայյաֆարիկին» (Մայյաֆարիկինի պատմություն) երկի վերջին մասն ամբողջությամբ նվիրված է մեզ հետաքրքրող հարցերին[1]։ Մեր նյութի ուսումնասիրության համար պակաս կարևորություն չեն ներկայացնում XIII դարի ականա-

վոր մատենագիր Իբն ալ-Ասիրի[2] հաղորդած տեղեկությունները, որոնք շատ հաճախ ոչ միայն լրացնում են Իբն ալ-Ազրակին, այլ ավելի հավաստի են և ամփոփ են ներկայացնում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունները։ Կցկտուր, բայց միաժամանակ արժեքավոր տվյալներ են պարունակում Իբն ալ-Ջաուզիի[3] (XII դ.), Իբն Խալդունի[4] (XIV դ.), Իբն Քասիրի[5] (XIV դ.), Աբուլ-Ֆիդայի[6] (XIV դ.), Իբն ալ-Վարդիի[7] (XIV դ.) և այլոց երկերը։

Սույն հոդվածում, որը շարադրվել է գլխավորապես սկզբնաղբյուրների նյութերի հիման վրա, շրջանառության մեջ են դրվել նաև այլ աղբյուրների[8] տվյալները, որոնք իրենց հերթին, ինչ-որ չափով լրացնում են արաբալեզու մատենագիրների հաղորդումները։

Եղած նյութերը ցույց են տալիս, որ Դիյար Բաքր՝ Վերին Միջագետք և այդ թվում Հայաստանի հարավարևմտյան գավառներ, թյուրք թափառող օղուզները մուտք գործեցին Ատրպատականից։ Այս նահանգը Խորասանից Իրանի վրայով դեպի Անդրկովկաս ներխուժող թյուրքմեն հրոսակների համար աշխարհագրականորեն դարձել էր գլխավոր հանգրվանը[9]։

Օղուզական ցեղերն Ատրպատական ներթափանցեցին դեռևս 1029 (Հիջրի 420 թ.), երբ Բուխարայում հաստատված սելջուկթյուրքմենական խմբավորումը և օղուզ-թյուրքմենական միացյալ ուժերը պարտություն կրեցին Ղազնավյան սուլթան Մահմուդից։

Իբն ալ-Ասիրն ու Իբն Խալդունը նշում են, որ Հիջ. 433 1041/42 թ. թափառող թյուրք-օղուզները շարժվելով Ատրպատականից՝ մտան Դիյար Բաքր, որոնք մինչ այդ սարսափելով Տուղրիլ բեգի եղբորից՝ Իբրահիմ Յաննալից, հեռացել էին Ջիբալից և հաստատվել Ատրպատականում[10]։ Անհնազանդ այս ցեղերն Ատրպատականում ևս երկար չմնացին. նրանց, ինչպես գրում են վերը նշված հեղինակները, հետապնդում էր Իբրահիմ Յաննալը, որոնք նրա եղբայրների՝ Տուղրիլի և Դաուդի հպատակներն էին՝ ռայան։ Օղուզները հարկադրված իրենց հետ վերցրին մի խումբ քրդերի, որոնք ճանապարհ ցույց տալով դուրս բերեցին ազ-Զավազան (Անձևացիք), ապա՝ Ջաղիրա իբն Օմար։ Օղուզների հրամանատարներից Բուկան, Նասօղլին և այլք մտան Դիյար Բաքր, կողոպտեցին Կարդան, Բազաբդան, ալ-Հուսայնիյան և Ֆիշաբուրը։ Ջա-

զիրայի արևելյան մասում մնաց օղուզ հրամանատար Մանսուր Ղիզօղլին, որի հետ կապ հաստատեց Ջազիրա իբն Օմարի կառավարիչ՝ Մարվանյան Նասր ադ-Դաուլայի (1011—1061 թթ.) որդին՝ Սուլեյմանը։ Վերջինս թյուրք հրամանատարին առաջարկեց դաշնագիր կնքել և օղուզական մյուս խմբերի հետ հարձակվել Ասորիքի (Շամի) վրա։

Համաձայնության գալով՝ քուրդ ամիրան ճաշկերույթ կազմակերպեց թյուրք հրամանատարի պատվին, հրավիրեց Ջազիրա և ձերբակալեց նրան։ Օղուզները ցրվեցին տարբեր ուղղություններով։ Իմանալով Մարվանյան Սուլեյմանի դավադրության մասին՝ Մոսուլի արաբ ուկայլիների ամիրա Կիրվաշը մեծ զորք ուղարկեց օղուզներին ջախջախելու համար։ Մոսուլից եկած արաբական զորախմբերին միացան Ֆանակ (Փինիկ) ամրոցի տեր քուրդ բաշնավիներն ու Մարվանյան ամիրա Նասր ադ-Դաուլայի զորքերը։

Ինչպես գրում են Իբն ալ-Ասրն ու Իբն Խալդունը, արաբաքրդական միացյալ զորախմբերը հետապնդեցին թյուրքերին և սաստիկ կռվեցին նրանց դեմ։ Պարտության մատնված օղուզներն իրենց անվտանգությունը ապահովելու համար առաջարկեցին տալ ձեռք բերած ողջ ավարը։ Սակայն արաբա-քրդական միացյալ զորքերը մերժեցին այդ, և վերսկսվեցին ընդհարումները։ Մարտի ընթացքում արաբներից շատերը վիրավորվեցին և հետ նահանջեցին։ Օղուզական որոշ խմբեր մեկնեցին Սինջար և Նիսիբին (Մըծբին) ասպատակություններ ձեռնարկելու նպատակով։ Ապա նրանք վերադարձան Ջազիրա և պաշարեցին այն։ Արաբները հեռացան դեպի Իրաք, և օղուզներն ավերեցին Դիյար Բաքրը, կողոպտեցին և գերեվարեցին։ Մարվանյան իշխան Նասր ադ-Դաուլան հարկադրված եղավ ազատ արձակելու իր տղայի՝ Սուլեյմանի կողմից ձերբակալված օղուզ հրամանատարին՝ Մանսուր իբն Ղիզօղլիին։ Մինչ այդ Նասր ադ-Դաուլան բանակցեց օղուզների հետ, խոստացավ դրամ տալ և ազատել Մանսուրին միայն այն պայմանով, որ նրանք հեռանան Դիյար Բաքրի տիրույթներից։

Չնայած նա այդպես էլ վարվեց, բայց օղուզները խաբեցին նրան և, ինչպես ցույց են տալիս մեր ձեռքի տակ եղած նյութերը, դիմեցին ավելի ահավոր չարագործությունների։ Նրանց մի մասը կողոպտեց Սինջարը, Նիսիբինը, Խաբուրը և վերադարձավ։ Մի մասն էլ գնաց Ջուհայնա և ալ-Ֆարջի կողմերը և գերեվարեցին այդ

շրջանները։ Սարսափահար ուկայլիների ամիրա Կիրվաշը մտավ Մոսուլ[11]։

Նույն թվականին (1041/42 թ.) օղուզական զորախմբերը ներխուժեցին նաև Մոսուլի մարզը, գրավեցին Մոսուլ քաղաքը, որտեղից փախուստի դիմեց Կիրվաշը։ Օղուզները կողոպտեցին մարզը և բռնագրավեցին Կիրվաշի մեծաքանակ հարստությունը։ Ուկայլիների ամիրան դիմեց քուրդ և արաբ առաջնորդներին՝ օղուզներին հակահարված հասցնելու խնդրանքով[12]։ Զնայած Մոսուլի բնակչությունը ոտքի կանգնեց և ջախջախեց օղուզներին, այնուհանդերձ նրանք հաստատվեցին մարզում։

Նույն 1041/42 թ. արաբ ուկայլիների ամիրա Կիրվաշը ջախջախեց օղուզներին։ Կիրվաշի դեմ կռվելու համար Մոսուլ ժամանեցին Դիյար Բաքրում հաստատված թափառող օղուզների առաջնորդներ Բուկան և Նասօղլին։ Փախուստի մատնվելուց հետո օղուզները կրկին մեկնեցին Դիյար Բաքր՝ կողոպտելու Մարվանյան տիրույթները։ Այնուհետև, ինչպես նշում են արաբալեզու աղբյուրները, նրանք կողոպտեցին հայերին, հոռոմներին և մեկնեցին Ատրպատական[13]։

Վերին Միջագետքում և հարակից շրջաններում տեղի ունեցած այս իրադարձությունների մասին Իբն ալ-Ազրակը հաղորդում է մեկ այլ տարբերակ։ Նրա տվյալների համաձայն, Հիջ. 434 (1042/43 թ.) Տուղրիլ բեգը թյուրք Բուկա և Նասօղլի անունով հրամանատարների գլխավորությամբ 10 հազարանոց զորք ուղարկեց Դիյար Բաքրը նվաճելու համար՝ այն որպես իկտա նրանց տալու պայմանով։ Հասնելով այստեղ՝ նրանք կողոպտեցին և պաշարեցին Մայյաֆարիկինը։ Մի քանի օր փակվեցին քաղաքի դարպասները, և երկու կողմերն սկսեցին բանակցել։ Մարվանյանները օղուզներին առաջարկեցին 50 հազար դինար՝ Դիյար Բաքրից հեռանալու պայմանով, բայց դա մերժվեց նրանց կողմից[14]։

Դիյար Բաքր օղուզ-թյուրքերի մուտք գործելու վերաբերյալ արաբալեզու մատենագիրները տարբեր թվականներ են հաղորդում (1041/42—1042/43 թթ.)։ Ենթադրում ենք, որ Իբն ալ-Ասիրի և Իբն Խալդունի տվյալներն ավելի մոտ են ճշմարտությանը։ Օրինակ, չի կարելի համաձայնել Իբն ալ-Ազրակի հետ այն խնդրում, որ Բուկայի և Նասօղլիի կատարած ասպատակությունը կատարվեց Տուղրիլ բեգի հրամանով։ Եղած նյութերը ցույց են տալիս, որ այդ

շրջանում, օգտվելով ստեղծված քաղաքական իրավիճակից, սելջուկներին թշնամաբար տրամադրված օղուզներն սկսեցին ձեռնարկել, այսպես կոչված, մասնավոր ասպատակություններ՝ բնակության նոր վայրեր և ավար ձեռք բերելու նպատակով, ինչպես Ատրպատականում հաստատված օղուզների ասպատակությունները դեպի հարավ Հայաստան և հարակից այլ շրջաններ։

1048 թ. աշնանը Իբրահիմ Յաննալի գլխավորությամբ սելջուկ-թյուրքերը մեծ արշավանք ձեռնարկեցին դեպի Հայաստան և Բյուզանդական կայսրություն[15]։ Անդրադառնալով արշավանքի դրդապատճառներին՝ Իբն ալ-Ասիրը գրում է, որ Մավարաննահրից մեծ թվով թյուրքական ցեղեր ժամանեցին Իրան՝ Իբրահիմ Յաննալի մոտ։ Գերեվարելով, սելջուկները հասան Մանազկերտ, Արծն (Արզան առ-ռում), Կարնո քաղաքը (Կալիկալա) և այլն։ Հաղթելով կայսրության միացյալ զորքերին՝ սելջուկները գերի վերցրին այնայլ պատրիկների թվում նաև վրաց իշխան Լիպարիտին[16]։ Իբրահիմ Յաննալը հսկայական ավարով վերադարձավ Ռեյ և ներկայացավ սուլթանին։ Լիպարիտին ազատելու համար, ինչպես հաղորդում է Իբն ալ-Ասիրը, սելջուկներին առաջարկվեց 300 000 դինար և 100 000-ի նվերներ, որը մերժվեց Տուղրիլ բեգի կողմից[17]։

1049 թ. սելջուկների և կայսրության միջև զինադադար կնքվեց։ Տուղրիլը շուրջ 4 տարի դադարեցրեց արշավանքներն ընդդեմ կայսրության, մանավանդ որ մի կողմից նա զբաղված էր թյուրքմենների ապստամբությունների ճնշմամբ, մյուս կողմից նրա ամենագլխավոր նպատակն էր գրավել Բաղդադը՝ Աբբասյան մայրաքաղաքը[18]։

Զինադադարից հետո սելջուկյան սուլթանի պատվերով՝ նրա պատվին, խութբա տրվեց Դիյար Բաքրում, որին Նասր ադ-Դաուլան հայտնեց իր հնազանդության մասին[19]։ Տուղրիլ բեգը առանց փրկագնի ազատ արձակեց նաև վրաց իշխան Լիպարիտին։ Քուրդ ամիրան և բյուզանդական կայսրը բարձր գնահատեցին սուլթանի այդ վարմունքը և փոխարենը նրան հսկայական քանակությամբ նվերներ ուղարկեցին։ Բացի այդ, կայսրի հրամանով վերանորոգվեց Կ. Պոլսի մզկիթը և խութբա տրվեց սելջուկ առաջնորդի պատվին[20]։

1054/55 թ. (446 թ.) Տուղրիլ բեգը արշավեց Ատրպատական, մտավ Թավրիզ, որին հնազանդվեց Ռավվադյան Վահսուդան իբն Մուհամմադը։ Ապա՝ սուլթանին ենթարկվեց Գանձակի Շադդադյան Աբու-լ-Ասվարը։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը խութբա տվեցին սելջուկ սուլթանի պատվին։ Այնուհետև, նա հասավ Մանազկերտ, պաշարեց քաղաքը և կողոպտեց ողջ գավառը։ Այդ ժամանակ, նշում է Իբն ալ-Ասիրը, սուլթանին մեծ քանակությամբ նվերներ ուղարկեց Մարվանյան ամիրա Նասր ադ-Դաուլան[21]։ Ինչպես երևում է, ամիրան այդ ճանապարհով՝ նվերներ տալով, կաշառելով և հպատակությունը հայտնելով, փորձում էր խաղաղ, առանց ընդհարումների հետ մղել սելջուկներին, նույնիսկ խոստանալով զենքով ու զորքով մասնակցել Տուղրիլի հետագա արշավանքներին[22]։

1055 թ. Աբբասյան խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը նվաճելուց հետո Տուղրիլ բեգի զորքը մտավ Մոսուլի մարզը և այն խլեց արաբ ուկայլիներից։ Ապա, շարժվելով դեպի հյուսիս՝ սելջուկյան զորքը 1056/57 թ. մտավ Դիյար Բաքր և պաշարեց Մարվանյան տիրույթներից մեկը՝ Ջազիրա իբն Օմարը։ Կողոպտելով շրջանի հայկական և ասորական մի շարք վանքեր՝ սելջուկները սրախողխող արեցին բազմաթիվ քահանաների։ Մարվանյան ամիրան՝ Նասր ադ-Դաուլան, որը, Իբն ալ-Ասիրի խոսքերով, մինչ այդ ամեն օր սուլթանին նվերներ և աղ էր ուղարկում, ստիպված եղավ կրկին դրամ տալ՝ իր իշխանությունը պահպանելու համար։ Դիմելով Տուղրիլ բեգին՝ Նասր ադ-Դաուլան սկսեց համոզել նրան, թե Դիյար Բաքրում իր իշխանությունը որքան կարևոր դիրք է գրավում, պաշտպանում է մահմեդականների սահմանային գոտիները և պայքար է մղում ընդդեմ քրիստոնյաների (քաֆիրների)[23]։

Այսպիսով, վերը բերված տվյալները ցույց են տալիս, որ դինաստիայի գոյությունը պահպանելու համար Նասր ադ-Դաուլան դիմում էր տարբեր քայլերի և սելջուկներին ոչ միայն թանկարժեք նվերներ ու ունեցվածք էր տալիս[24], այլև փորձում էր համոզել, թե Դիյար Բաքրում իր դինաստիան որքան կարևոր ստրատեգիական դիրք է գրավում քրիստոնեական աշխարհի դեմ պայքարում։ Դրանով էլ՝ ընդունելով սելջուկների գերիշխանությունը, նրան հաջողվեց կանխել սելջուկների արշավանքները և ժամանակավորապես դինաստիան փրկել կործանումից։ Ուստի, պատահական չէ, որ

մինչև Նասր ադ-Դաուլայի մեռնելը՝ 1061 թ., սուլթանը համարյա լուրջ փորձեր չկատարեց միջամտելու Մարվանյանների գործերին։

Նասր ադ-Դաուլայի վախճանվելուց հետո իշխանության գլուխ անցնելու համար սուր վեճեր ծագեցին նրա երկու տղաների՝ Նիզամ ադ-Դինի և Սայիդի միջև[25]։ Դինաստիայի վեզիր Ֆախր ադ-Դաուլա իբն Ջահիրի աջակցությամբ այդ պայքարում հաղթեց Նիզամ ադ-Դին Նասիրը, որին հայրը՝ Նասր ադ-Դաուլան կտակել էր իշխանությունը։ Դինաստիայի մայրաքաղաքում՝ Մայյաֆարիկինում իշխեց Նիզամ ադ-Դինը, իսկ Ամիդում Սայիդը[26]։ Դրանով, ինչպես երևում է, չավարտվեցին երկու եղբայրների հակասությունները։ 1068 թ. սելջուկյան զորքը հասավ Մարվանյան մայրաքաղաք և սկսեց ասպատակել այն։ Որոշ բանակցություններից հետո Նիզամ ադ-Դինը 50 հազար դինար կաշառքով հետ ուղարկեց սելջուկյան զորքերին[27]։

Ջնայած Նիզամ ադ-Դինը ինչ-որ չափով շարունակեց հոր քաղաքականությունը, բայց նրա օրոք սելջուկներն ավելի հաճախ փորձեր կատարեցին ներխուժելու Դիյար Բաքր։ Նման փորձ ձեռնարկեց նաև սելջուկյան Սալար Խորասանը (Խորասանի Սալարը՝ տիտղոս է—Ա. Փ.)։ Ըստ Մ. Ուռհայեցու, այս զորապետը դեպի Հայաստանի հարավային գավառներ և Ուռհայի շրջան կատարեց մի քանի արշավանքներ։ 1062 թ. երկու այլ հրամանատարների հետ հերթական արշավանքի ժամանակ Սալար Խորասանը ներխուժեց Դիյար Բաքրին սահմանակից Չորրորդ Հայքի՝ Պաղինի և Հայաստանի Միջագետքի Թլմուխի շրջանները։ Մեծ ավերածություններ կատարելով՝ նրանք զգալի քանակությամբ գերիներ վերցրին։ Եվ «երբ,—գրում է Մ. Ուռհայեցին,—Ամիթ (Ամիդ) քաղաքում նստող ամիրան՝ Նսրտոլի որդին (Նասր ադ-Դաուլայի որդին—Ա. Փ.) լսեց սոսկալի դժբախտության մասին, նամակ գրեց Սալար Խորասանին, նրա հետ բարեկամություն հաստատեց և հրամայեց իր գավառում վաճառել բոլոր գերիներին։ Նա բարի մարդ էր և քրիստոնյաներին գթացող. ամբողջ երկրով մեկ հրովարտակ հրապարակեց՝ կոչ անելով գնել բոլոր գերիներին։ Այդպես էլ եղավ։ Երբ գերիներին բերեցին Ամիթ՝ վաճառքի, շատերը քաղաքի դռների առջև նահատակվեցին։ Կարելի էր տեսնել իրեղեն լույսը, որ երկնքից իջել էր նրանց վրա»[28]։ Ամիդի ամիրան,

ըստ Մ. Ուռհայեցու, այդ ժամանակ Սայիդն[29] էր, որին, ինչպես նշվեց, տրվեց այդ քաղաքն իր շրջանով ու ամրոցներով։

Լսելով Սալար Խորասանի ահավոր վայրագությունների մասին՝ բյուզանդական կայսրը Դուկաս Ֆրանկոպուլիի (Հերվե) գլխավորությամբ զորք ուղարկեց՝ սելջուկներին հակահարված հասցնելու համար։ Ֆրանկոպուլիին իր զորքով միացավ նաև Եդեսիայի Տավտանոս զորավարը և, հետապնդելով Ատրպատական վերադարձող սելջուկներին, պաշարեցին Ամիդը։ Քաղաքի բնակիչները կաշառելով Ֆրանկոպուլիին՝ կարողացան վերացնել պաշարումը, թեև բավական զոհեր տվեցին Տավտոնոսի հետ գոտեմարտի բռնվելու ընթացքում[30]։

1064, Անիի գրավումից հետո սելջուկներն սկսեցին հաճախակի արշավել դեպի Հայկական լեռնաշխարհը և Փոքր Ասիայի խորքերը։ 1066 թ. Սալար Խորասանը գրավեց և ավերեց Ուռհայի (Եդեսիա) շրջակայքը[31]։ Նահանջի ճանապարհին նա Դիյար Բաքրում ընկավ ծուղակի մեջ և սպանվեց Մարվանյանների կողմից։ Իբն ալ-Ազրակը սխալմամբ գրում է, որ, իբր, այդ արշավանքը դեպի Դիյար Բաքր Սալար Խորասանը կատարեց սուլթան Տուղրիլ բեգի հրամանով, մինչդեռ սուլթանն այդ ժամանակ մահացել էր (1063 թ.). Նրան փոխարինել էր Ալփ-Արսլանը (1063—1073)։

Իբն ալ-Ազրակը գրում է, որ Հիջրի 458 թ. ռաբի ալ-ավալ ամսին (1066 թ. փետրվարին) հինգ հազարանոց զորքի գլուխն անցած Սալար Խորասանը մտավ Դիյար Բաքր և պաշարեց Մայյաֆարիկինը։ Մարվանյան վեզիր Աբուլ-Ֆադլ Իբրահիմ իբն ալ-Անբարին բանակցություններ վարեց Սալարի հետ և խոստացավ վճարել 300 հազար դինար։ Մինչ անհրաժեշտ գումարի հանձնումը, Մարվանյան վեզիրը դավադրաբար, որպես պատանդ, Սալարի մոտ ուղարկեց Նեզամ ադ-Դինին թշնաբար տրամադրված նրա երեք եղբայրներին՝ Հասանին, Ֆադլունին և Մամեկին։ Ապա, խաբելով Սալարին, մի քանի զորականների հետ նրան հրավիրեց պալատ և իսկույն ձերբակալեց բոլորին։ Դրանից հետո Մարվանյան զորքը հարձակվեց Մայյաֆարիկինը պաշարած սելջուկների վրա։ Այդ ընթացքում սելջուկներն սպանեցին Նիզամ ադ-Դինի երկու եղբայրներին, մեկին էլ տանջամահ արեցին։ Երկու կողմերի միջև տեղի ունեցած ճակատամարտում սելջուկները պարտություն կրեցին՝ տալով շատ գերիներ։ Մի քանի օր անց Նիզամ ադ-

Դինը գլխատեց Սալար Խորասանին և պալատում ձերբակալված սելջուկ մյուս զորավարներին[32]։

1070/71 թ. սուլթան Ալփ-Արսլանը Դիյար Բաքրի վրայով արշավանք ձեռնարկեց դեպի Հալեպ։ Իմանալով այդ մասին, ինչպես գրում են արաբալեզու մի քանի հեղինակներ, Մարվանյան ամիրան գնաց և դիմավորեց նրան։ Իր հնազանդությունը հայտնելով սուլթանին՝ Նիզամ ադ-Դինը նրան տվեց նաև հարյուր հազար դինար։ Ալփ-Արսլանը մտավ Ամիդ և հիանալով հիասքանչ գավառով, մեկնեց Ուռհա։ Չկարողանալով նվաճել քաղաքը՝ նա թողեց այն և իր ճանապարհը շարունակեց դեպի Հալեպ[33]։

Այսպիսով, Մարվանյան իշխան Նիզամ ադ-Դինը ես ճանաչեց սելջուկ Ալփ-Արսլանի գերիշխանությունը։ Մեզ այլ մանրամասներ հայտնի չեն երկու կողմերի բանակցությունների և հանդիպման ընթացքի մասին։ Եղած կցկտուր տվյալներից կարելի է ենթադրել, որ Նիզամ ադ-Դինը խոստացավ ռազմական օժանդակություն ցույց տալ սելջուկներին։

Նույն ժամանակաշրջանում սելջուկները ռազմական ակտիվ գործողություններ ծավալեցին կայսրության հարավարևելյան սահմաններում։ 1070 թ. Ալփ-Արսլանը գրեթե առանց դժվարության գրավեց Մանազկերտը։ Նա դաժան հաշվեհարդար տեսավ բնակչության հետ, որը պարտության էր մատնել նրա հորեղբորը՝ Տուղրիլ բեգին։ Վերջինս, ըստ Մ. Ուռհայեցու, մեռնելուց առաջ իբր կտակել էր նրան՝ վրեժխնդիր լինել[34]։

Կայսրությունը կանգնած էր սարսափելի վտանգի առջև։ Իհարկե, դժվար է ասել՝ այդ ժամանակ սուլթանը մտադիր էր հարձակում գործելու Բյուզանդիայի վրա, թե չէ, բայց կարելի է ենթադրել, որ նա դեռևս հաշվի էր նստում կայսրության հզորության հետ։ Մինչև Եգիպտոսի վրա հարձակում գործելն Ալփ-Արսլանի խնդրի մեջ մտնում էր սուլթանության հյուսիսարևմտյան սահմանների ամրապնդումը։ Այդ ընթացքում հակառակ վճիռ կայացրեց կայսր Ռոմանոսը. նա գտավ, որ կարելի է ռազմական գործողություններ սկսել սելջուկների դեմ։ Նրա շրջապատի շատ մարդիկ կարծում էին, որ մեկ հարվածով հնարավոր է վերջ տալ թյուրքական վտանգին և կայսրին խորհուրդ տվեցին շսպասել, այլ անցնել հարձակման[35]։

Ըստ արաբալեզու հեղինակների, 1071 թ. բյուզանդական կայսր Ռոմանոս Դիոգենեսը տարբեր ազգերից կազմած 200 հազարանոց զորքով հասավ Մանազկերտ։ Այդ լուրը լսեց Ալփ-Արսլանը, որը Հալեպից վերադարձել էր Ատրպատական և գտնվում էր Խոյ քաղաքում։ Նա շտապեց դեպի Մանազկերտ և Խլաթի մոտ մարտնչեց հոռոմների դեմ։ Սուլթանը շուտով Ռոմանոսին առաջարկեց հաշտություն կնքել, որը մերժվեց, և 1071 թ. օգոստոսի 19-ին սելջուկներն անցան հարձակման։ Դավաճանության հետևանքով բյուզանդական բանակը խայտառակ պարտություն կրեց, ինքը՝ կայսրը գերի ընկավ[86]։ Սելջուկները կողոպտեցին այդ շրջանները, և ավերածություններ կատարելով բազմաթիվ մարդկանց սպանեցին։ Սուլթանը վերադարձավ Ատրպատական և կառավարիչ նշանակեց Խլաթում ու Մանազկերտում, որով, ինչպես գրում է Իբն ալ-Ազրակը, այդ երկու շրջանները խլվեցին Մարվանյաններից[87]։ Դա Ալփ-Արսլանի կողմից տվյալ տարածքում Մարվանյան իշխանների գերիշխանությունը սահմանափակելու ուղղությամբ առաջին լուրջ միջոցառումն էր։ Սակայն, հավանաբար հաշվի առնելով Մարվանյանների հավատարմությունը սելջուկյան դիվանին, Ալփ-Արսլանը, որպես փոխհատուցում, նրանց վերադարձրեց Խլաթը[88]։

Սելջուկ-բյուզանդական վերը նշված հակամարտությունների վերաբերյալ Իբն ալ-Ազրակը հաղորդում է ընդարձակ մեկ այլ տարբերակ։ Նրա կարծիքով, Ալփ-Արսլանը ոչ թե Ատրպատականից, այլ Իրաքից մեկնեց Դիյար Բաքր՝ հոռոմներին ճակատամարտ տալու համար։ Սուլթանի հետ էր Մարվանյան Նիզամ ադ-Դինի եղբայրը՝ Ամիդի տեր Սայիդը։ Վերջինս Հիջրի 460 թ. (1067/68 թթ.) եղբոր հետ ունեցած հերթական վեճի պատճառով կրկին բողոքել էր սուլթանին և գտնվում էր նրա պալատում։ Իբն ալ-Ազրակի շարադրանքից երևում է, որ Նիզամ ադ-Դինը, խուսափելով սելջուկներից սպառնացող վտանգից, մեծ քանակությամբ դրամ և թանկարժեք իրեր նվիրեց Մայյաֆարիկին ժամանած սելջուկյան հայտնի վեզիր Խավաջա Նիզամ ալ-Մուլքին։

Ըստ Իբն ալ-Ազրակի, Մայյաֆարիկինում Մարվանյան գերդաստանն իր կանանցով սելջուկյան վեզիրին խնդրեցին՝ միջնորդելու սուլթանի մոտ՝ Նիզամ ադ-Դինին չվնասելու համար։ Ընդառաջելով նրանց խնդրանքին՝ վեզիրը քուրդ իշխանին տարավ

Ալփ-Արսլանի ճամբարը, որը գտնվում էր Տիգրիսի ափին։ Նիզամ ալ-Մուլքի միջնորդությամբ սուլթանն ընդունեց Նիզամ-ադ-Դինին և նրան հանձնեց եղբորը՝ Սաիդին, որով փաստորեն նա փոխեց իր որոշումը՝ հարձակվելու Մայյաֆարիկինի վրա[39]։ Սույն փաստերը, որոնք թեև չեն արձանագրվել այլ սկզբնաղբյուրներում, վկայում են, որ սելջուկների յուրաքանչյուր քայլ լարված իրադրություն էր ստեղծում Դիյար Բաքրում, ամեն անգամ հարկադրելով Մարվանյաններին՝ ինչ-որ ձևով միջոցներ ձեռնարկել։

Այսպիսով, 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, գնալով նկատելի դարձավ սելջուկյան սուլթանության առավելությունը Բյուզանդիայի նկատմամբ։ Չնայած սկզբնաղբյուրները տարբեր տվյալներ են հաղորդում ճակատամարտի և նրա հետ կապված իրադարձությունների մասին, բայց, ի վերջո, ցույց են տալիս, որ Բյուզանդական կայսրությունը կամա թե ակամա ստիպված եղավ հաշվի նստել նոր և զորեղ հակառակորդի ռազմական ներուժի ու կարողությունների հետ[40]։

Մանազկերտի ճակատամարտից հետո Մարվանյանները մի քանի տարի կարողացան պահպանել իրենց գոյությունը։ Սակայն սուլթան Մելիքշահի օրոք (1072—92) սելջուկները որոշեցին վերջ տալ Մարվանյաններին ևս[41]։ Սկզբնաղբյուրներում եղած նյութերը ցույց են տալիս, որ այդ գործում չափազանց մեծ դեր խաղաց Մարվանյան դինաստիայի նախկին վեզիր, արաբազգի Ֆախր ադ-Դաուլա իբն Ջահիրը։ Դա տեղի ունեցավ Նիզամ ադ-Դինի որդու՝ Նասիր ադ-Դաուլա Մանսուրի (1080—1085 թթ.) տիրապետության ժամանակաշրջանում։ Վերջինս հոր և հորեղբոր՝ Սաիդի մեռնելուց հետո միացրել էր դինաստիան, որին ենթարկվում էին գլխավոր քաղաքները՝ Ամիդն ու Մայյաֆարիկինը։

Նասիր ադ-Դաուլա Մանսուրից բավական դժգոհ էր սուլթան Մելիքշահի դիվանը։ Քուրդ իշխանն իր նախնիների պես թեև շարունակեց ճանաչել սելջուկների գերիշխանությունը, սակայն իր դիրքերն ամրապնդելու նպատակով բարեկամական կապեր հաստատեց Մոսուլի հարևան ուկայլիների ամիրա Շարաֆ ադ-Դաուլայի հետ։ Վերջինս, 1082—1083 թթ. նվաճելով Միջագետքի և Ջազիրայի որոշ վայրեր, հասել էր Հալեպ և դրանք միացրել իր տիրույթներին։ Այդ հողի վրա Շարաֆ ադ-Դաուլան ընդհարվեց Դամասկոսի տեր, սուլթան Մելիքշահի եղբոր՝ Թութուշի հետ։ Բա-

ցի այդ, նա կապ էր հաստատել սելջուկյան սուլթանության կրոնական և քաղաքական գլխավոր հակառակորդներից մեկի՝ Ֆաթիմյան Եգիպտոսի խալիֆայի հետ[42]։ Սուլթանի դիվանը դժգոհ էր նաև Նասիր ադ-Դաուլայից նրա համար, որ նա իշխանության վեզիր էր նշանակել ոմն քրիստոնյա բժիշկ Աբու Սալիմին, որն իր կնոջ հետ վարում էր իշխանությունների ողջ գործերը[43]։ Նոր վեզիրը պաշտպանում էր քրիստոնյա, հիմնականում հայ, ազգաբնակչության իրավունքները, որն էլ առաջացրել էր մահմեդական բնակչության դժգոհությունը։ Ահա, թե ինչու Իբն Ջահիրը դրդեց Մելիքշահին՝ վերջնականապես նվաճել Դիյար Բաքրը և այն միացնել իր սուլթանությանը։

Մեր ձեռքի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ 1083/84 թ. Աբբասյան ալ-Կայիմ խալիֆայի վեզիրի պաշտոնից ազատվեց Իբն Ջահիրը, որին փոխարինեց որդին՝ Ամիդ ադ-Դաուլան։ Այս առթիվ տարբեր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան աղբյուրները։ Առանձին հեղինակներ գրում են, որ այդ թվականին (Հիջ. 476 թ.) Մելիքշահի և սուլթանության վեզիր Նիզամ ալ-Մուլքի խնդրանքով Բաղդադից Իսֆահան մեկնեց Իբն Ջահիրն իր գերդաստանով։ Սուլթանը նրան տվեց Դիյար Բաքրը, հրամայեց շարժվել այնտեղ և այն խլել Մարվանյաններից, խութբա տալ իր (Մելիքշահի—Ա. Փ.) պատվին և անունը դրոշմել դրամի վրա[44]։ Ապա (1084/477 թ.), սուլթանը թյուրքմենական զորք ուղարկեց Իբն Ջահիրի ուժերը համալրելու համար, որովհետև Նասիր ադ-Դաուլան դիմել էր Շարաֆ ադ-Դաուլային՝ միացյալ ուժերով հանդես գալու ընդդեմ սելջուկների՝ նրան Ամիդը տալու պայմանով[45]։ Մարվանյանների դեմ ձեռնարկվող արշավանքին սուլթանի հրամանով մասնակցեցին Խարբերդի Ջուբուք ամիրայի զորքերը, Մանազկերտի և Մուշի ամիրա Սանդուկը, Իրաքում նվաճումներ կատարող Արթուկ բեգի և սելջուկների, Միջագետքի վասալ մի քանի արաբ ամիրաների բանակները[46]։ Երկու կողմերը՝ Մարվանյան և արաբ ուկայլինների միացյալ ուժերն ու սելջուկյան զորքերը, գոտեմարտի բռնվեցին Ամիդի մոտ։ Նկատելով ուժերի անհավասարակշռությունը և չցանկանալով վնաս պատճառել արաբներին՝ Իբն Ջահիրը դիմեց խորամանկ քայլի, առաջարկելով հաշտության պայմանագիր կնքել։ Թյուրքմենական զորավարները կռահեցին Իբն Ջահիրի մտադրությունը և գիշերով հարձակման ան-

ցան ու ջախջախեցին հակառակորդին։ Շարաֆ ադ-Դաուլան պաշարման մեջ ընկավ և, հազիվ ազատվելով, փախավ Ռակկա։ Սուլթանի զորքը հաշվեհարդար տեսավ արաբների հետ և տիրեց Մոսուլի մարզին[47]։ 1085 թ. ապրիլ ամսին Իբն Ջահիրը գրավեց Ամիդը, իսկ նույն թվականի սեպտեմբերին ներխուժեց մարվանյան մայրաքաղաք՝ Մայյաֆարիկին։ Թե՛ Ամիդը և թե՛ Մայյաֆարիկինը հանձնվեցին երկար պաշարումից հետո։ Իբն Ջահիրը բռնագրավեց Մարվանյանների մեծաքանակ հարստությունը և այն ուղարկեց սուլթանին[48]։ Նույն թվականին խիստ դիմադրությունից հետո Իբն Ջահիրին ենթարկվեց Ջազիրա իբն Օմարը, որով, ինչպես գրում են արաբալեզու հեղինակները, անկում ապրեց Մարվանյան իշխանությունը[49]։

Վերոհիշյալ դեպքերի ավելի մանրամասն նկարագրությունը տալիս է Իբն ալ-Ազրակը։ Նրա հաղորդած տվյալները, մեր կարծիքով, ավելի հավաստի են, դրանք պարզորոշ ցույց են տալիս իրադարձությունների ողջ ընթացքն ու ավարտը։

Իբն ալ-Ազրակը ամբողջ մեղքը բարդում է Իբն Ջահիրի վրա և գտնում, որ իշխանության կործանման հիմնական պատճառը նրա ագահությունն էր։ Հանգամանորեն անդրադառնալով Իբն Ջահիրի գործողություններին՝ Իբն ալ-Ազրակն ավելացնում է, որ, իմանալով Մարվանյանների իշխանության քայքայման, ներքին երկպառակությունների մասին, նա համոզեց սելջուկյան վեզիր Նիզամ ալ-Մուլքին, խոստանալով նվաճել այդ տիրույթը և տիրել Մարվանյանների հարստություններին։ Ըստ Իբն ալ-Ազրակի, սելջուկյան վեզիրն իր հերթին այդ ամենի մասին հայտնեց սուլթանին, որը հավանություն տվեց նրա ծրագրերին և Իբն Ջահիրի գլխավորությամբ զորք ուղարկեց Դիյար Բաքր։ Այդ ընթացքում Մարվանյան ամիրան՝ Նասիր ադ-Դաուլան, Մայյաֆարիկինի մեծամեծներից կազմած մի պատվիրակությամբ մեկնեց Ջազիրա, այնտեղից էլ Իսֆահան՝ սուլթանի մոտ։ Մելիքշահը Նասիր ադ-Դաուլային առաջարկեց հանձնել Դիյար Բաքրը, նրան թողնելով միայն Ամիդն ու Մայյաֆարիկինը։ Նասիր ադ-Դաուլան կտրականապես հրաժարվեց և վերադարձավ Մայյաֆարիկին։

1085 թ. Իբն Ջահիրը մտավ Դիյար Բաքր, միաժամանակ պաշարելով Ամիդն ու Մայյաֆարիկինը։ Նրա զորքերը համալրելու համար սուլթանը նոր ուժեր ուղարկեց, որով հնարավոր դար-

ձավ իրականացնել իշխանության բոլոր գավառների պաշարումը։ Երկար դիմադրությունից հետո, Իբն ալ-Ազրակի խոսքերով, 1085 թ. մայիսին հանձնվեց Ամիդը։ Նույն թվականի օգոստոսին (կամ սեպտեմբերին) սելջուկների ուժեղ հարձակումից և քաղաքի պարիսպը քանդելուց հետո ընկավ նաև Մայյաֆարիկինը։ Ապա հետզհետե Իբն Ջահիրի գլխավորած սելջուկյան զորքերը նվաճեցին ողջ Դիյար Բաքրը։ Մարվանյան ամիրային սուլթանն աքսորեց Իրաք և որպես կալվածք նրան տվեց Բաղդադի վերևում գտնվող Հարբա գյուղը[50]։

Մայյաֆարիկինը նվաճելուց հետո Իբն Ջահիրը, ինչպես վկայում են եղած նյութերը, լավ վերաբերվեց բնակչության հետ, վերանորոգեց քաղաքի պարիսպը, ողջ Դիյար Բաքրում պաշտոնյաներ և հարկահաններ նշանակեց։

Այսպիսով, 1085 թ. Մելիքշահի հրամանով դեպի Դիյար Բաքր ձեռնարկված արշավանքով սելջուկները վերջ տվեցին Մարվանյան իշխանությանը։ Այդ շրջանը միացվեց սելջուկյան սուլթանությանը և, իբրև տիրույթ, հետագա տարիներին անցավ տարբեր մարդկանց[51]։ Ինչո՞վ բացատրել սելջուկների այդ քայլը, մանավանդ որ Մարվանյան վերջին ամիրան էլ, ինչպես նշվեց, շարունակեց ճանաչել սուլթանի դիվանի գերիշխանությունը։ Այդ առթիվ պետք է նշել, որ Մարվանյան իշխանությունը բաղկացած էր հիմնականում Մայյաֆարիկինի (Նփրկերտի), Ամիդի, Խլաթի և այլ շրջաններից։ Միայն Մայյաֆարիկինի շրջանում կային շուրջ երեսուն քաղաք և այդքան էլ բերդեր։ Բացի մահմեդականներից՝ քրդերից, արաբներից, Դիյար Բաքրի հիմնական ազգաբնակչությունը, բնականաբար, հայությունն էր, Տարածքը ուներ ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն և այնտեղ Մարվանյանների առկայությունը տվյալ ժամանակաշրջանում արդեն լրջորեն խանգարում էր սելջուկներին՝ իրենց ռազմական ծրագրերն իրագործելու համար։ Բացի այդ, Դիյար Բաքրը և նրա գլխավոր քաղաքները՝ Մայյաֆարիկինը, Ամիդը, Խլաթն ու Բաղեշը գտնվում էին հիմնականում երկու մայրուղիների հանգուցակետերում, որոնք կապում էին մի կողմից՝ Իրանը Տրապիզոնի և Սիրիայի վաճառական նավահանգիստների և մյուս կողմից՝ Բյուզանդիայի կենտրոնական և արևմտյան նահանգների, այդ թվում՝ Կ. Պոլսի հետ[52]։ Դրա հետ միասին տարածքի ռազմաստրատեգիական նշանակու-

թյունը գնալով մեծանում էր՝ Մելիքշահի հակառակորդ Անատոլիայի Սուլեյմանի հիմնած սուլթանությանը վերջ տալու համար։ Ուստի, Մելիքշահի առջև խնդիր էր դրված իր աշխարհակալության ծավալապաշտական ծրագրերն իրագործելու համար վերացնել Մոսուլի, Ջազիրայի և Հալեպի տիրակալ ուկայլի Շարաֆ ադ-Դաուլային և Դիյար Բաքրի Մարվանյաններին[53]։ Պատահական չէ, որ սուլթանի դիվանը և վեզիր Նիզամ ալ-Մուլքն իսկույն հավանություն տվեցին Ֆախր ադ-Դաուլա Իբն Ջահիրի առաջարկին և դիմեցին գործնական քայլերի։

1092 թ. Մելիքշահի սպանությամբ սուլթանությունում ստեղծվեց խառնաշփոթ իրավիճակ։ Դրանից փորձեց օգտվել Մարվանյան Նասիր ադ-Դաուլա Մանսուրը։ Նա Իրաքից բարձրացավ Ջազիրա իբն Օմար, որի կողմն էր հակված Մայյաֆարիկինի բնակչության մի մասը։ Միևնույն ժամանակ Սիրիայից դեպի Դիյար Բաքր շտապեց Մելիքշահի եղբայրը՝ Թութուշ Թաջ ադ-Դաուլան։ Նա մտավ Նիսիբին (Մծբին) և դաժան հաշվեհարդար տեսավ բնակչության հետ։ Նրա հրամանով ավերվեց քաղաքի պարիսպը, սպանվեց շուրջ երկու հազար մարդ, բռնաբարվեցին կանայք[54]։ Մայյաֆարիկինի բնակչության մի մասը դիմեց Թութուշին՝ քաղաքը նրան հանձնելու խնդրանքով։ Այնուամենայնիվ, Մարվանյան Նասիր ադ-Դաուլային հաջողվեց 1093 թ. սկզբին մտնել Մայյաֆարիկին։ Նույն թվականին Թութուշը գրավեց Ամիդը և արշավեց դեպի Մայյաֆարիկին։ Նիսիբինի լուրերից սարսափահար մայյաֆարիկինցիները 1093 թ. ապրիլին առանց դիմադրության նրան հանձնեցին քաղաքի բանալիները։ Հետզհետե Թութուշին ենթարկվեց ողջ Դիյար Բաքրը։ Նրա վալիները մեկնեցին Մոսուլ, Սինջար և այլուր, որտեղից փախուստի դիմեցին արաբ ուկայլիները[55]։ Մարվանյան ամիրան՝ Նասիր ադ-Դաուլան, նույնպես հեռացավ Մայյաֆարիկինից, որի երկրորդ իշխանությունը, ըստ Իբն ալ-Ազրակի, տևեց ընդամենը հինգ ամիս[56]։ Նա ապրեց Ջազիր իբն Օմարում, ուր և մահացավ 1096 թ.։ Դրանով Դիյար Բաքրն առհավետ խլվեց Մարվանյաններից և շուրջ մեկ դար գտնվեց թյուրքմենական դինաստիաների (Սոքման Շահարմենների 1100—1207 թթ., Արտուխյանների 1101—1231 թթ.) հսկողության տակ[57]։ Մարվանյան գերդաստանի շառավիղները որոշ ժամանակ պահպանեցին իրենց գոյությունը Դիյար Բաքրի առանձին վայրերում։

1136 թ. Արտուխյան Հուսամ ադ-Դինը նրանցից խլեց վերջին ամրոցը՝ Հեթախը[58]։

Ամփոփելով՝ ասենք, որ XI դ. 40—50-ական թթ. Մերձավոր և Միջին արևելքում սելջուկ-թյուրքերի ի հայտ գալով տեղի ունեցան պատմական խոշոր փոփոխություններ, վերափոխվեց տարածաշրջանի քաղաքական քարտեզը։ Արևելքի երբեմնի ամենահզոր պետությունը՝ Աբբասյան խալիֆայությունը դեռևս X դ. 40-ական թթ. սկսել էր քայքայվել և սելջուկների ժամանակ ևս շարունակում էր ձևականորեն գոյություն ունենալ։ Իսկ Բյուզանդական կայսրությունը ներքին խմորումների և տարբեր ճակատներում մղած պատերազմների հետևանքով խիստ թուլացել էր և դնում էր դեպի մայրամուտ։ Տեղական իշխանությունների մի մասը վերացել էր պատմության ասպարեզից, առաջացել էին նոր իշխանություններ։ Ողջ տարածքում մասնատվածության քաոսը ուղեկցվում էր մշտական հակամարտություններով և ռազմական ընդհարումներով[59]։ Բնականաբար նման պայմաններում Մարվանյան, այդ թվում՝ քրդական մյուս իշխանությունները, ի վիճակի չեղան երկար գիմագրել և մեկը մյուսի հետևից անկում ապրեցին։ Չնայած Մարվանյանները, ինչպես նկատվեց, զգալի ջանքեր գործադրեցին պահպանելու իրենց իշխանությունը, սակայն ներքին երկպառակությունների և հատկապես արտաքին՝ սելջուկյան հուժկու հարվածների տակ վերացան պատմության թատերաբեմից։

ARSHAK POLADIAN

THE MARWANID DYNASTY AND THE GREAT SELDJUKS

Among the Ḱurdish emitrates of X—XI A. D. the most remarkable was the Marwanid dynasty of Diyarbakr (?—1096) with the capital in Mayafarikin. The thorough study of the medieval Arabic, as well as Armenian and some other sources reveals that the relations between Marwanid Kurds and Turkic nomad tribes had begun in the forties of XI century.

Thus, before the conquer of Great Seldjuks, Turkic-speaking tribes penetrated the Marwanid territory and the neigh-

bouring areas through Atrpatakan region, where they had established themselves since the beginning of XI century. According to the sources, the migration of these barbaric tribes in Diyarbakr, as well as orher regions of the Abbasid Caliphate, to some extent contradited to the interests of Seldjuk rulers. Having their military and political interests, the Seldjuk court did not undertake serious steps against Marwanid Kurds. Nevertheless, beginning from forties as a result of active military actions against Byzantine Empire and Armenia, the Seldjuks had caused serious disturbances to Marwanids, too. Although they continued their existence for a long time, they accepted the supremacy of the Seldjuk rulers and issued 'khutba' in the honour of Sultans. Through these and other measures Marwanid emirs had tried to prevent the Seldjuk threat. Emir Nasr ad-Dawla was the one who had exerted a lot of efforts in that direction. With his mediation the Byzantine Emperor Constantine X had managed to convict Tugryl to release the captured Georgian prince Liparit.

After the death of Nasr ad-Dawla his domain was divided between his sons-Nizam ad-Din and Said. Although the Marwanid might had already passed its upper point, they continued diplomatic maneuvers with the Seldjuks even after the Byzantine defeat at Manazkert in 1071. During numerous military campaigns againts Byzantine Empire and Armenia the Seldjuk army continually attacked the Marwaind capital, Mayafarikin. And every time the Marwanids had to pay off with a lot of money and valnable presents. Devertheless, Sultan Malik-shah considered it necessary to expel the Marwanids from Diyarbakr. The Abbasid vezir Fahr ad-Dawla Ibn Djahir, who before that had served the Marwanids, played the decisive role. Ibn Djahir had the permission of Malik-shah to invade the Marvanid territory. In 1085, after furious battles the Marwanid domain was captured and incorporated into the Seldjuk Empire. The last Marwanid, Mansur, lived in Jazira till 1096. During next centuries Diyarbakr was controlled by Turkmen dynasties.

1 تاريخ ابن الازرق الفارقى، حققه وقدم له بدوى عبد اللطيف عوض، راجعه محمد شفيق غربال، القاهرة، ١٩٥٩

2 ابن الاثير، الكامل فى التاريخ، ج ٧-٨، القاهرة-

3 ابن الجوزي، المنتظم فى تاريخ الامم والملوك، ج ٨، حيدرآباد، ١٣٥٩

4 ابن خلدون، كتاب العبر وديوان المبتدأ والخبر، ج٣-٤ مصر، ١٢٨٤

5 ابن كثير، البداية والنهاية فى التاريخ، ج ١٢،

6 ابو الفداء، المختصر فى اخبار البشر، ج ٢، بيروت-

7 تاريخ ابن الوردى، ج ١، القاهرة، ١٢٨٥

8 Արիստակես Լաստիվերցի. *Պատմություն, թարգմ. Վ. Ա. Արզարյանի, Երևան, 1971 թ.*, Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն, թարգմ., Ներած. և Ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973։*

9 ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٢٤-٢٥

10 ابن الاثير، الكامل، ج ٧، ص ٣٣٨-٣٤١، ابن خلدون، ج ٣، ص ٤٥١-٤٥٢، ج ٤، ص ٢٦١، ٢٥٩

11 *Նույն տեղում։*

12 ابن الاثير، الكامل، ج ٧، ص ٣٤٢-٣٤٣

13 *Նույն տեղում։ Տե՛ս* ابن خلدون، كتاب، ج ٤، ص ٢٦١

14 تاريخ ابن الازرق، ص ١٦٠-١٦١

15 *Ավելի մանրամասն տե՛ս* Ս. Բոռնազյան, *Հայաստանը և սելջուկները XI—XII դդ., Երևան, 1980 թ., էջ 46—56։*

16 *Իբն ալ-Ասիրի երկում Լիպարիտը սխալմամբ ներկայացված է որպես Կարիա՝ աբխազների իշխան։* ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٤٨

17 *Վրացի իշխան Լիպարիտի գերության մասին տե՛ս* Ա. Լաստիվերցի, *էջ 80—81։* Մ. Ուռհայեցի, *էջ 107,* ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٤٨

18 Ս. Բոռնազյան, *նշված աշխատություն, էջ 57։*

19 ابن كثير، البداية والنهاية، ج ١٢، ص ٥٩؛ ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٥٢، ٩٥

20 Նույն տեղում։ Այս մասին առհասարակ լռում են հայկական և բյուզանդական աղբյուրները։

21 تاريخ ابن الوردى، ج ١، ص ٣٥٤؛ ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٦٧

22 Ս. Բոռնազյան, *նշված աշխատություն, էջ 71։*

23 ابو الفدا، المختصر، ج ٢، ص ١٧٥، ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٧٨

24 ابن الاثير، الكامل، ج ٨ ص ٩٢

25 *К. Босворт*, Мусульманские династии, М., 1977, с. 88.

26 تاريخ ابن الوردى، ج ١، ص ٣٦٧؛ ابو الفدا، المختصر، ج ٢، ص ١٨١، ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٩٢

27 تاريخ ابن الازرق، ص ١٨١

28 Մ. Ուռհայեցի, *էջ 92։*

29 *Նույն տեղում, էջ 93։*

30 *Նույն տեղում, էջ 93—94։*

31 *Նույն տեղում, էջ 104։*

32 تاريخ ابن الازرق، ص ١٨٢-١٨٤

33 *Imad ad-Din al-Katib al-Isfahani.* Histoire des Seldjoucides de l'Iraq (text arab); par. M. Houtsma, II. Belden, 1889, p. 37.

تاريخ ابن الوردى، ج ١، ص ٣٧٣؛ ابو الفدا، المختصر، ج ٢، ١٨٦-١٨٧، ابن الاثير، الكامل، ج ٨، ص ١٠٩

34 Մ. Ուռհայեցի, *էջ 128։*

35 История Византии, т. II, М., 1967, с. 285—286.

36 ابن الاثير، الكامل، ج ٨، ص ١٠٩-١١٠

37 تاريخ ابن الازرق، ص ١٩٠

38 Ս. Բոռնազյան, *նշված աշխատություն, էջ 209։*

39 تاريخ ابن الازرق، ص ١٨٦-١٨٨

40 *Imad ad-Din al-Isfahani.* Iraq ve Horasan Selçuklari tarihi, 1943, p. 37; Մ. Ուռհայեցի, *էջ 133*; Ա. Լաստիվերցի, *էջ 101—105*; Հովհաննես Սկիլիցես, *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, X, Բյուզանդական աղբյուրներ, Գ, Թարգմանություն բնագրից, Առաջաբան և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 241—242։*

41 تاريخ ابن الازرق، ص ١٩٣، ٢٠٠

42 Ս. Բոռնազյան. *Նշված աշխատություն, էջ 209։*

43 تاريخ ابن الازرق، ص ٢٠٦

44 ابن الاثير، الكامل، ج ٨، ص ١٣٣

45 Ս. Բոռնազյան, *Նշված աշխատություն, էջ 211։*

46 *al-Isfahani. Նշված աշխատություն, էջ 75,* ابن الاثير، الكامل، ٨، ج ص ١٣٣، ابن خلدون، كتاب العبر، ج ٣، ص ٣٧٤

47 ابن الاثير، الكامل، ج ٨، ص ١٣٤-١٣٥

48 *Նույն տեղում, էջ 138։*

49 *Նույն տեղում, էջ 139։ Ավելի մանրամասն տե՛ս նաև՝*

تاريخ ابن الوردي، ج ٢، مصر، ١٢٨٥، ص ٣٨٣، ابن كثير، البداية والنهاية، ج ١٢، ص ١٢٦-١٢٧، ابن خلدون، كتاب العبر، ج ٣، ص ٤٧٥، ابو الفدا، المختصر، ج ٢، ص ١٩٦، ٢٠٠، ابن خلدون، وفيات الاعيان، ج ٢، القاهرة، ١٨٨٧، ص ٨٧

50 تاريخ ابن الازرق، ص ٢٠٦-٢١٤

51 *Նույն տեղում, էջ 220—224։*

52 Ս. Բոռնազյան, *Նշված աշխատություն, էջ 210։*

53 *Նույն տեղում։*

54 القلانسي، ذيل تاريخ دمشق، بيروت-ليدن، ١٩٠٨، ص ١٢٢

55 *Նույն տեղում, էջ 123, 129։*

56 تاريخ ابن الازرق، ص ٢٢٩-٢٣٠

57 *К. Босворт,* Мусульманские династии, с. 88.

58 القلانسي، ذيل، ص ٢٦٢

59 *Հայ ժողովրդի պատմություն, Հ. III, Երևան, 1976, էջ 466։*

ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳՈՐԱՆ ՑԵՂԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Գորան կամ գուրան անվանումը լայն իմաստով գիտական գրականության մեջ կիրառվում է գորանի լեզվով (ավելի ճիշտ գորանիի բարբառներով) խոսող գորանիախոս էթնիկ խմբերին բնորոշելու համար (գորան եզրի մասին մանրամասն՝ Ասատրյան): Սակայն պետք է ճշտել, որ այս անվանումը պատկանում է, նախ և առաջ, գորան ցեղամիավորմանը և միայն հարմարության համար կիրառվում գորանիախոս մյուս զանգվածների համար (Minorsky, p. 77)։ Այսպիսով, պետք է տարբերակել գորան ժողովուրդը (գորանիախոս էթնիկ տարրը) և գորան ցեղամիավորումը[1], որին էլ մանրամասն կանդրադառնանք այս ակնարկում։

Տեղաբաշխումը. Գորան ցեղամիավորումը զբաղեցնում է Իրանի Քերմանշահան նահանգի արևմտյան և կենտրոնական շրջանները։ Հարավում այդ տարածքը սահմանափակվում է Էսլամաբադ- Հոումե- Շոմալի- Հասանաբադ, իսկ հյուսիսում՝ Ղասր- և Շիրին-Ջոհար-Հոլուլի-Ջամքան գծով, Արևելքում այս տարածքի սահմանները հասնում են գրեթե մինչև Քերմանշահ, իսկ արևմուտքում՝ իրանա-իրաքյան սահման։ Ցեղամիավորումը կենտրոնացած է Գորան, Բանզարդե, Ղալխանի, Ջոհաբ, Փոշթ-Թանգ, Գահվարե, Ղալ՛է-Ջանջիր, Մալլե-Քաբուդ և Քարանդ, Բիվենիջ, Ջեգարլու, Նասրաբադ, Փաթաղ բնակավայրերում։ Այստեղ գորան ցեղամիավորման թիվը, 1976 թ. տվյալներով, հասնում էր 70 հազարի (Soltani, pp. 321—322)[2]։

Ցեղերը և կլանները, սոցիալական կառույցի առանձին ուրվագծեր. Ինչպես իրանական և ոչ իրանական շատ ցեղեր, գորան ցեղամիավորումը ևս, ավելի շուտ տարածքային-տնտեսական, իսկ ոչ վաղ անցյալում՝ նաև ռազմական միավոր էր, քան արյունակ-

ցական կամ ծագումնաբանական միատարր հանրություն։ Այն բաժանվում է երկու մեծ ճյուղի կամ ցեղի (պրսկ.՝ թայեֆե)՝ գորան-ն դալ՛է-զանջիրի (այսուհետև՝ զանջիրի) և գորան-ե fարանդի (այսուհետև՝ fարանդի), որոնք էլ իրենց հերթին տրոհվում են բազմաթիվ կլանների՝ տոհմերի (պրսկ.՝ թիրե), գերդաստանների (պրսկ.՝ դուդման) և ծխերի (պրսկ.՝ խանվար)։ Գորանական այս երկու ցեղերի անվանումներում էլ տեղ են գտել նրանց կենտրոնական բնակավայրերի՝ Դալ՛է-Զանջիրի և Քարանդի անունները։

Նախկինում զանջիրի ցեղը բաղկացած էր իշխանական գերդաստանից (պրսկ. դուդման-ե դալեք), որը հայտնի էր Միր-Խոսրովի, հետագայում՝ Յասեմի անունով, և յոթ կլաններից, որոնք կրում էին ընդհանրական՝ գորանի յոթ սուլթանական (պրսկ. հաֆթ սոլթանե-յե գորան) անունը։ Փաստորեն, զանջիրին իր բնույթով ռազմական-ցեղային համակարգ էր, որն էլ կանխորոշում էր սոցիալական կառույցի ենթարկումը առաջինի պահանջներին։ Իշխանական ընտանիքը ղեկավարում էր գորանական աշխարհազորը (պրսկ.՝ ֆոուջ), իսկ մյուս կլանների գլխավորները (պրսկ.՝ սոլթան)՝ աշխարհազորի յոթ ջոկատները։

Ներկայումս զանջիրի ճյուղի կորիզն են հանդիսանում դալխանի (ասփարի և բահրամի խմբերով), թոֆանգչի (երկու ճյուղով) և գահվարե ցեղերը, ընդ որում, վերջինս առաջին աշխարհամարտից հետո է առանձնացել դալխանիից։

Քարանդի ճյուղը բաղկացած է տասնչորս փոքր ցեղերից, որոնք կրում են իրենց բնակավայրերի անունները (Soltani, pp. 318—319, 421—423, Ասատրյան 21—22)։ Ինչպես և զանջիրիի դեպքում, այստեղ էլ աշխարհազորի անհրաժեշտությունը պատճառ է դարձել սոցիալական կառույցի՝ ռազմականին ենթակայության և, չնայած մեր օրերում ռազմական-ցեղային ինստիտուտի կատարյալ վերացմանը, վերջինիս թողած հետքերը ակներև են։ Մասնավորապես ցեղապետը (պրսկ.՝ իլխան) միևնույն ժամանակ կրում է հրամանատար (պրսկ.՝ սարթիփ) տիտղոսը և այլն (Soltani, p. 466)։

Գորան ցեղամիավորման հոգևոր և քաղաքական-ռազմական իշխանությունների միմյանցից տարանջատումը արդեն փաստ էր Ղաջարական շրջանում, ինչը, ի դեպ, այս ցեղամիավորմանը զանազանում է ահլ-ի հակղ դավանանքի հետևորդ մյուս ցեղերից։

«Քաղաքական» իշխանությունը ավանդաբար իրականացվում է վերոհիշյալ Յասեմի (Նախկինում Միր–Խոսրովի) ազնվականական կլանի կողմից։

Հոգևոր կառավարման լծակները իր ձեռքում է պահում Բարզանչի սեյիդների տոհմը (պրսկ.՝ օջաղ–ե սադաթ), որն ընդհանրապես ահլ–ի հակղի բոլոր հետևորդների մոտ վայելում է հսկայական հեղինակություն։ Միավորման առանձին ցեղերում (դալխանի, թոֆանգչի) նշանակալից դեր ունի նաև Հեյդարի հոգևորական տոհմը։ Անհրաժեշտ է նշել, իհարկե, որ հասարակության ցեղային կառուցվածքը մեր օրերում այլևս կորցրել է այն հստակ ու կանոնարկված բնույթը, որ ուներ անցյալում։

էթնիկ պատկանելության հիմնահարցը.

Գնայած գորան ցեղամիավորման մասին աղբյուրների շատ հաճախ իրարամերժ ու հակասական տեղեկությունները անմիջականորեն անդրադառնում և դժվարացնում են խնդրի լուսաբանումը, այսուհանդերձ, առանց որոշելու գորան ցեղամիավորման տեղը գորան ժողովրդի կազմում, անհնար է դառնում վերջինիս լիակատար և համապարփակ ուսումնասիրությունը։

Նախ, ընդհանրապես, ինչ չափանիշերով պետք է առաջնորդվել էթնիկ-լեզվական, դավանական և ցեղային այնպիսի խայտաբղետ պատկեր ունեցող մի տարածաշրջանում ինչպիսին Իրանի հյուսիս-արևմուտքն է և, մասնավորապես, գորանիախոս տարրի զբաղեցրած տարածքը[3]։ Գորան տարրը մյուսներից տարանջատելու նախապայմանը, մեր կարծիքով, պետք է համարել, նախևառաջ, գորաներով խոսելու՝ գորանիախոս լինելու հանգամանքը։ Ընդ որում, նման հատկանիշներ, ինչպիսիք են՝ դավանանքը, էթնոնիմը, սոցիալ-հասարակական կացութաձևը, մշակույթի տարրերը, և այլն, պետք է դիտել որպես լրացուցիչ օժանդակ միջոցներ։ Ընդհանրապես «դասական» գորան էթնիկ միավոր կարելի է ընդունել միայն ավրամանի (հավրամանի, հավրամի) ցեղը, որին բնորոշ են գորանիախոս (գորանիի հավրամի բարբառով), ահլ–ի հակղի հետևորդ լինելը, նստակյաց կենսաձևը, ոչ ցեղային, ավելի շուտ կրոնադավանական սոցիալական կառույցը։ Սակայն գորան էթնիկ միավորից չպետք է զատել նաև գորանիի ֆանդոլայի բարբառով խոսող, իսկ դավանանքով՝ տասներկու-իմամական շիա

հանդիսացող քանդուլա ցեղը (զանգանա ու գորան ցեղամիավորման մեջ), Իրաքում բնակվող զանգանա անվան տակ հանդես եկող սուննիադավան ցեղերը, որոնց բարբառը մոտ է քանդուլայի բարբառին (Soltani, 242) և գորանիի բարբառներից մեկով խոսող և սուննի-շա՛ֆի՛ի ուղղության հետևորդ բաջալան ցեղամիավորման գերակշիռ մասը (Soltani, 883—884)։ Գորան էթնիկ տարրի անքակտելի մաս պետք է համարել նաև Իրանի Քերմանշահան և Քորդեսթան նահանգներում փոքրիկ կղզյակներով պահպանված գորանիախոս, հողագործ բնակչությանը։ Ընդ որում, թերևս միայն վերջինս է, որ լինելով գորանիախոս, միաժամանակ որպես էթնոնիմ (կամ, չի բացառվում, նաև որպես սոցիալական բնորոշում) կրում է գորան անունը։

Արդ, արդյո՞ք էթնիկապես գորան է գորան ցեղամիավորումը։ Այս միավորման ճնշող մեծամասնությունը, ըստ աղբյուրների տվյալների, խոսում է քալհուրիի բարբառներից մեկով (Soltani, pp. 371, 391)։ Քալհուրին, հավանաբար, պետք է համարել հյուսիս-լուրական բարբառ (ավելի ճիշտ՝ բարբառների համակարգ)՝ հագեցած քրդական, թերևս, նաև գորանական փոխառություններով։ Վերջին՝ գորանական փոխառություններով հարուստ լինելու և, ըստ երևույթին, գորանական սուբստրատ ունենալու հանգամանքը պետք է առավելապես վերագրել քալհուրիի այն բարբառին, որը տարածված է գորան ցեղամիավորման շրջաններում։ Սոլթանին, խոսելով գորան ցեղամիավորման լեզվի մասին, այն բնորոշում է, որպես «քալհուրական քրդերեն՝ գորան բնակչությանը հատուկ բարբառ» (Soltani, 371, 391)[4]։ Նման արտահայտությունը, հավանաբար, պետք է դիտել որպես վերևում ասվածի ապացույց։ Ուշագրավ է, սակայն, այն, որ հիշյալ ցեղամիավորման մեջ մտնող նստակյաց՝ ռա՛իյաթ բնակչությունը խոսում է գորանիով (Soltanl, p. 326, Soan‹ :. pp. 381—382)։ Բացի այդ, գորանին մայրենի լեզու է նաև գորան ցեղամիավորման հոգևոր տոհմերի՝ սեյիդների համար։ Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այն համարվում է ահլ-ի հակղի դավանական և ընդհանրապես գրական լեզու նաև ոչ գորանների համար։

Իր մեջ ընգրկած էթնիկ զանգվածների տեսանկյունից հիշյալ ցեղամիավորումը կարելի է բնորոշել որպես լուրական-գորանական մի միավորում։ Դեռևս Շարաֆ-խանը, խոսելով քալհուր տի-

րակալների մասին, նշում է, «նրանց աշիրաթը (ցեղամիավորումը) կոչում են **գուրան**» (Шараф-Намэ, с. 364): Նկատի առնելով, որ քաղհուրին և գորանին չեն կարող նույնացվել (Минерский, с. 14) և, հետևաբար, այդ լեզուների կրողներին ևս պետք է զանազանել, ապա «Շարաֆ-նամեի»-ի այս միտքը, որը, ի դեպ, տեղիք է տվել բազմաթիվ թյուր կարծիքների, պետք է մեկնաբանել հետևյալ կերպ. արդեն 16-րդ դ. քալհուրական (լուրական) մեկ կամ մի քանի ցեղեր **էթնիկ գուրան** ցեղամիավորման մասն էին, կամ ավելի ճիշտ՝ իշխող մասը։ Այս եզրահանգման օգտին է խոսում նաև այն փաստը, որ Միր-Խոսրովը, որի գերդաստանը մինչև օրս էլ **գուրան** ցեղամիավորման իշխանական տոհմն է, ծագումով լուր, որի մասին վկայված է նաև **անլ–ի ւավղի** սուրբ գրքում՝ «**Սարան–ջամում**». այստեղ հանդես է գալիս որպես Սեյյեդ Մոհամմադի մարմնավորում (պրսկ.՝ **մազհար**)՝ Միր-Խոսրով Լորեսթանի անունով։ Իզուր չէ, որ դեռևս Սոնը նշում էր, որ «Եթե անցկացվեն էթնոլոգիական հետազոտություններ, հնարավոր է, որ գորան ցեղը համարվի ոչ թե քրդական, այլ **լուրական** (ընդգծումը մերն է—Վ. Ո.) կամ պարսկական» (Soane, p. *381*)։

Այսպիսով, գորան ցեղամիավորումը իր էթնիկ և լեզվաբանական պատկերով հիմնականում ներկայացնում է լուրական-գորանական պատմական մի հետաքրքիր համաձուլվածք, ըստ որում նրանում մինչև օրս պահպանվել է թե՛ մեկ և թե՛ մյուս էթնիկ տարրը, իհարկե չպետք է մոռանալ նաև փոխադարձ ձուլման փաստերը, որում լուրական տարրը լեզվական առումով «հաղթող» հանդիսանալով, այսուհանդերձ կրում է «պարտվածի» էթնոնիմը և, հավանաբար, նաև լեզվական տարրերը՝ սուբստրատի ձևով։ **Գուրան** ցեղամիավորման բազմատարր հանրությունը[5] միավորող թերևս միակ գործոնը պետք է դիտել ընդհանուր դավանանքը, այն է՝ **անլ–ի ճակղի** հետևորդ լինելը։

Հաշվի առնելով այն հսկայական դերը, որը ժամանակին խաղացել են գորանիախոս տարրերը ներկայումս մեծամասամբ լուրականացված (քալհուրականացված) այս միավորման կազմավորման գործում և էթնիկ-լեզվաբանական տեսանկյունից անհնար համարելով այս ցեղախմբի դիտարկումը **գուրան ժողովրդի** կազմում, իհարկե բացառությամբ առանձին խմբերի, այսուհանդերձ առանց դրա մանրակրկիտ հետազոտման, թերևս անհնար է ամ-

բողջական պատկերացում կազմել գորանական հանրության վերաբերյալ։

VARDAN VOSKANIAN

THE GORAN TRIBAL CONFEDERATION

The Goran tribal confederation is one of the most considerable tribal units in the NW of Iran. In this article we made an attempt to separate the concepts of the Goran tribe ane the Goran ethnic element. The Goran tribal confederation from the ethnic and linguistic points of view is a very interesting historical mixture of Lurs (Kalhurs) and Gorans (Gorani speaking population), in which the lingustic domination of the Lurs (Kalhurs) is attended with the preservation and dissemination of the Goran ethnonym among the ethnically non-Goran elements of the above mentioned confederation.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Մենք չենք անդրադառնում գորան ցեղամիավորման մեջ ոչ վաղ անցյալում մտած, այսպես կոչված, չաֆական fառյակին կամ չաֆ-գոռան ցեղերին, քանզի դրանք ունեն ակներև քրդական հատկանիշներ, որոնց անդրադառնալը անտեղի է՝ լինելով հոդվածի ծավալից* (*Ջաֆ-գոռան միավորման մասին մանրամասն տե՛ս* Ասատրյան, Sotlān)։

2 *Բոլոր բնակավայրերի, էթնիկ անվանումների, անձնանունների և տերմինների համար հիմք է ընդունված ժամանակակից պարսկերենի տառադարձությունը, որոշ բացառություններով միայն։*

3 *Այս խնդրի որոշ կողմերին անդրադարձել է, թերևս, միայն Գ. Ասատրյանը (էջ 29—30)։*

4 *Ընդհանրապես մինչև օրս վերջնականորեն չի որոշված fալճուրիի տեղը իրանական լեզուների համակարգում։ Դրա պատճառներից մեկն էլ, թերևս, այս բարբառով կամ լեզվով գրառված նյութերի բացակայությունն է, այսուհանդերձ, հետազոտողների մեծ մասի կարծիքով, այն պետք է դիտվի լուրական բարբառների համակարգում* (Курдоев, с. 18):

5 *Նկատի ունենք, որ ցեղամիավորման մեջ անընդհատ ձուլվել են նաև քրդախոս տարրեր, որի ապացույց կարող է լինել նաև ներկայումս քրդախոս (սորանիախոս) և սուննի շաֆի՛ի ուղղության հետևորդ չաֆական ցեղերը։*

Տե՛ս Գ. Ասատրյան Գուրանները «Իրան-նամէ», թիվ. 1 (2), 1995, էջ 21—30։

К. Курдеев. Грамматика курдского языка на материале курманджи и сорани, М., 1978.

В. Минерский. Курды. Заметки и впечатления. Г., 1915.

Шараф-Намэ, т. I, М., 1967.

V. Minorsky. The Guran—BSOAS, XI/1 (1943), pp. 75—403.

E. B. Soane. To Mesopotamia and Kurdistan in Disguise, London, 1926.

M. A. Soltani. The Historical Geography and Comprehensive History of Kermanshahan, vol. 2, 1—2, Tehran, 1993 (in persian).

ГАРНИК АСАТРЯН

СУФФИКС -NG В КУРМАНДЖИ

1. Суффикс -ng наиболее часто употребляется для образования существительных с уменьшительным и ласкательным значением: xwayng, xāīng, xūng „сестрица" от xuh xwalı „сестра"[1] (ср.: ala x w a y n g e, darde dilā girāna, tište dinyāe či mirāna „О, сестрици, сердечная боль велика, на что мне богатство мира", КЭПС, 155), J̌ārīng „служан(оч)ка" от J̌ārī (ср.: hūn J̌ ā r ī n g e mina dalāl, min bihīstīya mīrī na li māl „Служаночки вы прелестные мои, я слышал, что эмира нет дома", КЭПС, 24, 147), brāng „братишка, браток" от birā (ср: b r ā n g e min gulā gōvandāna „Браток мой—роза хороводов", КОП, 85), ср. также zāvāng „зяток, женишек" от zāvā „зять", kānīng „родничок" от kānī „родник, gōšang „уголок, кончик, край" от gōsa „угол". xānīng „домик" от xānı „дом", J̌īng „местечко" от J̌ī „место" и т. п. Такого рода слова с -ng функционируют как формы эмоциональной оценки, так что суффикс здесь имеет не только словообразовательное значение.

Собственно словообразовательное значение суффикса представлено в словах, не выражающих эмоциональной оценки: revīng „путник, путешественник" от revr „id" (ср.: hung k'īna? gōte, 'am r e v ī n g i n „Вы кто? Ответили: Мы—путники" KDS II, 245), p'ālang „рабочий, жнец" от p'āla „id" (ср.: way p' ā l a n g ō, p' ā l a n g ō, da'sa daste ta zangla „О, жнец, жнец серп звенит в твоих руках", К'ЩК'Л, 20), xāsıng "тещa" от xāsī „id", zavīng „нива, пашня" от zavī „id" и т. д.

Выступая при именах собственных, суффикс -ng передает значение пренебрежительности: Hasōng от Hasō, A'dǫng от A'dō и т. п.[2]

Из сочетания суффикса -ik с -ng получается сложный суффикс -king с пейоративно-уменьшительным оттенком; ср.: gadaking „мальчишка" от gada „мальчик", biräking „братишка" от birā „брат", hävälking „дружок" от haväl „друг" и т. п.[3] Суффикс -king передает порою и значение собирательности; ср.: zärking „детвора" от zāř „дитя, ребенок".

Все эти типы употребления -ng сходны с функционированием суффикса -ak в персидском языке, также образуюшего формы эмоциональной оценки и новые лексемы.

2. Суффикс -ng возник, по-видимому, в результате осмысления в качестве отдельной суффиксальной морфемы сочетания -ng в исходе слова, встречающегося в различных образованиях. Возникновение этого сочетания в финальной позиции, исключая те случаи, когда оно фигурирует в составе корневых форм (типа dang, tang, žang, rang и т. п.), исторически обусловлено двумя фонетическими процессами.

а) Инфигированием -n- перед конечным гуттуральным -k/g после долгого гласного (при случае с -k происходит его озвончение под влиянием -n-); ср.: čōng от čok „колено" (ср.: Sīyābandē Silīvī sare xwa dānī sar čōngā xāje „Сиабанд Сливи положил голову на колени Хадже" КЭПС, 159), č/cīrōng от č/cīrōk „сказка, рассказ", p'isrūng (ГКТ, 238) от p'išruk „мучная каша" (JJ, 80), из арм. диал. p'sruk, xang (из арм. xak, диал. xag) „сырой, неспелый", brāng „браток" от birāk[4], řeng „дорожка", от *rēk[5]. Ср. также sāpōng из русск. сапог (ср.: lāwkē min sakinīya sar xāniyā, s ā p ō n g tanga nāča p'iya „Мой парень остановился у дома, сапог(и) узкие не лезут на (его) ноги", ДШК, 23), pišing „кошка, кот" от pišīk, pīvōng „съедобное растение" от pīvōk, nezīng „близкий от nēzīk, и т. д.[6]

б) Приращением -g к конечному -n, следующему за долгим гласным: pūng от pūn „насест". (<арм. диал, pun/

pün), sīrdāng „посуда для молока" от šīrdān, xwēdāng от xwēdān „мешочек для соли, который носят при себе пастухи для овец; солонка"[7], nāng от nān „хлеб". sīng „грудь" (ср. перс. sīna), hung от hūn „местоим. 2-го л. мн. ч."[8] и т. п.

GARNIK ASATRIAN

THE SUFFIX -NG IN KURMANJI

The nominal suffix -ng in Kurmanji is used for the formation of diminutives with hipocoristic meaning. It has also substantivizing function with explicite pejorative connotation.

The origin of this suffixal formant might be explaned by two separate developments.

1) The addition of infix -n- before -k/g after a long vowel

2) The addition of -g to -n in final position following a long vowel.

ПРИМЕЧАНИЯ

[1] *И. А. Орбели.* Словарь курдского языка области Мокс (рукопись); *A. Christensen, K. Barr.* Iranische Dialektaufzeichnungen aus dem Nachlass von F. C. Andreas. Berlin, 1939, S. 173.

[2] *К. К. Курдоев.* Суффиксация в курдском языке. В кн.: Краткие сообщения Института народов Азии, 67, М., 1963, с. 35.

[3] См. там же.

[4] Ср. mak „мать"; самка < *mādk- (о женщине (матери) только в слове birāmāk „единоутробный брат" и в непристойной брани: min žin-mākā la gāyi), dāk „мать", „матушка" и т. д.

[5] lē/ī „дорога" из *rā(δ)iyā- или с эпентезой — *rāi(δ)yā- (ср. перс. rāh, corg. rāl < *rā(δ)(i)yā-), см. *G. Morgenstierne.* Early Iranic Influence upon Indo-Aryan.—In: Commemoration Cyrus, vol. 1, Leiden, 1974, p. 276, n. 9; *W. Eilers.* Verbreitung und Fortleben alter Epenthese.—In: Ibid., S. 288.

[6] Инфигированне -n после долгого гласного засвидетельствовано и перед -d: spindār от spidār (перс. sepidār) „тополь". Об эвфоническом -n- в сложных словах см. *E. Dj. Bedir Khan. R. Lescot.* Grammaire Kurde (Dialecte Kurmandji), Paris, 1970, § 40, p. 25.

[7] См.: *И. А. Орбели.* Указ. соч.

[8] Маловероятно происхождение hūng из *hū < др.-иран. *yušma- + -ng, как полагает Р. Л. Цаболов (см.: *Р. Л. Цаболов.* Очерк исторической морфологии курдского языка. М., 1978. с. 24), ибо обычной в курманджийских диалектах является форма hūn, засвидетельствованная и в классической курдской поэзии, что показывает ее первичность по отношению к форме hūng. Последняя выступает факультативно лишь в немногих диалектах; к тому же, суффикс -ng, по всей вероятности, довольно позднего происхождения. Более приемлемо предположение того же автора о происхождении hun из *hum < *huma < *hma < *xšma— (скорее hsma-), См.: *Р. Л. Цаболов, Д. И. Эдельман.* К вопросу о словообразовании местоимений в индоиранских языках. В кн.: Индийская и иранская филология, М., 1971, с. 153, примеч. 6.

СОКРАЩЕНИЯ

ГКТ — *Ч. Х. Бакаев.* Говор курдов Туркмении. М., 1962.

ДЩК — *О. Шалил.* Дьлокед щьма'та к'орда. Ереван, 1964.

КОП — *М. Б. Руденко.* Курдская обрядовая поэзия. М., 1982.

КЭПС — Курдские эпические песни-сказы. Подготовка текстов, предисловие и комментарии А. Джнди. М., 1962.

JJ — *A. Jaba, F. Justi*, Dictionnaire Kurde-français. StPb. 1879.

KDS II — *D. N. Mackenzie.* Kurdish Dialect Studies--II. London, 1962.

ԼՈՐԻՏԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՏԱՌ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԴԻՎԱՆՈՒՄ

Հայ իրականության մեջ հայտնի են մեծ թվով երախտավորներ, գիտության մշակներ, անխոնջ բանահավաքներ, ձեռագրերի ընդօրինակողներ, բառարանագիրներ, հասարակական գործիչներ, ինչպես նաև վաճառականներ։ Եղիա Մուշեղյանի[1] անվանը կպատշաճեն թվարկված բոլոր «տիտղոսները»։ XVIII դարի հետաքրքրական դեմքերից մեկի, բազմաբեղուն այդ գործչի կյանքի ու գործունեության, մանավանդ նրա դիվանի հետազոտումը, որքան էլ անհրաժեշտ, սակայն տակավին հեռու է բավարար լինելուց։

Մուշեղյանի և՛ կյանքը, և՛ գրական ժառանգությունը տպավորիչ են իրենց արտասովորությամբ՝ բոլոր առումներով. արտակարգ եռանդ, ունակություններ, հետաքրքրասիրություն, կյանքի փուլերի արտակարգ զիգզագներ, արտասովոր բեղուն գործունեություն նույնիսկ միմյանց անհարիր բնագավառներում և իբրև արդյունք այս բոլորի՝ արտասովոր մի դիվան։

Անսպասելի շատ վայրիվերումներով է անցել Մուշեղյանի կյանքը։ Այստեղ հնարավորություն ունենք միայն թռուցիկ խոսք ասելու նրա կենսագրության վերաբերյալ, առանց խորանալու մանրամասների մեջ։ Ծնվել է 1688 թ.[2]։ Կյանքի առաջին փուլն անցկացնելով ծննդավայր Կարինում, Եղիան, որի մեջ խոսում էր աշխարհը համակողմանիորեն ճանաչելու ոգին, մեկնում է Հայրենի տանից՝ սկիզբ դնելով իր աստանդական կյանքին։ Գրեթե տասնամյակ տևած դեգերումներին հաջորդում է կանգառը Թավրիզում 1717 թ., որով և սկսվում է նրա կյանքի նոր, ամենաարգասավոր փուլը։ Այստեղ է, որ Եղիան՝ առևտրի մեջ արդեն կենսափորձ ունեցող մի հմուտ վաճառական, ծառայության մտնելով

Արևելահնդկական ընկերության ֆրանսիական բաժանմունքի Թավրիզի մասնաճյուղում (որի տնօրենն էր ֆրանսիացի Բորեգարը), ունենալով մեծ կապեր, առևտրական, նաև հասարակական լայն գործունեություն է ծավալում, միաժամանակ ծնունդ տալիս այն հսկայածավալ դիվանին, որի գիտական, պատմամշակութային արժեքը գերագնահատել դժվար է։

Մուշեղյանի կյանքի հաջորդ փուլերը դրամատիկ ընթացք ունեցան։ Չնայած այն հանգամանքին, որ նա մեծ հեղինակություն ուներ ոչ միայն իր շրջապատում, առևտրական աշխարհում, այլև վարչական օղակներում, կյանքը, սակայն, նրան մատուցեց այնպիսի անակնկալներ, որոնք մեծ հիասթափություն պատճառեցին, փոխելով նրա պատկերացումները շրջապատի մասին։ Ուղղակիորեն կամ միջնորդավորված՝ Եղիայի համար (որը կաթոլիկություն էր դավանում) վճռորոշ են եղել կաթոլիկ և պարսկահայ համայնքների, վարչական այլևայլ պաշտոնյաների, իր տնօրեն Բորեգարի, ապա վերջինիս ու պարսիկների փոխհարաբերությունները։ Եղիան նույնիսկ ցուցակ է կազմել՝ «մեր թշնամիքն են Թարվեզ»[3]։ Հակոտնյա ուժերի բախումներից հոգնած ու ձանձրացած Եղիան 1724 թ. լքեց Պարսկաստանը, օգտագործելով հարմար պահը, երբ պարսից նորընծա շահ Թահմասպի ուղերձները Եվրոպա առաքելու անհրաժեշտություն առաջացավ[4]։ Պատվիրակության կազմում ընդգրկվեց նաև Մուշեղյանը, որը, ըստ երևույթին, և ղեկավարել է այն։ Իրականացնելու համար իր վաղեմի երազանքը՝ հանդիպել ռուսական ցարին (թուրք-պարսկական գերիշխանությունից հայերին ազատագրելու ակնկալությամբ), Եղիան որոշում է պատվիրակությունը տանել Ռուսաստանի վրայով, գիտենալով հանդերձ, թե ինչ վտանգներով է դա հղի։ Մեկնումից առաջ եղբորը՝ Մովսեսին, գրում է. «Աստուծով ես պիտիմ Հաշտարխանու վրայօվն գնալ՝ իմփրատօրի կուշտն, անտի ֆռանսիզ թագաւորին...»։ Որ Եղիան որոշել էր իր ետևից կամուրջներն այրել, վկայում է թեկուզ այն փաստը, որ մեկնելիս իր հետ վերցրել է իր ամբողջ դիվանը։ Սակայն նրան վիճակված էր մնալ Ռուսաստանում։ Բաղձալի հանդիպումը Պետրոս Մեծի հետ այդպես էլ չկայացավ. դրան փոխարինեց Եղիայի ձերբակալությունը Աստրախանում (1724 թ.), բանտարկությունը, տարիներ տևած հարցաքննությունների ծանր շղթան, ապա՝ արդարացումը և հե-

ռացումը Ռուսաստանից 1736 թ.[5]։ Չնայած Եղիայի բազում ջանքերին, դիվանը նրան չվերադարձվեց և ներկայումս պահվում է Մոսկվայում[6]։

Ռուսաստանի փուլին հաջորդած բազմամյա դեգերումներից հետո, որոնց նպատակն էր վերագտնել իրեն, Մուշեղյանը հանգրվանում է իր ծննդավայրում և 1747—1749 թթ. թղթին հանձնում իր հուշագրությունը[7]։ Մահվան ստույգ թվականն անհայտ է։

Մուշեղյանի դիվանը ժամանակի պատմական, գրական-մշակութային ու այլ տեղեկությունների մի շտեմարան է, որտեղ ուսումնասիրության նյութ կարող են գտնել (այս կամ այն չափով) պատմաբանն ու գրականագետը, լեզվաբանն ու բժիշկ-հետազոտողը, մաթեմատիկոսն ու աշխարհագրագետը, դրամագետը, տնտեսագետը, նաև կնքագետը, անվանաբանը, նույնիսկ՝ սեյսմագետը։ Մեծ են դիվանի նյութերի նաև աշխարհագրական սահմանները՝ համապատասխան այն միջօրեականներին, որտեղ միայն ոտք էր դնում աշխարհատես հայ վաճառականը (Իրան, Իրաք, Հնդկաստան, Անդրկովկաս, Ռուսաստան, Թուրքիա, եվրոպական երկրներ)։

Պատմական և, գլխավորապես, տնտեսական վավերագրերի այդ հավաքածոն գոյացել է տարաժանր միավորներից. դրանք, առաջին հերթին, նամակներ են ապա՝ հաշվեմատյաններ, պարտավորագրեր, պարտամուրհակներ, համաձայնագրեր ու առևտրական այլևայլ փաստաթղթեր, զանազան ցուցակներ, կտակներ, խնդրագրեր և պետական պաշտոնական վավերագրեր, գումարած՝ տարբեր աշխատություններ, թարգմանություններ, ընդօրինակություններ, զանազան ժողովածուներ։ Ժամանակակից կյանքի, թերևս, ոչ մի, փոքր ի շատե կարևոր մարզ դուրս չի մնացել Եղիայի տեսադաշտից։ Անհատնում եռանդի տեր, նա առևտրականի բազմազբաղ իր առօրյայում՝ լի հարատև հաշվարկներով, նամակագրությամբ, զանազան գրագրություններով, առևտրի աշխարհի հարուցած դավերի դեմ պայքարի թոհուբոհով, կարողացել է նաև բավարարել իր գրական-գիտական հետաքրքրությունները՝ գրի առնելով և սերունդներին թողնելով իր ժամանակի բազմախոսուն պատկերը։ Միայն հեռվից լսած լինելով Մուշեղյանի դիվանի մասին, Հ. Ոսկյանը՝ Մուշեղյանի առաջին հետազոտողներից մեկը, զարմանքով գրել է. «Աշխարհիկ ուղևորէ մը,

վաճառականէ մը, հալածեալէ մը այսքան գործերու շարադրությունն հիրավի անսպասելի էր»[8]։

Դիվանի մասին առաջին հիշատակությանը հանդիպում ենք հայ ժողովրդի պատմության վերաբերյալ փաստաթղթերի ժողովածվում[9], բայց դիվանի առաջին ուսումնասիրողը, ըստ էության, ակադ. Ա. Հովհաննիսյանն է եղել, որը դարիս դեռևս 10-ական թվականներից սկսել է հետաղոտել և դիտական շրջանառության մեջ դնել նրա փաստաթղթերը[10]։ Այնուհետև գնալով մեծացել է հետաքրքրությունը դիվանի նկատմամբ[11]։ Սակայն մինչև օրս նրանից հրատարակված նյութերի մեջ ամենածավալունը Ա. Աբրահամյանի կազմած ժողովածուն է, որն ամփոփում է դիվանի նամակների որոշ մասը և մի քանի փաստաթղթեր[12]։

Արդեն նշեցինք Մուշեղյանի դիվանի ընդգրկման և թեմատիկ բազմազանության մասին։ Հիրավի, իրազեկման այդ լայն կտավի վրա առօրյա ցանկացած թեմա իր արտացոլումն ունի։ Այդ թվում է և բանաստեղծությունը։ Ըստ երևույթին, Եղիան առանձին ոգևորությամբ է վերաբերվել չափածոյին և ինքն էլ հակում է ունեցել ստեղծագործելու։ Դիվանի էջերում հանդիպում ենք բանաստեղծություններ գրելու նրա առանձին փորձերի[13]։

Տարբեր հեղինակների բանաստեղծություններ ևս առկա են դիվանի զանազան թղթապանակներում։ Սակայն առանձին ուշադրության է արժանի բանաստեղծությունների ամբողջական ժողովածուն, որը կոչվում է «Գիրք խաղից և երաժշտականաց»։ Ահա ձեռագրի համառոտ նկարագրությունը. թերթերը՝ 164, մեծությունը՝ 16,4×10,6 սմ, նյութը՝ թուղթ, վիճակը՝ բավարար, գրությունը՝ միասյուն, գիրը՝ նոտրգիր, գրիչ՝ Եղիա Մուշեղյան, վայրը՝ Թավրիզ, ժամանակը՝ 1721 թ.։ Ժողովածուն եզրափակող բանաստեղծություններից մեկը գրվել է 1723 թ. հունվարի 30-ին, որը և հիմք է տալիս եզրակացնելու, որ Մուշեղյանն այս «դիրքը» կազմել է երկու տարվա ընթացքում։

Ձեռագիրն ամփոփում է ժամանակի և ավելի վաղ շրջանի շուրջ 60 հեղինակների հայատառ 201 (Եղիայի համարակալմամբ) բանաստեղծություն՝ մեծ մասամբ թուրքերեն և ադրբեջաներեն, ապա նաև հայերեն ու պարսկերեն։ Հայատառ օտարալեզու դրականությունը հայ իրականության մեջ հանրահայտ իրողություն է,

և սույն ժողովածուն ևս վկայում է, որ XVIII դ. առաջին կեսին երևույթը ծաղկում էր ապրում։

Սույն ժողովածուի բանաստեղծությունների մեծ մասը բաղկացած է 5 տնից, մյուսների մեջ՝ նվազագույնը 1 տուն է (դրանք ֆարդ-երն են), առավելագույնը՝ 57։ Ընդհանուր առմամբ ժողովածուն կազմում է մոտ 1000 տուն։ Այն դրվել է բանավոր, հավանաբար նաև գրավոր աղբյուրների հիման վրա։ Այսպիսի եզրակացության համար հիմք են ծառայել, նախ, կազմողի առանձին նշումները այս կամ այն հեղինակի կամ բանաստեղծության վերաբերյալ («ոմանք ասեն», «լսեմք յայլոց», «մեք որչանք յսեմք, գրեմք աստ»)։ Սա անվիճելի վկայություն է։ Իսկ թե ովքե՞ր կարող էին լինել բանավոր աղբյուրները, պետք է ենթադրել, որ հիմնականում թավրիզաբնակները, քանի որ ժողովածուն գրի է առնվել այնտեղ։ Բայց և միանգամայն հնարավոր ու տրամաբանական է, որ աղբյուր կարող էին լինել նաև Պարսկաստանի այլ քաղաքներից ու գյուղերից, ապա նաև Անդրկովկասից ու Թուրքիայից Թավրիզ ժամանած անձինք։ Բացառված չէ նաև, որ Եղիան ինքը, լինելով հիշյալ վայրերում, ունկնդիր է եղել ու գրի առել դրանք։ Սակայն նշմարելի են անուղղակի փաստեր, որոնք հուշում են նաև գրավոր հիմքի հնարավորությունը ժողովածուի համար։ Այնպիսի մի երկարաշունչ բանաստեղծություն, որպիսին է 57 տնից բաղկացած «Ասմունք Միրզա Ալուն» ենթադրում է ավելի շուտ գրավոր, քան բանավոր աղբյուր (թեև դա անվերապահորեն պնդել չի կարելի)։ Գրավորի ենթադրությանն է մղում բանաստեղծական ձևերի բազմազանությունը և, հատկապես, վերնագրերում դրանց արձանագրումը։ Յուրաքանչյուր ոտանավոր վերնագրված է բանաստեղծական ձևի և հեղինակի անվանումով (ինչպես՝ «ղաղալ Ֆիզուլի», «թաճնիս ալիֆլամա Միրանին», «վարսաղի Ղայիրին» և այլն)։ Թվում է, թե բերնեբերան անցնելիս հազիվ թե կպահպանվեր որոշակի զատորոշումը բանաստեղծական այնքան շատ ձևերի և հեղինակների։ Մյուս կողմից, ակնհայտ է որոշ բանաստեղծությունների վերնագրումը Եղիայի կողմից։ Կարո՞ղ էր Եղիան վերնագրել բոլոր ոտանավորները. դրա համար պետք էր քաջահմուտ լինել. մի բան, որ բացառված չէր, անշուշտ։ Բայց ժողովածվում մեծ բաժին ունեն Եղիայի վերնագրած «Ասմունք»-ները։ Կարծում ենք, որ այն դեպքերում, երբ

բանավոր երգը ըստ տեսակի տարբերակված չի եղել. հետևապես վերնագիր չի ունեցել, Եղիան վերնագրել է «Ասմունք այսինչի» կամ ուղղակի՝ «Ասմունք» (երբ հեղինակը հայտնի չէր)։ Մնացած դեպքերում, հավանաբար, գործ ունենք գրավոր աղբյուրների հետ. մանավանդ, որ առկա է նախադեպ. դիվանի մեկ այլ ժողովածու (Ղովսիի երգերից բաղկացած) Եղիան գրի է առել «Ղօվսի քիտաբի» (Ղովսիի գիրք), հավանաբար, ձեռքից ձեռք շրջող գրքից (1719 թ.)։ Անկախ դրանից էլ անհերքելի է, որ լինելով գրասեր և գրքասեր[14], Եղիան հետամուտ կլիներ «քիտապներ» ձեռք բերելուն՝ արտագրելու համար։ Ուրեմն, չբացառենք նույն երևույթը խնդրո առարկա ժողովածվի հարցում, որում կարող էին զուգորդվել գրավոր և բանավոր աղբյուրների գրառումները։

Հետազոտողները ժողովածուն անվանում են տաղարան, և դա, իրոք, պատշաճում է, եթե նկատի ունենանք նրա բովանդակած նյութի մեծ մասը։ Մուշեղյանի տված խորագիրն իսկ դրա վկայությունն է։ Ի դեպ, «Գիրք խաղից և երաժշտականաց» վերնագրին հաջորդում է Եղիայի մեկնաբանությունն այն մասին, որ այս գիրքն իրեն հետաքրքրում է, որովհետև ուրախությունը գերադասում է բամբասանքից[15]։ Կարծում ենք, սակայն, որ նրանում առկա են նաև ոտանավորներ, որոնք երաժշտությամբ չեն ուղեկցվել։ Դա ակնհայտ է Եղիայի տված բացատրություններից, որոնցում շեշտվում է այդ ոտանավորների ասելը, բայց ո՛չ՝ երգելը (անշուշտ, խոսքը «խաղ ասելու», «երգ ասելու» տարբերակների մասին չէ)։ Եղիան ինքն էլ, կարծեք, առանձնացնում է երգվող և պարզապես չափածո ստեղծագործությունները, նշելով, որ իր այս ձեռագիր մատյանը հավաքածո է «պէս պէս խաղի, ղազալի, երգոց»։ Անշուշտ, հարցը վիճարկելի է և պահանջում է լայն հետազոտություն։

Ժողովածվում ընդգրկված հեղինակների թիվը պատկառելի է, ընդ որում՝ հանրահայտ անունների (Քուչակ, Ֆիզուլի, Խաթայի, Քյոռօղլի, Նասիմի, Միրան և այլն) հետ մեկտեղ առկա են անծանոթ շատ հեղինակներ (Ալի էքպար[18], Ղուլփիրի, Ղարաճօղլան, Ծաֆլուք, Մէմին, Ղուրպաթ, Հոսէին և այլն)։ Եթե «միջնադարյան հայ գրականության մեջ հազվադեպ են «մուսուլման» գրողների անունների հիշատակությունը»[17], ապա Եղիայի սույն ժողովածուն ամփոփում է մեծ մասամբ հենց այդպիսի անուններ։

Անշուշտ, չի կարելի ենթադրել, որ բոլոր վեց տասնյակ հեղինակները ճանաչված բանաստեղծներ են եղել։ Բայց մի բան ակնբախ է. բանաստեղծությունը ժողովրդական լայն զանգվածներին հոգեհարազատ է եղել, և սույն ժողովածուն էլ դրա հավաստումն է։ Բանաստեղծությունը ծնվում էր ամեն օր, առօրյայում, հաճախ հանպատրաստից (ինչպես աշուղների մոտ էր սովորաբար)։ «Ղաթայ Ալի էքպարին» 11 տնից բաղկացած թուրքերեն բանաստեղծությանը նախորդում է Եղիայի ծանուցումն այն մասին, որ հեղինակը դպիր է և այս «գօվասանն» նվիրել է ֆրանսիացի ճարտարապետ Դալանսոնին» «ևս իմ անունն և պարոն Յօհաննէս Մկրտչի անունն մէջն ասաց»[18]։

Հայ դրականության մասնագետներին, անտարակույս, կհետաքրքրեն Քուչակ, Ղազար, Սարդիս, Միրան, Մաճնուն և այլ բանաստեղծների կամ աշուղների ստեղծագործությունները, որոնք (թեև մյուսներից անհամեմատ ավելի սակավաթիվ) տեղ են գտել ժողովածվում։ Առավել մեծաքանակ ոտանավորներով ներկայացված է Միրանը, որի գրչին են պատկանում տարատեսակ ադրբեջաներեն բանաստեղծություններ (մուխամմասներ, թաճնիսներ (բառախաղեր), վարսաղներ, ալիֆլամաներ, դուբեյթներ և այլն)։ Հանդիպում ենք Միրանի նաև հայերեն բանաստեղծությունների, և այս փաստը դալիս է մեկ անգամ ևս հավաստելու հայ բանաստեղծների երկլեզու ստեղծագործելու իրողությունը։ Վերջինիս վկայությունն է նաև Քուչակի ստեղծագործությունը։ Ժողովածվում առկա է նրա՝ թուրքերեն երկու բանաստեղծությունը, որոնց հետ ի մոտո ծանոթությունը, մեր կարծիքով, կարող է նպաստ բերել որևէ (թեկուզ փոքր) լրացում արձանագրելու քուչակագիտության մեջ, մանավանդ, որ այս անվան շուրջ առկա են տարակարծություններ։ Գիտական մանրազնին վերլուծությունը թողնելով մասնագետներին, նշենք միայն հետևյալը։ Ինչպես հայտնի է, վիճարկվել են Քուչակի անվան ստուգաբանությունը, ստեղծագործելու վայրը և այլ հարցեր, մասնավորապես՝ Քուչակ—հայրեններ կապը[19]. Եթե այս հարցերից գեթ մեկի լուսաբանմանը դույզն իսկ նպաստեն նշված բանաստեղծությունները, ապա այս ժողովածվի գիտական արժեքն առավել պիտի բարձր ճանաչվի։ Հիշյալ երկու բանաստեղծության առկայությունն իսկ աներկբայորեն հավաստում է մեզ հասած հիշատակությունն այն մասին, որ Քու-

չակը «շնորհք է ունեցել հայերեն և թուրքերեն երգեր հորինելու» և մեծ համբավ է վայելել[20]։ Ավելի քան մեկ հարյուրամյակ է, ինչ սկսել են Քուչակ հրատարակել. այդ ընթացքում նրան են վերագրվել բազմաթիվ հայրեններ, վիճարկվել, հաստատվել ու հերքվել են այլևայլ տաղերի համար նրա հեղինակությունը։ Եվ եթե դրա պատճառը ոմանց կողմից համարվել է այն, որ «Նահապետ Քուչակի երգերը ցրված են զանազան ձեռագրերում և չեն կրում հեղինակի անունը»[21], ապա սույն ժողովածվի պարագայում տրամագծորեն հակառակ մի պատկեր է. երկու բանաստեղծությունն էլ վերջին տան մեջ կրում են Քուչակ անունը՝ կարծեք իբրև ստորագրություն[22] (ինչպես ընդունված էր տաղասացների և աշուղների մոտ)։

Հետազոտողները առանձնացնում են երկու Քուչակ. պապ՝ Նահապետ և թոռ՝ Վանեցի (կամ «աշըղ»)[23]։ Հիշյալ բանաստեղծություններում Քուչակն իր անունը հիշատակում է մի դեպքում Քօչակ, մյուսում՝ Վանլի Քեօչակ ձևով[24]։ Թերես հետազոտողներին այս տվյալները հետաքրքրեն։

Ժողովածվի հեղինակները, ըստ երևույթին, եղել են հիմնականում աշուղներ և մեծ ժողովրդականություն են վայելել։ Եղիան իր ժողովածուն համարում է «գիրք... բանաստեղծ արանց հնարեալ»։ Ամենայն հավանականությամբ, այս բանաստեղծ այրերից շատերի անուններն իրենց ստեղծագործություններով հանդերձ կորստից փրկվել ու մեզ են հասել շնորհիվ Մուշեղյանի ժողովածվի։ Հարկ չկա թվարկելու գիտությանը վաղուց հայտնի այն գրական հուշարձանները, որոնք բնագրով չեն պահպանվել, սակայն մեզ են հասել հայերեն թարգմանությամբ։ Եղիայի դիվանի սույն ժողովածուն, մեր համոզմամբ, ևս մեկ օրինակ է հիշյալ իրողության։

Բանաստեղծություններն ըստ բովանդակության տարաբնույթ են. կրոնական, խոհական-փիլիսոփայական, գերիշխում են սիրային տաղերը։ Առկա է նաև պանդխտության թեման՝ հայրենաբաղձության շեշտված պաթոսով.

«Վաթանս հեռու ա, չի հասնի ձեռս.

. . . .

Փափաքիմ տեսնեմ քուրս ու ախպէրս» (Միրան)[25]։

Հնտաքրքրությունից զուրկ չեն ու մեծաթիվ այն բանաստեղծությունները, որոնք իրադարձությունների անմիջական արձագանքն են, ինչպես՝ «Ողբ ի վերա Դավրէժու»՝ 1721 թ. երկրաշարժի ժամանակ Թավրիզի ավերման մասին. և կամ նվիրված են այս կամ այն գործչին։ Դրանով իսկ (նաև Նղիայի իրազեկումներով) ժողովածուն ինչ-որ չափով պատմական սկզբնաղբյուրի դեր կարող է խաղալ։

Ժողովածուն գնահատելի է նաև իբրև հարուստ աղբյուր միջնադարյան արևելյան բանաստեղծական արվեստի ուսումնասիրման համար. տաղաչափության, գեղարվեստական հնարանքների, յեղվի ու ոճի, բանաստեղծական կառուցվածքի և քնարերգության այլևայլ առանձնահատկությունների հետազոտման համար։ Այն բանաստեղծական ձևերի մի ամբողջ պատկերասրահ է, որտեղ մասնագետը կգտնի այդ ձևերին բնորոշ բազում հատկանիշներ։ Ահա ժողովածվում տեղ գտած բանաստեղծական ձևերի ու ժողովրդական երգատեսակների ցանկը (տալիս ենք այբբենական հերթականությամբ, բնագրի ուղղագրությամբ).

ալիֆլամա	զանճիրլամա	ղաթա	սուվալ(՞)
ասմունք	թաճնիս	մանի	վարսաղ(ի)
բահրի(՞)	թասնիֆ	մուխամմաղի	վիճուտլամա
բինիաթլամա	լումարա	ողբ	ուչլամա
դիվանի	ղաղալ	ռուպայի	ֆարտ
դուբեյթ	ղաղալ-դիվանի	սաքիլլամա	

Մուշեղյանը չի բավարարվել բանաստեղծությունների ու երգերի հավաքմամբ. ժողովածուն հարստացրել է առանձին մեկնաբանություններով այս կամ այն հեղինակի մասին։ Դրանք գլխավորապես բանավոր զրույցների գրառումներ են, որոնց մեջ առկա մանրամասները կարող են օգտակար լրացում լինել մեր գիտելիքներին և կամ նոր հարց հարուցել։ Բանաստեղծ կամ տաղտկաց Մաջնունի (Մաճնուն՝ ըստ Նղիայի) «Ասմունքին» նախորդում է նրա մասին հետևյալ տեղեկությունը. «Այս Մաճ(ն)ունս էր ազգաւ հայ ի քաղաքէն Յամիթա, մեռաւ և թաղեցաւ՝ ի քաղաքն Կարին։ Բազում բան է ասացեալ»[26]։ Շարունակելով տեղեկությունը, Նղիան պատմում է քաղաքի փաշայի առաջարկի մասին, որ-

պեսզի Մաջնունը նրա և իր երեք որդու մասին ասի «բան գօղասանութեան», որը և զետեղված է ժողովածվում[27]։ Նույն կերպ Եղիան իրազեկում է Քյոռօղլու մասին, որն «էր ազգաւ տաճիկ... ապստամբէր թագաւորէն» և այլն, հավաստելով, որ նրա մասին պատմությունները բազում են։

Եղիա Մուշեղյանի ձեռագիրն աննկատ չի մնացել մասնագետներից. նրան անդրադարձել են մի շարք հետազոտողներ (Խ. Սամվելյան, Ա. Երևանլի, Գ. Թարվերդյան, Մ. Սեիդով, Ա. Աբրահամյան և այլն), գիտական պարբերականներում հրատարակվել են մի շարք բանաստեղծություններ, որոնցից նշելի են Միրանի ադրբեջաներեն բանաստեղծությունների հրատարակումը Մ. Սեիդովի կողմից[28], Քյոռօղլու 13 երգերինը՝ կատարված Ա. Աբրահամյանի և Գ. Գաբրիելյանի կողմից[29]։

Ինչպես տեսնում ենք, ցարդ կատարվածը սկիզբն է միայն և ժողովածվի ամբողջական հրատարակության անհրաժեշտությունն անժխտելի է։ Այն շահեկանորեն կհարստացնի գրականագիտության աղբյուրային բազան նոր միավորով և մասնագետներին հնարավորություն կընձեռի համակողմանիորեն հետազոտելու դրական մի ինքնատիպ մատյան։

Այսպիսով. ժողովածուն նյութ է տալիս, նախ, միջնադարյան տաղերի հետազոտման, մերձավորարևելյան գրականությունների պատմության, ժողովուրդների գրական-մշակութային առնչությունների ուսումնասիրման համար. ծանոթացնում է մեզ հայտնի բանաստեղծների նոր ստեղծագործություններին, ներկայացնում նոր անուններ ու նրանց ստեղծագործություններից նմուշներ, պատկերացում է տալիս XVIII դ. առաջին քառորդում Պարսկաստանի և Անդրկովկասի տարածքում ժողովրդի ընդերքում եղած գրական հետաքրքրությունների ու պահանջմունքների մակարդակի, ժամանակի գրական-բանահյուսական «արտադրանքի» մասին. վկայում է մեզ հասած ամենահին տեքստերի մասին, փաստում հայ հեղինակների ադրբեջաներեն, ինչպես և երկլեզու ստեղծագործելու իրողությունը։ Վերջապես, նրա մեջ արտացոլված ենք տեսնում տարբեր ժողովուրդների՝ տարբեր ակունքներ ունեցող գրական-մշակութային արժեքների ու հոգևոր գանձերի փոխներթափանցման ու փոխհարստացման անհերքելի իրողությունը՝ ի հեճուկս և ի հակակշիռ նրանց միջև հարատև ներհակության։

LORETTA DANEGHIAN

COLLECTION OF POEMS WRITTEN IN ARMENIAN LETTERS IN THE ARCHIVES OF YEGHIA MOUSHEGHIAN

Yeghia Mousheghian (Astvatsatourian, Karnetsi) was a prominent figure in the 18th century Armenian culture. He lived in Persia in 1717—1724. The wide range of his interests is reflected in his bulky archives, now in the „Archives of Russia's Foreign Policy", Moscow.

Besides single poems that are found in different piles of the archives, a valuable collection of poems compiled by Yeghia Mousheghian attracts attention. The collection includes about two hundred Armenian, Turkish, Azeri and Persian poems written in Armenian letters by about sixty poets, bards and unknown authors.

The collection presents a valuable material for the history of Armenian. Turkish, Azeri and Persian literatures.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Եղիայի պապենական ազգանունն է Մուշեղյան, սակայն նա որդեգրել է նաև Աստվածատուրյան ազգանունը՝ ըստ իր հայրանվան։ Նրան վերագրվել է եւ երկու ազգանուն՝ Կարնեցի, Էրզրումցի։

2 Մուշեղյանի ծննդյան թվականը ցարդ համարվել է 1689-ը։ Սակայն մի շարք նոր փաստերի օգնությամբ (դիվանի էջերից մեկին արված Եղիայի նշումը, նրա կնիքի դրոշմը հուշագրության էջերին և այլն) մենք ճշգրտեցինք, որ Եղիա Մուշեղյանը ծնվել է 1688 թ. (տե՛ս Լ. Դանեղյան, Եղիա Մուշեղյան Կարնեցի. Թուրքերեն-հայերեն բառարան (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1989, թիվ 3, էջ 100)։

3 Այն պահպանվել է դիվանի B-5 թղթապանակում՝ զանազան մանր հաշիվների շարքում (թ. 18 բ)։

4 Ուղերձները պետք է հանձնվեին Լյուդովիկոս XV-ին, Կարլոս VI-ին և Հռոմի Պապին։

5 Եղիայի ձերբակալության ու հարցաքննությունների ընթացքն արտացոլող գործը պահվում է նույն արխիվում, որտեղ Եղիայի դիվանն է (տե՛ս ստորև)։

6 Եղիա Մուշեղյանի դիվանը պահվում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում, «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ» ֆոնդում (Архив внешней политики России, фонд 100—«Сношения России с Арменией» (այսուհետև՝ АВПР)։

7 *Հուշագրության համառոտ անվանումն է «Անձկություն». մանրաժապավենը պահվում է Մաշտոցյան մատենադարանում։*

8 Հ. Ոսկյան. *Եղիա Աստվածատուրեան Մուշեղեան և իր գրական արտադրութիւնները, Վիեննա, 1927, էջ 71։*

9 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа». т. I. М. 1833, с. 363.

10 Ա. Հովհաննիսյան. *Պետրոս դի Սարգիս Գիլանենց, էջմիածին, 1916. էջ 9, նույնը, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին. 1921. Հավելված, վավ. 3, 4, 6 և այլն։*

11 *Բավարարվենք միայն մի քանի հեղինակների թվարկումով, որոնք զբաղվել են դիվանի առանձին միավորների հետազոտմամբ. Պ. Հարությունյան Բ. Զուլալյան, Ա. Աբրահամյան, Ա. Երևանլի. Հ. Արասլի և այլն։*

12 *«Եղիա Կարնեցու դիվանը», Առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1968։ (Մեր պատրաստած «Եղիա Մուշեղյանի նամականին» ՀՀ ԳԱԱ հրատարակչությանն է հանձնվել 1989 թ. և ցարդ սպասում է տպագրման)։*

13 *Դիվանի տարբեր էջերում մեզ հանդիպել են բեյթեր (2), որոնցում չեշտվում է Եղիայի անունը՝ «Քրիստոսի ծառա էլիաս» և որոնք, հավանաբար, պատկանում են հենց նրա գրչին։ Իսկ ահա նամակներից մեկում Եղիան բանաստեղծություն է նվիրել հացեատիրոջը՝ Հովհաննեսին* (АВПР, д. В—31, л. 31 об):

14 *Դիվանի էջերում, հաշվեմատյաններում, ձեռատետրերում բազում հիշատակություններ կան Եղիայի կողմից գիրք կամ գրքեր գնելու մասին։ Տե՛ս նաև* Բ. Զուլալյան, *Եղիա Մուշեղյանի (Կարնեցու) գրադարանը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1983, թիվ 1)։*

15 АВПР, д. А—3, л. 2.

16 *Պահպանում ենք բնագրի ուղղագրությունը և՛ այստեղ, և՛ բանաստեղծական ձևերը թվարկելիս։*

17 Բ. Զուլալյան, *Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963. էջ 47։*

18 АВПР, д. А—3, л. 158.

19 *Հմմտ. Ա. Տեկանցի, Մ. Աբեղյանի, Ա. Ղուկասյանի, Ա. Մնացականյանի, Մ. Մկրյանի և այլոց կարծիքները* (Ա. Առաքելյան, *Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Երևան, 1975, էջ 288—295։ (Այսուհետև՝* Ա. Առաքելյան):

20 *Աղթամարի ս. Խաչ վանքի թիվ 347 ձեռագրի հիշատակարան (տե՛ս* Ա. Առաքելյան, *էջ 289)։*

21 *Անդ։*

22 Մ. Աբեղյան. *Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1946. էջ 417, 418*; Ա. Առաքելյան, *էջ 288։*

23 *Տե՛ս* АВПР, д. А—3, л. 131, об. 163 об.

24 АВПР, л. 58, об.

25 АВПР, л. 24 об.

26 АВПР, л. 12 об.

27 Հետաքրքիր է, որ այս «դովասանությանը» հաջորդում են չգրված էջեր, որոնց մասին Եղիան բացատրում է. «Տեղի թողումք, որ յորժամ լսեմք այլոց և գրեմք դիպուկ ժամանակի» (անդ)։

28 Մ. Սեիդով, «Հայ բանաստեղծ Միրանի ադրբեջաներեն բանաստեղծությունները («Ադրբեջ. ՍՍՀ ԳԱ Նիզամու անվ. գրականության և լեզվի ինստիտուտի աշխատությունները», Բաքու, 1956, թիվ 9 (ադրբեջաներեն))։

29 Ա. Աբրահամյան և Դ. Գաբրիելյան, Քյոռ-օղլու նորահայտ երգերը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, թիվ 9)։

МАКСИМ ХАМОЯН

ЛИНГВИСТИЧЕСКОЕ НАЗНАЧЕНИЕ И МОДЕЛЬ ОБРАЗОВАНИЯ ПАРЕМИОЛОГИЗМА

(На материале курдского языка)

В специальной литературе широкое распространение имеет мнение, согласно которому устойчивые словосочетания и предложения, в число которых входят и паремиологизмы, образуются по грамматическим (синтаксическим) моделям переменных словосочетаний и предложений и подобно им имеют структуру формально-смысловой сцепки, т. е. являются единствами, одну сторону которых образует сцепление форм компонирующих слов, связанных между собой формальными связями, а другую сторону—сцепление значений компонирующих слов, связанных между собой смысловыми связями[1]. Однако в результате исследования паремиологического материала курдского языка выясняется, что паремиологизмы образуются по особой, присущей только им структурно-семантической модели и реализуются как структурно-семантические элементы, а не структурно-семантические сцепки. Обнаружение этой модели обусловливает коренные изменения во взглядах на природу паремиологизмов. Оно имеет принципиально важное значение для определения паремиологического состава языка и его отграничения, с одной стороны, от других типов устойчивых словосочетаний и предложений и, с другой стороны, от малых жанров устного народного творчества, в число которых включаются они некоторыми исследователями.[2]

Ниже приводится краткое описание этой модели.

Анализ паремиологизма (так же, как и других языковых единиц) в целостном (интегральном) аспекте на уровне причинно-следственных связей выявляет его лингвистическое назначение в системе языка и модель, по которой он образуется.

1. Под назначением имеется в виду свойство удовлетворения потребности: языковые образования, в том числе паремиологизмы, возникают из потребности в общении—в передаче (выражении) определенного идеального содержания—единицы мысли. Из этого следует, что языковые образования имеют свойство удовлетворения потребности, ибо то, что возникает из потребности, обладает свойством удовлетворить эту потребность. Таким образом, рассматривая языковые образования в их связях с порождающей их потребностью, мы обнаруживаем у них особое обособленное свойство—свойство удовлетворения потребности, изначально присущее им. Это свойство, до сих пор не отмеченное в литературе, условно названо автором лингвистическим назначением языкового образования. Оно представляет собой единство двух сторон (аспектов) языкового образования: цели, которой оно служит в системе, и определяющегося этой целью его языкового устройства, обладающего тремя типами особенностей:

а) всеобщих, присущих всем языковым образованиям;

б) общих, свойственных только определенному кругу языковых образований;

в) индивидуальных, присущих только данному конкретному языковому образованию.

Эти три типа особенностей вместе с целью, которой служит языковое образование, позволяют ответить на три разных вопроса, касающихся природы структурно-семантической организации языкового образования: из чего оно состоит (характер материала), что оно отражает или обозначает (характер действительности) и как оно отражает (специфика отражения) и, в зависимости от этого, каков характер его организации. Таким образом, термин «назначение» применя-

ется здесь в двух планах: назначение как совокупность всех частных признаков языкового образования вместе с целью, которой оно служит в системе; назначение как анализ по назначению, как метод, прием установления последнего. Этот метод, условно названный в некоторых работах автора социолингвистическим методом,[3] имеет то преимущество перед существующими в лингвистической литературе методами определения внутренних границ языка, и, в частности, различными методами определения объекта и границ различных научных дисциплин, что приводит к выявлению одного, единого, истинного критерия разграничения различных типов языковых единиц—специфики их назначения: подобно тому как язык отграничен от других общественных явлений спецификой своего назначения, соответствующей специфике породившей его потребности, различные типы проявления языка—языковых единиц на наиболее общем уровне его членения отграничены друг от друга спецификой своего назначения, соответствующей характеру различных типов породившей их потребности в общении. Между тем встречающиеся в языкознании разные методики выделения и анализа языковых единиц, направленные на их научное определение, построены на явном несоблюдении соизмеримости исследовательского направления с задачей исследования. В то время как вопрос «что такое язык?» требует ответа—научного определения, основанного на его назначении, придаваемые ему определения не касаются этого аспекта. В частности, существующие определения языка как средства человеческого общения основаны на специфике его назначения главным образом в части цели его возникновения как его социальной сущности. В отношении же интерпретации самой лингвистической сущности языка—его устройства в аспекте его связей с потребностью они отстают. С другой стороны, в то время как при определении языка главное внимание уделяется социальной стороне его сущности—его функции общения, при определении языковых единиц, наоборот, основной упор делается на лингвистическую сторону их сущности—на осо-

бенности их внутренней структуры или внешние собственно структурные связи. Причиной появления в науке разных определений языка и языковых единиц является не недостаточность их изучения в частных аспектах, не преимущество одних из этих аспектов перед другими, а именно то, что вопрос об определении языка и языковых единиц решается без выбора для этой цели соответствующего общего аспекта исследования. Несоответствие выдвинутых частных аспектов исследования задаче научного определения, приведшее к порождению множества разных определений одного и того же объекта является причиной того, что лингвистика до сих пор не обладает единым критерием определения внутренних границ языка.

Лингвистическое назначение языкового образования не относится к числу его частных свойств, не находится на одном уровне с его структурно-семантическими и функциональными особенностями. В зависимости от этого аспект изучения элементов языка в их связях с потребностью подлежит строгому различению и отграничению от традиционно выделяемых трех аспектов: структурного, семантического и функционального. Главной особенностью такого исследования является то, что позволяет выявить не только особенности внутренней структуры языкового образования, но и цель, которой оно служит в языке. Именно эта особенность и является обязательным условием для соответствия данного подхода задаче исследования, состоящей в раскрытии назначения как объективной основы определения языкового образования. Любое определение языкового образования, не содержащее указание на то, какой цели оно служит, не может быть полноценным определением. Сам вопрос «что такое языковое образование?» уже предполагает ответ, основанный на его назначении.

Единственно объективное определение языка—это определение, основанное на его назначении. Из определения языка, основанного на его назначении, мы выводим определение его единиц. Метод их выделения и анализа по назна-

чению применяется в соответствии с их важнейшим признаком—спецификой их назначения, являющейся критерием их разграничения на наиболее общем уровне членения языковой системы. По этому критерию устойчивые словосочетания курдского языка дифференцируются на следующие разновидности: фразеологизмы, устойчивые речевые единицы, имеющие контактно-устанавливающее назначение, синтаксические, переменно-устойчивые обороты и паремиологизмы.[4]

Паремиологизмами являются устойчивые языковые образования, обладающие паремиологическим назначением. К ним относятся обороты типа: *хэта хар оьн гае пирдан*э (букв.: кривая борозда находится под старым быком), *жьн стуна малейэ* (букв.: женщина—это колонна (опора) дома) и т. д. От других типов устойчивых предложений языка, а также от слов и фразеологизмов они отличаются прежде всего характером отражаемой ими действительности и спецификой самого отражения. Референтами паремиологизмов являются общие закономерности сферы социальной, а нередко и внесоциальной жизни и характеризуют паремиологию как народную философию, как своего рода дидактический кодекс народа в его познавательной деятельности.

Законы общества познаются на основе накопления опыта наблюдений над их отдельными, частными проявлениями, являющимися их конкретными реализациями в действительности. Отдельные частные проявления еще непознанной общей закономерности, встречающиеся повсюду, отражаются в сознании в форме единицы мысли, имеющей структуру суждения. В результате познания связи между подобного рода проявлениями одной и той же закономерности и установления взаимоотношений между самими суждениями о них из последних возникает умозаключение о самой закономерности, являющееся особой формой отражения действительности. Как только умозаключение возникает, оно требует своей языковой объективизации—формы своего выражения. Таким образом, паремиологизм возникает как языковой представитель социальной закономерности на основании умоза-

ключения о ней. Наличие умозаключения, определяющего собой сложный комплекс особенностей, характерных только для строения паремиологизма, является важнейшим и непременным условием его образования. Но при этом оно формируется и становится фактом языка лишь благодаря форме его лингвистической объективации, с которой оно образует неразрывное языковое единство. Что касается формы (материальной оболочки) паремиологизма, то она не представлена в готовом виде, а впервые складывается из имеющихся в языке готовых элементов-слов из потребности в выражении умозаключения. Это означает, что паремиологизм образуется, опираясь, с одной стороны, на результаты познавательной деятельности человека, а с другой —на достижения его языкотворчества. В зависимости от этого определение паремиологизма в качестве двуплановой единицы не представляется полным без указания на взаимоотношения между его двумя планами. Этот аспект изучения паремиологизма особенно важен тем, что ведет к выявлению тех качеств паремиологических значений—умозаключений и пареомиологических форм, благодаря которым они вступают в связь друг с другом и образуют соответствующие паремиологические единства.

2. Если языковое образование возникает из потребности в выражении единицы мысли идеального содержания, то правомерно моделировать процесс его образования в схеме «значение → форма», где стрелкой указывается направление процесса его построения, начинающегося значением и завершающегося формой. При этом в такой схеме выявленная универсальная лингвистическая модель имеет разные типы проявления, которые лежат в основе организации различных форм языкового материала—становления языковых единиц разных систем строения. В частности, в особом типе проявления она лежит в основе образования слов, в другом типе своего проявления она встречается у фразеологических единиц, в специфических формах она лежит в основе образования некоторых типов устойчивых словосочетаний, в число

In conclusion, a list of newly revealed Armenian words which are in daily use in the Turkish dialects is subjoined.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հ. Աճառյան, *Թյուրքերենի ազդեցությունը հայերենի վրա. Թյուրքերենի փոխառյալ բառերը հայերենի մեջ, Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Ը, Վաղարշապատ, 1902։*

2 Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, 1951, Երևան, էջ 282 (այսուհետև ՀԼՊ)։*

3 Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), 1—4, Երևան, 1971—1979։*

4 Турецко-русский словарь (ТРС), М., 1977, с. 694:

5 Կ. Գաբիկյան, *Բառգիրք Սեբաստիոյ գավառալեզուի (ԲՍԳ), Երուսաղեմ, 1952, 443, 586։*

6 ТРС, с. 77:

7 ТРС, с. 55:

8 Հ. Աճառյան, *Գավառական բառարան (ԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 855։ Նաև՝ ԲՍԳ, 444։*

9 Derleme Sözlügü (DS), Ankara, *էջ 3291,*

10 Հ. Աճառյան, *ԳԲ, 712։*

11 ТРС, с. 145, carmak çur *բացատրում է* горькая водка:

12 ТРС, с. 633.

13 ТРС, с. 633.

14 Կ. Գաբիկյան, *Բառգիրք Սեբաստիո գաւառալեզուի, Երուսաղեմ, 1952 (ԲՍԳ), էջ 391—392։*

15 ТРС, с. 594.

16 Հ. Աճառյան, *ՀԱԲ հ. 4, էջ 363—364։*

17 DS. *էջ 1339։*

18 TPC, c. 696.

19 TPC, c. 942.

20 DS, *էջ 653։*

21 DS, *էջ 2056, 2063, 2084. Նաև՝ Hamit Zubeyr Koşay*, Pulur, Turk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1977, *էջ 32, 107։*

22 Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան (ՀԲԲ), Վաղարշապատ, 1912, էջ 379, ԳԲ, էջ 625, ԲՍԳ, էջ 322, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ), Երևան, 1980, հ. 3, էջ 226,* Ս. Պետոյան, *Սասնո բարբառը (ՍԲ), Երևան, 1954, էջ 165,* Ս. Կարապետյան, *Սասուն, Երևան, 1962, էջ 200,* Յ. Սարգըսյան, *Բալու, Գահիրե, 1932, էջ 401,*

23 *Hamit Koşay Zubeyr*, Pulur, *էջ 105։*

24 DS, *էջ 2094։*

25 TPS, *էջ 887*, TS, *էջ 736։*

ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՋՄՈՅԱՆ

ՆՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ ՀԱՅ ԵՎ ՊԱՐՍԻՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Դա իր խոսքն է, գիտակցաբար վերահանդերձավորված օտարի խոսքով և օտարը՝ խորաթափանց վերապրված որպես սեփական

Լ. Մ. Բատկին

Հայ և պարսից միջնադարյան քնարերգությունները իրենց տարատեսակներով (սիրային, կրոնափիլիսոփայական) ժամանակագրական տիպաբանության տեսանկյունից անհամեմատելի են, քանի որ զարգանում էին իրարամերժ ուղղություններով՝ կրոնական և աշխարհիկ։ Երկու հզոր գաղափարախոսական ինստիտուտներով իրարից խորթացած հարևան ժողովուրդները դարերով անհաղորդ էին մնում իրար մշակույթին։ Մի կողմից հոգևոր դասի ուժեղ ազդեցությունն էր կանխում պարսկական աշխարհիկ ոգու մուտքը հայոց մեջ, մյուս կողմից՝ Իսլամի ընդունումից հետո նոր ձևավորվող պարսից պոեզիան որոնումների մեջ էր, այն դեպքում, երբ հայերը վաղուց անցել էին կրոնափոխության ծանր շրջանը և այժմ անընդմեջ շարունակում էին իրենց գրական ավանդույթները։ Այդ ամենով հանդերձ, պարսից պոեզիայի աշխարհիկ ոգին էական դեր էր խաղում տարածաշրջանում։ Հարևան Վրաստանը զերծ չէր մնում այդ ազդեցությունից։ Նիկողայոս Մառը այդ կապակցությամբ նկատում է, թե երբ մոնղոլների օրոք, որոնք, ի դեպ, առավելապես հանդուրժող էին քրիստոնյաների նկատմամբ, կապը թուլացավ պարսիկների հետ, ապա այդ շրջանում Վրաստանը չտվեց և ոչ մի աշխարհիկ գրող[1]։ XIII—XV դարերում տարածաշրջանում սոցիալ-պատմական փոփոխությունների, ժո-

ղովրդական շարժումների, կրոնամիստիկական գաղափարների փոխներթափանցման, ժողովուրդների անմիջական շփումների, հայոց մեջ հոգևորականության կողմից ճնշման թուլացման հետ հայոց պոեզիայում ձևավորվում էր աշխարհիկ սկիզբը, որը բազմազան դրսևորումներով էր հանդես գալիս։ Անթաքույց է դառնում մեր տաղասացների՝ Կոստանդին Երզնկացու, Գրիգորիս Աղթամարցու, Հովհաննես Թլկուրանցու և այլոց ծանոթությունը պարսկական պոեզիայի նմուշներին։ Գրիգորիս Աղթամարցու ժառանգության մեջ պահպանված մի քանի տաղը ցույց են տալիս, որ նա ծանաչել է պարսկական պոեզիան՝ հատկապես «խայտաբղետ» կոչվող բանաստեղծությունների ձևը, որոնք դրվում էին ընդմիջվող պարսկերեն, թյուրքերեն, արաբերեն լեզուներով։ Դա այնքան տարածված երևույթ էր, որ պոետիկայի տեսության մեջ անվանում ուներ՝ «Մոլամաթ՝ խայտաբղետ», և դիվաններում հատուկ տեղ է զբաղեցնում[2]։

Աղթամարցու պոետիկայում ակնհայտ է պարսից պոեզիայի հետ ընդհանրության մի քանի ձև, որոնցից մեկը թախալոսն է, գրական կեղծանվան փաստումը, որը մենք նկատել ենք դեռևս Կոստանդին և Հովհաննես Երզնկացիների մոտ։ Դա պարսկական ղազալի պարտադիր կանոններից մեկն էր, ուշագրավ մի երևույթ, որը վերջնականապես կայացավ XIII դ. և բանաստեղծական «ես»-ի հաստատման և անհատականության դրսևորման եղանակներից մեկը դարձավ։ Հայ տաղերգության մեջ մենք արդեն ծանոթ ենք այդ երևույթին, որը ակրոստիքոս է կոչվում։ Դրա տարբերակները՝ ծայրակապը, գլխակապը, մեր պոեզիայում արտահայտում են հայոց տառերի նկատմամբ ունեցած պաշտամունքը, որը տարբեր գեղարվեստական երանգավորում է ստանում։ Գրիգորիս Աղթամարցու որոշ տաղերում վերջին տանը, կամ էլ տողերի առաջին տառերով հիշատակվում է Գրիգորիս անունը։

Սորին սպասաւոր է և աշակերտի
Գրիգորիս, մականունս է Աղթամարցի[3]։

Հայտնի «Այրեն մինչև Քեն» բանաստեղծությունը[4] մեզ հիշեցնում է XI դ. բանաստեղծ Մանուչեհրիի բանաստեղծության մի պատկերը՝ նվիրված թյուրք Շահրիարին, որում նմանօրինակ գեղարվեստական լուծում կա. արաբական (պարսկական) այբուբենի առաջին և վերջին տառերն են, որը սկիզբ և վերջ է նշանակում.

Աղթամարցի

Այբէն մինչև ի քէն քենէ գանգատիմ ես
Թաներս ես յում ասեմ, երբ դու լըսող չես[5]։

Մանուչեհրի

Թյուրքական ձևով դու լավ ես երգում
Ինձ համար թյուրքական և օղուզական երգեր երգիր,
Ամեն լեզվով որ խոսում ես, գու կարող ես երգել,
Դու Ա-ն ու Հ-ն ես (ամեն ինչի)[6]։

Գրիգորիսի պոեզիայում տեխնիկական վարպետությունը ցուցադրելու երևույթը ակնհայտ է։ Տաղերից մեկը, իր բոլոր քառյակների առաջին տառերով կրկնում է հայոց այբուբենը[7]։ Վարպետության մտածված և դիտավորյալ ցուցադրումով Աղթամարցին ընդհանրություններ ունի պարսիկ բանաստեղծների հետ, որոնք «պատասխան» անվան տակ նոր պատկերի և բարդ հանգի որոնումներում երբեմն զոհում էին բանաստեղծության միտքը։ XII դարի արքունական բանաստեղծ Ամաղը այնպիսի կատարելության էր հասցրել պատկերի բարդությունն ու ձայնանվագի տեխնիկան, որ նրա բանաստեղծությունը որպես նմուշ մտել է Ռաշիդ-ադ-Դին Վաթվաթի պոետիկայի տրակտատ[8]։

Այս օրինակները, բացի մեզ հետաքրքրող բանաստեղծական միկրոպոետիկայի ընդհանրությունից, ցույց են տալիս նաև, որ թյուրքերեն երգերը XII դ. պարսիկ ժողովրդի մեջ արդեն գործածական են եղել, տարածված, որ բոլոր լեզուները տարածաշրջանում մատչելի են եղել և ընդունված։ Մի հանգամանք, որ մենք ավելի ուշ՝ XIV—XV դդ., տեսնում ենք հայոց հայրենների բառարանում, որից և սնվում էին մեր տաղերգուները։ «Երբ փեսային կողմի խնամի կանայք աղջկան կողմը կերթան, թմբուկով տաճկերեն չորս, հինգ հարեն (երգ) կերգեն, յետոյ կսկսին գովաբանական երգերը, որ սովորաբար տաճկերեն են և որոնց շեր կըսեն»[9]։ Շերը բանաստեղծության պարսկերեն անվանումն է[10]։

Հենց այդտեղից էլ նրանք մուտք էին գործում էլիտար՝ գրավոր գրականություն և, սինթեզվելով պաշտոնական պոեզիայի ավանդույթների հետ, գրավոր գրականության մեջ ձևավորում էին

նոր որակ։ Այստեղից էլ սերում են Աղթամարցու և մյուսների «խայտաբղետ» բանաստեղծությունները՝ գրված պարսկերեն, հայերեն և թյուրքերեն լեզուներով։

Պարսիկ բանասեր Զիա-ադ-Դին Սեջադին այդ պատմական ժամանակաշրջանը նշում է որպես Անդրկովկասի քրիստոնյաների ու մահմեդականների ամուր կապերի շրջան։ Նա այդ առիթով օրինակ է բերում Խաղանիի բանաստեղծությունները.

Խաղանի

Որբ ես հասնում եմ Հայաստան,
Հայաստանի ժողովուրդն ինձ գինով է դիմավորում[11]։

Մեզ հայտնի է Խաղանիի այդ ոգով գրված մեկ այլ բանաստեղծություն, որը հաստատում է արևելյան ժողովուրդների բարեկամությունը.

Աբխազիայում (միշտ) բաց է դուռը,
Եվ հռոմների օթևանը՝ պատրաստ...[12]։

Ինչպես տեսնում ենք, հետազոտողները չեն շրջանցում փոխազդեցությունների խնդիրը։ «Կարելի է հաստատել, թե պարսկերեն տաղերը, զորոնք կը գտնենք Աղթամարցւոյ տաղերուն մէջ, փոխառություն ըլլան պարսիկ բանաստեղծություններե, բայց կըրնանք ըսել, թե անոնք յօրինուած են նմանութեամբ պարսիկ տաղերու, ուստի ենթակա պարսկական ազդեցութեան»[13]։

Հարկ է կրկին անդրադառնալ Երզնկացու և Աղթամարցու պոեզիային և ճշտել, թե ինչ չափանիշներ է ներառում «ազդեցություն» հասկացությունը, և արդյոք պարսկաբանությունների բոլոր տեսակները ազդեցություն պետք է համարել, թե առավել համապատասխան որակում կա մեզ հետաքրքրող երևույթի համար։

Երզնկացի.

Այր մին կայր... ու Շահնամայ ասէր ձայնով.
Նա եղբայրք խնդրեցին, թե ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ.
Ես շինեցի զբանքս զայս, ի Շահնամայի ձայն կարդացէք։

Դա նշանակում էր՝ գրել հայ բանաստեղծություններ պարսկական ձևով, համարեցնել հայոց բանաստեղծությունը Շահնամեի չափին։ Այն տեսակը, որը Աղթամարցու պոեզիայում մենք անվանում ենք «խայտաբղետ» տաղեր, գրված ընդմիջվող պարսկերեն, հայերեն և թյուրքերեն լեզուներով, դիտավորյալ նմանակում է, ոճապատճենում, որտեղ նույնիսկ ջանք չի գործադրվում թաքցնելու ազդեցությունը։

Երբ Պետրարքայի բանաստեղծություններից մեկում կրկնվում է Վերգիլիոսի մի տողը և նրան հայտնում են այդ մասին, նա զարմանում է, իսկ հետո՝ արդարանում, ասելով՝ թե, թող ների իրեն Վերգիլիոսը, քանի որ ինքն էլ ժամանակին օգտվել է Հոմերոսից և Լուկրեցիոսից[14]։ Սա ակամա «ընդօրինակություն» է, մեծագույն վարպետի ազդեցություն, իսկ մենք ուզում ենք քննել ազդեցության այն ձևը, որը «նմանակում» անունն է կրում և կատարվում է դիտավորյալ, անսքող, գուցե իր մեջ երբեմն կրում է «պարոդիայի»[15] երանգ։

Նմանակության և ոճապատճենման (Stilisation) երևույթը հատուկ է բոլոր ժամանակներին և բոլոր գրականություններին։ Միջնադարյան արվեստագետները նմանակում էին անտիկ արվեստին, հետնորդները նմանակում են իրենց հայտնի նախորդներին։ Հայ գրականության մեջ այդ երևույթը նույնպես տարածված և ընդունված էր։ Հայտնի է, որ Նարեկացու հաջորդները ձգտել են նմանվել նրան, ինչպես նաև մեր մատենագիրները ձգտել են նմանվել Ագաթանգեղոսին, Խորենացուն և հունաբան փիլիսոփա գրողներին[16]։

Արևելքում նմանակության միջնադարյան պատկերացումները և չափանիշները այնքան անկաշկանդ ու անսահմանափակ էին, որ գերմանացի արևելագետը սրամտորեն նկատում է. «Կարելի է կարծել, որ բոլորը պատճենում էին իրար, և որ գրագողությունը մեծապես օգտագործվում էր և նույնքան էլ մեծապես՝ ներվում»[17]։

Պարսից պոետիկայում նմանակության երևույթը դրված էր պոեզիայի ծննդաբանության հենց հիմքում։ Այլապես ինչպես հասկանալ Նեզամի Արուզի Սամարղանդիի՝ պոետիկայի գիտակի այն խոսքերը, թե բանաստեղծական արվեստում ոչ մեկը չէր հասնի կատարելության, մինչև անգիր չիմանար 20.000 տող իր

նախորդների և 10.000՝ իր ժամանակակիցների բանաստեղծություններից[18]։

Նմանակումը կատարվում է ի լուր ամենքի։ Այդ են ցույց տալիս համաշխարհային գրականության գանձարանը մտած բազմաթիվ նմանակումներ (Գյոթե-Հաֆեզ... Պուշկին-Ղորան ևն)։ Պարսկական պոեզիայում նմանակման երևույթը այնպես էր օրինականացված, որ դրա տարատեսակների համար պոետիկայի արվեստում հատուկ տերմիններ գոյություն ունեին, իսկ դրանց տարբերակման չափանիշներն ու իրարից օգտվելու սահմանները պոետիկայի գիտակների համար քննության նյութ էին հանդիսանում։ Դրանցից են՝ թաղլիդը, նազիրեն, ջավաբը, թազմինը ևն, հասկացություններ, որոնց սահմանազատման եզրերը առաձգական են և աննշան տարբերություններով նույն երևույթն են արտացոլում։ Օրինակ՝ պատասխանը (ջավաբ) լայն ընդգրկում ուներ, առավելապես տարածված էր մրցույթների ժամանակ և հաճախ էքսպրոմտի ձև էր ստանում։ Թաղլիդը վերարտադրություն էր, սկսած պատկերի կրկնությունից, վերջացրած բանաստեղծական չափով կամ հանգով։ Նազիրեն պետք է լիներ նույն հանգով և նույն չափով։ Նմանակումը տարբեր ֆունկցիաներ էր իրականացնում։ Եթե այն պատասխան էր ինչ-որ մեկի հանգի կամ չափի կատարելությանը և վարպետությանը, ապա նմանությունն այնքան ընդգծված էր լինում, որ հարկ չէր լինում փնտրել բնօրինակը։ Վերջինիս յուրահատկությունից՝ ոճից, հանգից, չափից, մոտիվից հասկացվում էր, թե ում է ուղղված «պատասխանը»։ Եթե հանձն առած մոտիվին (մասնի), պատկերին չէին կարողանում առավել փայլուն և անսպասելի լուծում տալ, կարող էին «պատկերի գող» անվանվել[19]։

Նմանակման մեկ այլ ձևը «թազմինն է», որի մասին պոետիկայի հայտնի տեսաբան Ալ-Ռադույանին գրում է. «Թազմինը» այն է, երբ բանաստեղծը մեկ ուրիշի բեյթը տեղադրում է իր բանաստեղծության մեջ, որը կատարվում է հարգանքից և ոչ թե գողանալու ցանկությունից...»[20]։ Այստեղ կարևորն այն է, որ մեջբերված բեյթը կապակցվի սեփականի հետ և նախորդ հեղինակի գաղափար-պատկերը ներկայանա նոր որակով։ Երբ մեջբերումը ճկուն և նրբաճաշակ լուծում էր ստանում, պոետիկայում դա կոչվում էր «հրաշալի մեջբերում» (հոսն-է թալիլ)։ Արդեն մշակված

խորհրդանիշների, մակդիրների, փոխաբերությունների համակարգում, ինչպես նաև կայուն մոտիվների շրջանակում ստեղծագործում էր բանաստեղծը՝ իր օժտվածության սահմաններում խորացնելով, ընդարձակելով, նորոգելով հինը՝ ավանդականը, քանի որ նույն մոտիվի տարբեր կրկնություններն էին խրախուսվում արևելյան աշխարհում։ Արքունիքը և ֆեոդալական տունը, կանոնակարգված կենսաձևով, պրոֆեսիոնալ բանաստեղծների ինստիտուտով հանդերձ, զարկ էր տալիս հենց այդ ճարտար և նրբաճաշակ տեխնիկային։ «Նկարագրվում էր ամեն ինչ, սկսած ծաղկից և վերջացրած ոսկե գավաթով, ըստ որում հիմնական նպատակն էր՝ անել փայլուն և անսպասելի համեմատություն, ընդգծել ուրիշների կողմից չնկատված մի նոր հատկանիշ և բնորոշում»[21]։ Արաբ տեսաբաններից մեկը, բանաստեղծներից մեկի մի բեյթի մասին ասում է. «Դա լավագույնն է բոլոր այդ մոտիվով ասվածների մեջ»[22]։

Այսպիսով, հինը հանդես էր դալիս նոր, տվյալ բանաստեղծին յուրահատուկ գծերով։ Դա կրկնություն չէր համարվում, արտագրություն՝ նույնպես, այլ դառնում էր այն նորը, որը ստեղծվում էր ավանդականի, արդեն ծանոթի և նորի հանդիպումից։ Միշտ չէր, որ նմանակումը հաջողություն էր ունենում։ Ռուդաքիի հայտնի «Հեռու հեռվից Մուլյան գետի բույրն է գալիս» բանաստեղծությունը նմանակումների մի շարք ստեղծեց պարսկական պոեզիայում, որոնց նվիրված պարսիկ բանասեր Մոհամադ Մոինի հիանալի հոդվածը թվարկում և քննության է առնում գրականության հայտնի մոտ 12 տարբերակ՝ բանաստեղծներ Մոեզիի, Սանայիի, Ջալալ-ադ-Դին Ռումիի, Մալեք-ալ շոարա Բահարի ևն[23]։ Նմանակվում էր ոչ միայն հանգը, պատկերը, բառը, թեման, այլ նաև՝ ժանրը։ Նեզամիի «Խամսեն» (Հնգամատյան) իր ետևից բերեց նմանակումների մի հզոր հոսանք ողջ արևելյան գրականություններում։

Գրիգորիս Աղթամարցու «խայտաբղետ» տաղերը նոր երևույթ էին մեր պաշտոնական գրականության մեջ, որը մենք դիտավորյալ նմանակում ենք համարում և ոչ թե ազդեցություն։ Դա հարգանքի տուրք էր պարսից դասական պոեզիային, դա ցույց էր սեփական վարպետության և գիտելիքների։ Նմանակողը ընդգծում էր նմանակվող նյութի արժեքը, որտեղ նմանակության նյու-

թը դառնում էր «փորձաքար»՝ իր կարողությունններն ու տաղանդը ցուցաբերելու։

Աղթամարցի.

Իմ շուշան ծաղիկ կարմիր վարդըն ղու
Ջրրա դիր ամատի, բև մարամ բե թո (Ինչո՞ւ ուշացար,
հիվանդ եմ առանց քեզ)

Կամ՝

Պրսթանամ թաղպեհ բփուշամ խրղա (Թագբեհ[34] կվերցնեմ,
քուրձ կհագնեմ)

Կամ՝

Տուշմանի թո րա շավադ ճիդարխուն (Թշնամուդ սիրտը
թող արյունի)

Կամ

Պութիմ խիրաթմանդ քարդի դիվանայ (Խելամիտ մարդ
էի, դարձրիր խելագար) ևն։

Այս պարսկերեն ձևերը հետևողականորեն գծագրում են մեզ ծանոթ jaime մոդելը իր ավանդական ատրիբուտներով. մեռնում եմ, հիվանդ եմ, կրոնափոխ, դավանափոխ կլինեմ, ղու գեղեցիկ ես, արյուն ես հեղում, խելագարություն բերում ևն։ Սաադիի խայտաբղետ ղասիդները՝ ընդմիջվող արաբերեն և պարսկերեն բեյթերով, նույն մոդելն ունեն։ Մինչև օրս հայտնի չէ, թե Աղթամարցին ում է նմանակում, ում պատկերներն է կրկնում կամ մեջ բերում։ Կարծում ենք, որ նրա ջանքերն ուղղված են սիրային թեմայի նմանակմանը, կաղապարված նրբաճաշակ ոճին։ Այդ են հաստատում «խայտաբղետ» տաղերի հայերեն հատվածներում համեմատությունների խտացումները, որը բնորոշ էր նաև Նարեկացու, Շնորհալու պոեզիային՝ Արեգակ, Լուսին, Արուսյակ, առավոտ, շուշան, ծաղիկ, վարդ, կանթեղ, ճոհար ևն, որոնք պարսկերեն զուգահեռների հետ միասին՝ շամս-արև, ճոհար-լալ, Արուսյակ-Զոհալ ևն, դեկորատիվ սիրային քնարերգության մի նոր տարատեսակ են ստեղծում։ Այստեղ չենք կարող չհիշատակել Ն. Մառի այն դիտարկումը, թե Աղթամարցին պճնազարդվում է իր լեզվական գիտելիքներով՝ երեք լեզվով[25]։

Ինչպես տեսանք, նմանակման երևույթը ընդհանուր տիպաբանական է։ Հայտնի է, որ վրացական արքունիքում կազմակերպված խնջույքներին մասնակցում էին տարբեր ազգերի և դավանանքների պալատական բանաստեղծներ, որոնք տիրապետում էին արևելյան բազմաթիվ լեզուների։ Խաղանիից մեզ հասած մի քառյակը, որտեղ պարսկերենը ընդմիջվում է[26] վրացերենով, կամ Սուզանիի բանաստեղծությունը, ընդմիջվող թյուքերեն արտահայտություններով, դրա փայլուն ապացույցն են։

Սուզանի.

Ով լուսնադեմ թրքուհի, ինչ կլիներ, որ գայիր գիշերը
Իմ խրճիթը և ասեիր «ղոնաղ քերեք»։

. . . .

Վարդերես թրքուհի, թեպետ ես թյուրք չեմ
(Սակայն) գիտեմ, որ թյուրքերեն ծաղիկը չեչակ է
(կոչվում)[27]։

Նմանակումները կատարվում էին տարբեր մակարդակներով։ Գրիգորիս Աղթամարցու պոեզիային հատկանշական են լեզվական և պատկերամտածողական ոճապատճենում։ Այդ ամենով հանդերձ Աղթամարցին հարազատ է իր գաղափարախոսությանը, իր հավատին, իր էթնոմշակութային ավանդույթներին։

Վաճառական մի հայ և յոյժ ճարտասան
Մխիթար Բաղիշեցի և աստուածածան
Գընաց նա ի սահման Ատըրպատական,
Ի Ղում ե ի Շիրազ և ի Խորասան...

. . . .

Ասեն դու մուսուլման յազգե Մահմետին,
Ի բաց թող ըզ Քրիստոս և զհաւատ նորին
Թե ոչ՝ տանջենք զքեզ սաստիկ ահագին
Ասաց... «Ես ոչ փոխեմ զլոյս խաւարին»[28]։

Սա ոչ միայն ցույց է տալիս այն շարժումն ու կապը, որ կար արևելյան աշխարհի ժողովուրդների մեջ, այլ նաև քրիստոնեության հաղթարշավ է, որտեղ մոռացության են տրված կրոնը սիրուհուն ստորադասելու կաղապարված, կանոնարկված ձևակերպումները։

Այսպիսով՝ XIV—XVI դդ. աշխարհականացող հայոց բանաստեղծական արվեստում ձևավորվում էր սիրային քնարերգությունը, որը ուներ կաղապարված և կանոնիկ մոտիվներ ու թեմաներ, բառապաշար, պատկերավորության համակարգ, գեղագիտություն և հոգեբանություն։ Այն պարսկական, արաբական և այլ գրականությունների հետ ունեցած տիպաբանական ընդհանրություններով և ուղղակի փոխազդեցություններով հանդերձ մտնում է միջնադարյան դրականությունների համակարգի մեջ և զարգանում նրա ընդհանուր օրենքներով, սեփական բանաստեղծական արվեստի լավագույն ավանդույթների հիման վրա։ Նմանակումը այլ էթնոմշակութային համակարգի յուրացման ձևերից մեկն էր, որը բնորոշ է բազմաթիվ միջնադարյան գրականությունների և դրանց զարգացման և նորոգման փուլերից մեկն է։ Անցումը միջին հայերենին, մերձեցումը ժողովրդական արվեստին և դրանց միջոցով պարսկական պոեզիային հատուկ ձևերի, ոճի, բառապաշարի, մոտիվների մուտքը հայոց մեջ գալիս են հաստատելու այն թեզը, որ միջնադարյան մեր տաղերգությունը Նարեկյան շրջանից հետո, համաարևելյան միջավայրում զարգացման մեծ ճանապարհ է անցել և բյուրեղացել որպես փոխազդեցությունների ձև՝ «սինթեզ»։

ARMANUSH KOZMOYAN

THE PHENOMENON OF STILIZATION IN THE MEDIVEAL ARMENIAN AND PERSIAN LITERATURE

In the 13 –15th centurles tha peoples of the Middle East lived in an ethnocultural solidarity. They mastered each other's languages, moreover, were informed about each other's tliterary traditions. A form of stilization in a poem is one of the evidences of such mutual influence. The Armenian medieval poet Grigoris Aghtamartsi created some of his poems by using three languages (Turkish, Persian, Armenian) in the same poem. This phenomenon was widespread and is called „molamma" in the Persian poetry.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Հմմտ. Н. Марр.* Возникновение и развитие древнегрузинской светской литературы. ЖМНП, 1899, с. 232.

2 *Տե՛ս* Քոլլիյաթ է շեյխ Սաադի, *Մոհամադ Ալի Ֆուրուղի, Թեհրան, էջ 491։*

3 Գրիգորիս Աղթամարցի. *Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Մ. Ավդալբեգյանի, Երևան, 1963, էջ 127։*

4 *Վ. Ակինյանի կարծիքով այս ուղերձ է իր վարդապետին։*

5 Գ. Աղթամարցի, *նշվ. աշխ., էջ 160։*

6 *Արաբական այբուբենի առաջին և վերջին տառերն են. տե՛ս Դիվան է Մանուչեհրի, Մոհամադ Դաբիր Սայաքի, Թեհրան, 1968, էջ 138։*

7 Գ. Աղթամարցի, *նշվ. աշխ., էջ 188։*

8 *Ամաղ.*

Եթե մրջյունը խոսել իմանար և մաղը հոգի ունենար,

Ապա ես այդ մրջյունն եմ, որ խոսել գիտի և մաղը՝ որ հոգի ունի։ Այստեղ ակնհայտ մ, ղ, ա *տառերի ձայնանվագը՝ «ագյար մուրի սոխան գույաղ, վը ղյար մուի ռավան դարադ, ման ան մուրի սոխանգույամ, վը ան մույամ, քե ջան դարադ». Տե՛ս Рашид-ад-Дин Ватват.* Сады волшебства в тонкостях поэзии. Перевод с перс., исследование и комментарии Н. Ю. Чалисовой. М., 1985, с. 132.

9 Տ. Ճանիկյան. *Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1885։*

10 *Գրիգորիս Աղթամարցու տաղերի պարսկերեն հատվածների վերլուծությունն է նվիրված Բ. Զուլալյանի «Հայ-իրանական գրական առնչությունները» հետազոտության 4-րդ գլուխը։ Երևան, 1963։*

11 *Շար աշար-է խաղանի Շիրվանի Զիա ադ-Դին Սեջադի, Թեհրան, 1980, էջ 145։*

12 *Տե՛ս* Խաղանի, *Դիվան, էջ 21—22։*

13 Գրիգորիս Ս. Կաթողիկոս Աղթամարցի. *Կեանքն եւ քերթուածները, գրեց Հ. Ներսես Վ. Ակինեան, Վիեննա, 1958, էջ ճխղ։*

14 *Հմմտ. А. Баткин.* Итальянское возрождение в поисках индивидуальности. М., 1989, с. 32—40.

15 *Այդ մասին տե՛ս Ю. Тынянов.* Поэтика, история литературы, кино, М., 1974, с. 284.

16 *Տե՛ս* Վ. Առաքելյան, *Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 22։*

17 *Հմմտ. Г. Э. фон Грюнебаум.* Основные черты арабо-мусульманской культуры. М., 1981, с 128.

18 *Низами Арузи Самарканди.* Собрание редкостей или четыре беседы. М., 1965.

19 *А. А. Стариков.* К вопросу о традиции эпической «Пятерицы» в литературе восточного средневековья. В сб.: Взаимосвязи литератур Востока и Запада. М., 1961, с. 60.

20 *Рахим Мусулманкулов.* Асрори сухан, Душанбе, 1980, с. 7.

[21] *Е. Э. Бертальс.* Персидская поЭзия в Бухаре 10 в М.—Л., 1935, с. 9:.

[22] *А. Б. Куделин.* Средневековая арабская поэтика. М., 1983, с. 70.

[23] *Տե՛ս* Մոհամադ Մուին Եք դասիդեյն Ռուդաքի, *Մաշաւեյն դանեշքյադեյն ադաբիյաթ, Թեհրան. 1959, 2—3, էջ 73։*

[24] *Թադրեհը մահմեդականի պարտադիր տարրերում է։*

[25] *Н. Марр.* Из летней поездки в Армению, с. 31.

[26] *Այդ մասին տե՛ս* *К. И. Чайкин.* Из грузино-иранских связей. В сб.: Руставели, Тбилиси, 1938, с. 23.

[25] Դիվան -է Հաքիմ Սուզանի Սամարղանդի, *Նասր-ադ-Դին Շահ Հուսեյնի, Թեհրան։*

[28] Գ. Աղրամարցի. *նշվ. աշխ., էջ 124։*

ԼԱՈՒՐԱ ՇԵԽՈՅԱՆ

ԻՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ՄԻ ԷՋ

(Մոհամադ Ալի Աֆրաշթեի «Թափառիկ սիրամարգեր» պատմվածքը)

Պարսից նորագույն գրականության պատմության 40—50-ական թվականների սկիզբն ընդգրկող ժամանակահատվածի մասին, հատկապես մեզանում, շատ է գրվել։ Իրանում ծավալված ազգային-ազատագրական պայքարի առավել նշանակալից այդ տարիները վերելքի շրջան էին նաև պարսից գրականության համար, որն իր արտահայտությունը ստացավ գրականության խորացմամբ, արձակի, մասնավորապես, նրա փոքր ձևերի, ինչպես նաև հրապարակախոսության և լրագրային ժանրերի բուռն զարգացմամբ։

Երկրի գրական գործընթացում տեղի ունեցած նշանակալից տեղաշարժերով հարուստ այսպիսի ժամանակաշրջանը, որքան էլ ուսումնասիրված, դեռևս ունի էջեր, որոնց լուսաբանումն, անշուշտ, կօգնի ավելի հանգամանալից և համակողմանի պատկերացում կազմել նշված տարիների Իրանի գրականության արդիականության եզրերի մասին, մանավանդ որ այդ արդիականությունը իր հասարակական հաստատումը հարկադրված էր նվաճել դարն ապրած ավանդույթների և գաղափարական հետադիմության դեմ դժվարին պայքարում։

Այս իսկ տեսակետից պարսից գրականության նշված ժամանակաշրջանի պատմությունն, անկասկած, բազմաթիվ անակնկալներ ունի պահած, հատկապես, եթե նկատի առնվի երկրում վերջին 40—45 տարում փոքր ընդմիջումներով կրկնված քաղաքական ռեակցիայի և հետապնդումների հանգամանքը։

Այսպիսի մի անակնկալ էր Իրանի դրականության ակնառու ներկայացուցիչ, բանաստեղծ, արձակագիր, ճանաչված լրագրող, երգիծաբան Մոհամադ Ալի Աֆրաշթեի «Թափառիկ սիրամարգեր» (Թավուսհայե սայար) պատմվածքը։

Պատմվածքի հեղինակային ձեռագիրը պահպանվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նախկին աշխատակից, հանգուցյալ Արտաշես Ավանեսյանի արխիվում։

Այն կազմված է 16 ստանդարտ սպիտակ էջերից, մատիտագիր է, նասթալիղ պարզ ձեռագրով։ Բնագրի վրա եղած ջնջումներն ու միևնույն ձեռագրով կատարված ուղղումները թույլ են տալիս եզրակացնել, որ այն հեղինակային միակ պահպանված օրինակն է։

Վերնագրից վեր կա մակագրություն. «18 հունիսի 1958 թ., Սոֆիա», աջ անկյունում՝ «Մոհամադ Ալի Աֆրաշթե»։

Պատմվածքը ամենից առաջ ուշադրություն է գրավում Աֆրաշթեի ամբողջ ստեղծագործությանը բնորոշ ընդգծված սոցիալ-քաղաքական հնչեղությամբ։ Այդպիսի ուղղվածություն ունեին նրա՝ 1945 թ. լույս տեսած «Ա՜յ թե լավ ասացիր» («Այ գոֆթի») և 1952 թ. Փաբերահնեե Ռեշթի ծածկանվամբ ստորագրված «Բախտախնդիր» («Մաջերաջու») բանաստեղծական ժողովածուները։ Գրողի մինչվտարանդիական շրջանի արձակ ստեղծագործության հետ անտիպ պատմվածքն այս եզերվում է ինչպես մտահղացման, այնպես էլ գեղարտահայտչական համակարգի իրողություններով,

Դեռևս 1950-ական թվականների սկզբին իր հրատարակած «Չելենդար» (Դարբին) ամսագրում լույս տեսած ֆելիետոններում և պամֆլետներում գրողը անխնա մերկացնում էր զարգացող երկրներին, այդ թվում և Իրանին ցույց տրվող ամերիկյան «օգնության» ծրագրի գիշատչական, թալանչիական էությունը, հեռահար ստրատեգիական նպատակները։

Այդ տարիներին՝ Իրանի դեմոկրատական հասարակության տրամադրություններին բնորոշ հակաիմպերիալիստական այս ուղղվածությանը, որ հատուկ էր ժամանակի առաջատար գրողների մեծ մասի ստեղծագործությանը (Հեդայաթ, Ալավի, Բեհազին և ուրիշներ), հայրենասեր գրողը հավատարիմ մնաց նաև իր՝ հայրենիքից հեռու ապրած տարիներին, որի վկայությունն է 1963 թ.

17—23

Սոֆիայում հեռմահու հրատարակված նրա «Շահի քիթը» երգիծական պատմվածքների ժողովածուն[1]։

Դրա վկայությունն է, վերջապես, նաև «Թափառիկ սիրամարգեր» պատմվածքը։

Պատմվածքի թեման բացառիկ է Իրանի գրականության համար։ Ո՛չ մինչև Աֆրաշթեն, ո՛չ էլ նրանից հետո, այն էլ այդպես «բացահայտորեն», պարսից գեղարվեստական գրականությունը չի անդրադարձել բանակի թեմային։ Թեմայի վերաբերյալ քաղաքական հասկանալի արգելքը, ինչ ասել կուզի, տարածվում էր ինֆորմացիայի բոլոր աղբյուրների վրա։

Պատմվածքի մտահղացման կենսական դրդառիթների առումով ավելի քան խոսուն է գրվելու թվականը (1958)։ 1955 թ. Իրանը միացել էր Բաղդադի ռազմական պակտին, 1957 թ.՝ հավանություն տվել Էյզենհաուերի դոկտրինային։ Հայրենի եզերքից հեռու ապրելու բռնադատված հայրենասեր գրողի համար այս իրադարձությունները անշուշտ պետք է կարևորվեին հայրենիքի սուվերենության սպառնացող իրենց նշանակությամբ։

Հեղինակն իր պատմվածքում նպատակ է դրել պատկերել իրանական բանակի սոցիալ-բարոյական նկարագիրը։

Պատմվածքում այն ներկայացված է իր ամբողջ աստիճանակարգով՝ շարքային զինվորից մինչև բրիգադային գեներալը։ Փոքր, ընդամենը մի քանի էջից բաղկացած պատմվածքի շրջանակներում թեմայի այդպիսի ընդգրկումով գեղարվեստական յուրացումը դժվարին խնդիր էր, և խնդիրն այդ հեղինակը լուծել է երգիծանքի վարպետի իր ողջ հմտությամբ։

Ամենից առաջ խնդրի լուծմանը նպաստել է պատմողի ճիշտ ընտրությունը։

Պատմվածքն այսպիսի ավարտ-շրջանակ ունի. «Սրանից մի երկու տարի առաջ եվրոպական ճեպընթացներից մեկի կուպեում էի, որտեղ ինձ հետ ճամփորդում էին ևս չորս հոգի։ Մեկը թեհրանցի էր, մյուսը՝ անկարացի թուրք, երրորդը՝ բաղդադցի արաբ, չորրորդը՝ պակիստանցի՝ Կարաչիից։ Զրույցի ժամանակ խոսք բացվեց Բաղդադի պակտի մասին։ Ուղեկիցներիցս չեմ հիշում որ մեկը, պատմեց այս պատմությունը»[2]։

Այսպես, ուրեմն, պատմողը դեպքերին ականատես մեկն էր, և պատմվածքի նյութը մատուցվում է բանավոր զրույցին հատուկ

կանոններով։ Ըստ այդ կանոնների, պատումը զերծ է նկարագրություններից և մանրամասներից, որոնք կարող են շեղել ունկնդրի ուշադրությունը, խանգարել՝ հետևել դեպքերին։ Այսպիսով ապահովվում է ունկնդրի, լսարանի լարված ուշադրությունը։

Նույն բանավոր պատումի օրենքներով պատմվածքը չունի մուտք, այն սկսվում է հանգույցով, դրանով իսկ սկզբից ևեթ գրավելով ունկնդիր-ընթերցողի ուշադրությունը։

Ամառային զորավարժությունների ժամանակ հոգնությունից ու շոգից մի պահ ննջած շարքային Ահմադին կողոպտել են։ «Արթնանալով ու իմանալով կատարվածը,—նկատում է պատմողը,— նա կայծակնահարի նման չորացավ տեղում»։ Պատմողի ընկալմամբ, կատարվածը սովորական մի բան է, և նրան չափազանց է թվում շարքային զինվորի խեղճանալն ու սարսափը, մանավանդ, որ չափազանց բարի մարդ էր վաշտի ավագ Մահմուդը։

Եվ պատմողը, որի խոսքը կառուցված է հիմնավորման պարադոքսի սկզբունքով, թվարկում է Մահմուդի բարեսրտության «գումարելիները»։ Նա գիտե, որ բազմաթիվ նման դեպքերում Մահմուդը առանց գլխացավանքի հարթել է խնդիրը. «Նա զինվորին նկատողություն անելուց ու հանդիմանելուց հետո, որպես անհրաժեշտություն, մի լավ կհայհոյեր ու կանպատվեր, թե տեղը դար՝ մի քանի ապտակ կհասցներ, բայց, ի վերջո, իր գրագիրներից մեկի օգնությամբ ու միջամտությամբ, գնալ-գալով գործը կդրսատեր։ Մահմուդը գողացված ապրանքների գինը, դեռ շատ ավելի պակաս պետականից, զինվորից կվերցներ ու ապրանքները զինվորին կվերադարձներ»[8]։

Պատմողը շտապում է հիմնավորել Մահմուդի օրինավոր և բարի լինելը։ Եվ այդ նույնպես արվում է հիմնավորման պարադոքսի եղանակով։ Մահմուդը պետական պահեստից չի գողանում։ Նրա ցուցումով այլ վաշտերի «ցրված զինվորներին» կողոպտում են իր վաշտի վաղաժամկետ զինվորները՝ իրենց կողոպուտը բերելով Մահմուդին։ Բերածի համեմատ «բարեսիրտ» ավագից արձակման թուղթ ստանալով՝ նրանք իրավունք են ստանում գնալ տուն, «իրենց գործ ու բանին»։

Որքան բարի է Մահմուդը իր «օրինապահ» զինվորների նկատմամբ, նույնքան էլ դաժան է, երբ խախտվում են «խաղի» կանոնները։ Նա կանոնազանցներին պատժում էր այնպես, որ զորանոցի

սովորական պատիժները «օրինազանցի համար» դրախտ կարող էին թվալ դժոխքի համեմատությամբ։ Եվ դա ոչ այն պատճառով, որ Մահմուդը դաժան է. այդպես են վարվում նաև մյուս վաշտերի ավագները դողության ժամանակ բռնված այն զինվորների հետ, որոնք միամտություն են ունեցել արդարանալ, թե «վաշտի ավագի ցուցումով են այդ բանն արել»։

Բայց «խաղի» կանոնների խախտում է հրացան գողանալը, կանոններ, որոնք, որպես չգրված օրենք, պատմվածքի բոլոր իրադարձություններում փոխարինում են բանակի դրված օրենքներին։ Առանց բացառության այդ կանոնների խախտումը պատժվում է կամ դրանց դիմաց հատուցումը ևս տրվում է չգրված օրենքներով։

Սիրուհու պատճառով Մահմուդի հետ ընդհարված երրորդ վաշտի ավագը կատարել է իր խոստումը. «էնենց հերդ անիծեմ, որ ասելիք դառնա»։

Բայց ինչպես միշտ, այս դեպքում էլ, «սլաքավարներն են» մեղավոր ճանաչվում։

Վրեժի նպատակով նրա վաշտից դողացված հրացանի համար Մահմուդը վճարում է ոչ թե օրենքով սպասվող ատիճանազրկումով, այլ կռվածաղիկ դարձած հոմանուհուց ձեռք քաշելու «ազնիվ խոսքով»։ Նրա փոխարեն հատուցում է շարքային զինվոր Ահմադը. «Բարեսիրտ» Մահմուդը նրա «դատ ու մահապատժի» գործը կարճում է մի քանի ապտակով ու քացիով և մի գլորիկ գումարով։ Անսպասելի «էժան» պրծնելու ուրախությունից շշմած զինվորը դրան ավելացնում է հավելանվերը՝ երկու սիրամարգ։

«Իր տղերքին» անօրինական հավելումով օրապահիկ տալու հանցանքի մեջ բռնված Մահմուդը հանցապարտությունից այս անգամ խուսափում է «թաշկինակի մեջ կապած մի բանի հետ» իր կնոջ պարծանքի և թաղի նպարավաճառի, կանաչավաճառի և, անգամ, ոստիկանության ավագի կանանց նախանձի առարկա դարձած սիրամարգերը վաշտի հրամանատարի տուն տանելով։ Նրա փոխարեն պատժում են չարաշահումը հայտնագործած սպային. «խառնակչության և գնդում թռուցիկներ տարածելու» մեղադրանքով նրան «մի հեռու ընկած» վայր փոխադրեցին[4]։

Ասես ի միջի այլոց, պատմողը նկատում է. «ճիշտ է, սպայի փոխադրումով թռուցիկների լույս ընծայումը չդադարեց, այնուամենայնիվ, զորանոցը հուզող բանադրանքները դադարեցին, ու

Մահմուդն ու հրամանատարները առանց գլխացավանքի կարող էին իրենց գործը շարունակել»[5]։

Եվ այսպես զորամիավորման չգրված օրենքների խախտումները հետևում են միմյանց, որոնց համար մեղավորները հատուցում են ըստ խախտման ծանրության տրվող նվերներով, իսկ սիրամարգերը՝ արժանանում նոր, ավելի բարձրաստիճան տերերի։

Գումարտակի նոր հրամանատարի և վաշտերի հրամանատարների միջև կոնֆլիկտ է ծագել։ Նա ըստ կարգի նորամուծություններ է արել. մեկ վաշտից մյուսն է փոխագրել վաշտերի ավագներին ու դրանց հրամանատարներին զրկել եկամտի աղբյուրից, Պատմողը հանդարտ նկատում է. «...Որոշ ժամանակ էր պետք, որ ջրաղացները ջրից ընկնեին, հրամանատարը՝ հրամանատարական անձնակազմի, իսկ վերջինս էլ հրամանատարի հետ սազեին»[6]։ Նորից գործադրվում է վերադասի հետ «սուզվելու» քանիցս իրեն արդարացրած հնարը։ «Տաս-տասնհինգ օր հետո կամաց-կամաց մեր վաշտերի հրամանատարները նոր հրամանատարի հետ գլուխ-գլխի եկան ու իրենց գործի եկամուտի աղբյուրները նրան պարզաբանեցին, հաջողացրին իրենց վաշտի ավագներին ետ ստանալ, որ իրենց գործով զբաղվեն»։ Եթե «ջրերի՝ ջրաղացից ընկնելու» համար «կողի» ընկած վաշտի հրամանատարի բարեհաճությունը «մի քանի նվերների հետ միասին» երկու սիրամարգի զոհաբերությամբ է ձեռք բերվում, ապա վաշտերի զինվորները դրա համար վճարում են մեկշաբաթյա կալանքով, իսկ նրանցից ամենաձախողակները՝ ծեծից հիվանդանոց ընկնելու գնով։

«Բարեկամության ջնաջ են կոտրել», միմյանց սրտի գաղտնիքների հավատարմատար են դարձել առաջին և երկրորդ գնդերի հրամանատարները։ Բայց դա չի խանգարում առաջինին, դիվիզիայի հրամանատարի ցուցումով, գաղտնի լրտեսների հսկողության տակ պահել սրտակից ընկերոջ ամեն քայլը, տան անցուդարձը։

Ու երբ բացվում է գաղտնիքը, «երկու սիրամարգերը, մի այլ գեղեցիկ նվերի հետ», գիշերով ուղարկվում են դիվիզիայի հրամանատարի տուն՝ հավաստելու «բրիգադային գեներալի համար իր գլուխը և կյանքը զոհելու»՝ առաջին գնդի հրամանատարի պատրաստակամությունը։ Եվ բրիգադային գեներալը գտնում է նրանց

երրորդ անձի միջոցով հաշտեցնելու իր ջանքերի հիմնավորումը. «...այդպիսի թշնամանքը, հակամարտությունն ու գժտությունը զորքում, մասնավորապես բարձրաստիճան սպաների միջև, հակասում են երկրի բարձրագույն շահերին»։ «Երկրի բարձրագույն շահերին» հակասող այդ գժտության համար դաժան ծեծ են ստանում հանուն այդ իսկ շահերի լրտեսման ուղարկված առաջին գնդի գնդապետի անձնական հանձնարարությունը կատարելիս բռնված զինվորները։

Գործողության մեջ բարձրաստիճան սպաների «ներքաշմանը» զուգահեռ աճում է պատմվածքի երգիծական հնչեղությունը, և հեգնական պարադոքսի հնարանքը իր տեղը զիջում է երգիծանքի բարձրագույն հնարին՝ գրության կոմիզմին, դրոտեսկին։

«Երկրի բարձրագույն շահերով» ապրող բրիգադային գեներալը իր աստիճանակարգի մյուս սպաների նման հարկադրված է պատվի առնել ամերիկյան զինվորական առաքելության պաշտոնյա, սերժանտ Ջոն Սմիթին, որի ձեռքի մի շարժումից է կախված զինվորական ուսումնառության համար Ամերիկա ուղարկվելու ներկայացված սպաների բախտը։ Ջոն Սմիթի կարմիր մատիտը սահել է բրիգադային գեներալի զարմիկի ազգանվան վրայով։ Բրիգադային գեներալին չեն կարող օգնել ո՛չ ռազմական շտաբի պետը և ո՛չ էլ ինքը՝ պաշտպանության նախարարը։ Նրանք «նրբանկատությունից հեռու» են դիտում ամերիկյան բանակի՝ ասել է թե «հյուրընկալող տան» ներկայացուցչին ցուցում տալ այս կամ այն հյուրին ընդունելու վերաբերյալ։ Պաշտպանության նախարարը խորհուրդ է տալիս նրան՝ առանձին խոսել «դաստիարակված ու բարեկիրթ» Ջոն Սմիթի հետ։ Բայց այսպիսի վիրավորանք կուլ տալը շատ է դժվար մի բրիգադային գեներալի համար. «Ամերիկացի մի սերժանտ այնքան ամբարտավանն, որ նրա կամքի առաջ տեղի տա պաշտպանության նախարա՞րը»։ Եվ բրիգադային գեներալի հոգում «կատաղած առյուծի նման» զարթնում է վիրավորված «ազգային հպարտությունը», ընդվզում բանակի բարձրաստիճան սպայի պատվախնդրությունը։ Նա որոշում է հանուն այդ զգացմունքների, որպես հայրենասեր մի սպա, լուծել Ջոն Սմիթի հարցը։

Պատմվածքի ավարտին Աֆրաշթեն մի կողմ է դնում նկարագրվող իրադարձությունները որպես սովորական դեպքեր ըն-

կալող ու ներկայացնող պատմողի դիմակը և դիմում է գրոտեսկի։ Բրիգադային գեներալը Ջոն Սմիթի բերանին ուղղած իր պարաբելումի կրակոցով... վառում է նրա սիգարը՝ արժանանալով «բաբեկիրթ» սերժանտի «թենք յու վերի մաչին»։ Թող որ անհատույց մնա բրիգադային գեներալի ազգային հպարտությանը, իրանական բանակի բարձրաստիճան սպայի պատվին հասցված վիրավորանքը։ Նրա զարմիկը կգնա Ամերիկա սովորելու, իսկ սիրամարգերը կհանգրվանեն Ջոն Սմիթի՝ «պրեմիեր մինիստրի կացարան» հիշեցնող ապարանքում։

Գրոտեսկային այսպիսի ավարտով հեղինակը գեղարվեստական ավարտունություն էր հասցնում նյութի կենսական ճշմարտությունը։

Պատահական չէ, որ պատմողը օրինականություններ բանեցնող գումարտակի նոր հրամանատարի գործունեության հետևանքների մասին նկատում է. «ժամանակ է պետք, որ ջրաղացները նորից ջրից ընկնեն»։ Ասել է թե, բանակն ապրում և գործում է իր ներքին չգրված օրենքներով, օրինականի և անօրինականի շրջված ընկալումներով, և այդ հարաբերությունները կարգավորող լծակը կաշառքն է։

Գրոտեսկային ավարտով բանակի բարքերի «սովորականի» անհեթեթության բացահայտումը սոցիալականից վերաճում է քաղաքական երգիծանքի, ստանում ընդհանրացնող հնչեղություն։

Պարապ կրակոցի արժեք ունեն հայրենասիրության, ազգային արժանապատվության, պետության շահերի մասին խոսակցությունները, երբ դրանք իջեցվել են փոխանակային արժեքների աստիճանի։

Երկրի կարգի և անկախության պահապանների սոցիալ-բարոյական և քաղաքական այս նկարագիրն էր, որ թեմայի վրա դըրված արգելքով թաքցվում էր իրանական հասարակայնությունից։

Երգիծանքի վարպետ Աֆրաշթեի պատմվածքում կյանքի այդ դրվագը գեղարվեստական ճշմարտության ուժով ստացել է ճանաչողական արժեք։

LAURA SHEKHOIAN

AN UNKNOWN PAGE OF MODERN IRANIAN PROSE

(The Short Story by Mohammed Ali Afrashte „The Wandering Peacocks“)

This unpublished story of Afrashte was written at emigration in Bulgary. The autographical text was found in the archvie of A. Avanessian. Institute of Oriental Studies, Armenian Academy of Sciences.

The subject of this story is army: two peacocks „presented“ by a soldier to his commander, later found in the palace of John Smith, the American counsellor of Iranian army.

By means of satire (comicality of situation, exaggeration, grotesque) the writer is trying to reveal the negative customs existing in Iranian army--bribery, arbitrariness, the dictate of American military counsellors.

The author uses the rich expressive means of colloquial Persian.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Ժողովածուն լույս է տեսել Հասան Շերիֆի ծածկանունով.* Шерифи *Хасан,* Носът на шаха. София, 1963.

2 Մոհամմադ *Ալի Աֆրաշթե, Թավուսհայն սայեր, էջ 16։*

3 *Նույն տեղում, էջ 3։*

4 *Նույն տեղում, էջ 8։*

5 *Նույն տեղում, էջ 14։*

6 *Նույն տեղում, էջ 8։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

Նիկոլայ Հովհաննիսյան. *Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը* 9
Հռիփսիմե Կորխմազյան. *Տարածքային խնդիրները խորհրդա-թուրքական հարաբերություններում՝ երեք դաշնակցային տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների՝ Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսում* 20
Արտակ Հովհաննիսյան. *Սիրիայի ռազմական միջամտությունը լիբանանյան հակամարտությանը 1976 թ.* 34
Վահրամ Պետրոսյան. *Մոսուլի խնդիրը Լոզանի կոնֆերանսում* . . . 41
Կարինե Սամվելյան. *Իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա պատերազմի առաջին տարիներին (1980—1984)* 66
Գագիկ Շալջյան. *Մերձավոր և Միջին արևելքի տարածաշրջանային քաղաքականության համակարգում իրանա-թուրքական հարաբերությունների և դրանք ձևավորող հիմնական քաղաքական գործոնների հարցի շուրջ (1990—1993 թթ.)* 74

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

Ալեքսանդր Խաչատրյան. *Հայ իշխան «Բագրատ իբն Բագրատի» եզակի կնիքը* 90
Նաիրա Խնկոյան. *«Փրկիչ սպաների» ընդդիմադիր շարժումը և երիտթուրքերի հեռացումը իշխանությունից* 111
Կարեն Միրզոյան. *Թուրքիայում ազգայնական շարժման ծագման հարցի շուրջը 1918—1919 թթ.* 125
Անուշ Հովհաննիսյան. *Թուրք պատմաբանը Օսմանյան կայսրությունում 1876—1878 թթ. քաղաքական իրադարձությունների մասին* . 143
Ռուբեն Սահակյան. *Հայկական ցեղասպանության պատմագրության մեթոդաբանական հարցերը* 151
Արշակ Փոլադյան. *Մարվանյան դինաստիան և Մեծ սելջուկները* . . 166
Վարդան Ոսկանյան. *Գորան ցեղամիավորումը* 186

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գառնիկ Ասատրյան. ոց-*ածանցը քուրմանջիում* 193
Լորետա Դանեղյան. *Հայատառ բանաստեղծությունների ժողովածու Եղիա Մուշեղյանի դիվանում* 197

Մաքսիմ Խամոյան. Պարեմիոլոգիզմի լեզվաբանական նշանակումը և կազմության կաղապարը (ըստ քրդերեն լեզվի նյութերի) . . . 210
Սամվել Կարաբեկյան. Գրական արաբերեն լեզվում թանուինով վերջավորությունների ձևաբանական վերլուծություն 223
Ներսես Մկրտչյան. Հայերենից թուրքերենին անցած նորահայտ փոխառությունները 230
Արմանուշ Կոզմոյան. Նմանակության գեղագիտական ֆենոմենը հայ և պարսից միջնադարյան պոեզիայում 244
Լաուրա Շեխոյան. Իրանի ժամանակակից գրականության անհայտ մի էջ (Մոհամադ Ալի Աֆրաշթեի «Թափառիկ սիրամարգերը» պատմվածքը) 256

СОДЕРЖАНИЕ

Предисловие 5

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ БЛИЖНЕВОСТОЧНОГО РЕГИОНА

Николай Оганесян. Ближневосточный регион и проблема национальной безопасности Армении 9
Рипсиме Корхмазян. Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав—СССР, США и Великобритании 20
Артак Оганесян. Военное вмешательство Сирии в ливанском противоборстве в 1976 г. 34
Ваграм Петросян. Вопрос Мосула на Лозаннской конференции . 41
Карине Самвелян. Влияние ирано-иракской войны на социально-экономическое состояние Ирака в первые годы войны (1980—1984 гг.) 66
Гагик Шаладжян. К вопросу о ирано-турецких отношении в системе ближневосточной политики и об основных политических факторах, влияющих на их формирование (1990—1993 гг.) . . 74

ПРОБЛЕМЫ ИСТОРИИ И ИСТОРИОГРАФИИ БЛИЖНЕВОСТОЧНЫХ СТРАН

Александр Хачатрян. Уникальная печать армянского князя «Бакрата ибн Бакрата». 90
Наира Хнкоян. Оппозиционное движение «Офицеров-спасителей» и отстранение младотурок от власти 111
Карен Мирзоян. К вопросу о зарождении националистического движения в Турции в 1918—1919 гг. 125
Ануш Оганесян. Турецкий историк о политических событиях 1876—1878 гг. в Османской империи 143
Рубен Саакян. Методологические вопросы историографии геноцида армян. 151
Аршак Поладян. Династия марванидов и Великие сельджуки . 166
Вардан Восканян. Родоплеменное объединение Горан . . . 186

ВОСТОЧНАЯ ФИЛОЛОГИЯ

Гарник Асатрян. Суффикс -ng в курманджи 193
Лорета Данегян. Сборник армянописных стихотворений в диване Егия Мушегяна 197

Максим Хамоян. Лингвистическое назначение и модель образования паремиологизма. (На материале курдского языка) . . 210
Самвел Карабекян. Морфонологический анализ сегментов с танвином в арабском литературном языке 223
Нерсес Мкртчян. Новоявленные армянские заимствования в турецком языке 230
Армануш Козмоян. Эстетический феномен стилизации в армянской и персидской средневековой лирике (XVI в.) . . . 241
Лаура Шехоян. Неизвестная страница иранской современной литературы (Рассказ «Бродячие павлины» Мухамада Али Афраште) . . . . 25[illegible]

CONTENTS

Preface 5

MODERN PROBLEMS OF THE MIDDLE EASTERN REGION

Nikolay Hovhannisian. The Middle Eastern Region and the Problem of the National Security of Armenia 9

Hripsime Korkhmazian. The Territorial Problems of Soviet-Turkish Relations in the Berlin (Potsdam) Conference of the Three Leaders—USSR, USA and Great Britain 20

Artak Hovhsnnisian. The Military Intervention of Syria in the Lebanese Conflict in 1976 34

Vahram Petrosian. The Mosul Question at the Lousanne Conference 41

Karine Samvelian. The Impact of the Iran—Iraqi War on the Socio-economic Life of Iraq during the First Years of the War (1980—1984) 66

Gagik Shaljian. To the Queston of Iranian—Turkish Relations and their Pecilarities in the Middle Eastern Region (1990—1993) 74

PROBLEMS OF MIDDLE EASTERN HISTORY AND HISTORIOGHAPHY

Alexander Khachatrian. A Unique Seal of the Armenian Prince „Baqrat Ibn Baqrat" 90

Naira Khnkoian. The Opposition Movement of the Group of „Saviour Officers" and the Ousting of the Young Turks from Power 111

Karen Mirzoian. To the Question of the Origin of the Nationalistic Movement in Turkey in 1918—1919 125

Anush Hovhannisian, The Turkish Historian on the Political Events of 1876—1878 in the Ottoman Empire 143

Rouben Sahakian. Methodological Issues of the Armenian Genocide Historiography 151

Arshak Poladian. Tha Marwanid Dynasty and the Great Seldjuks 166

Vardan Voskanian. The G o r a n Tribal Confederation 188

ORIENTAL PHILOLOGY

Garnik Asatrian. The Suffix *-ng* in Kurmanji 193

Loretta Daneghian. Collection of Poems Written in Armenian Letters in the Archives of Yeghia Mousheghian 197

Maxim Khamoian. The Linguistic Appointment and the Model of Forming Paremeologism (on the material of Kurdish) 210
Samvel Karabekian. The Analysis of the „tanvin"-ending of Literary Arabic 223
Nerses Mkrtchian. Armenism in the Turkish Dialects 230
Armanush Kezmoian. The Phenomenon of Stylization in the Medieval Armenian and Persian Literature 244
Laura Shekhoian. An Unknown Page of Modern Iranian Prose (The Short Story by Mohammed Ali Afrashte „The Wandering Peacocks") 256

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XVI

Հրատ. խմբագիրներ Լ. Ս. Սարաֆյան, Ս. Մ. Դանիելյան
Կազմը Կ. Կ. Ղաֆադարյանի
Տեխ. խմբագիր Լ. Ա. Ազիզբեկյան

Հանձնված է շարվածքի 11. 07. 1996 թ.։ Ստորագրված է տպագրության 20. 08. 1996 թ.։ Չափը 60×841/16։ Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Բարձր տպագրություն։ Պայմ. 15,24 մամ., տպագր. 17,0 մամուլ։ Հրատ.-հաշվարկ. 15,84 մամուլ։ Տպաքանակ 500։ Հրատ. № 8028։ Պատվեր № 23։
Գինը՝ պայմանագրային։

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։